

Ի Ա Գ Ի Ն

ԺԱ. ՏԱՐԻ 1972 ԱՊՐԻԼ  
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 4

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹ Ի Ի Ն

Ա. ՀԱՅԿԱԶ	. . . . .	Ապահարզանէն ետք, մարդիկ երբեմն կը կարօտնան իրենց կիները
ԱՐՄԱՆՏ	. . . . .	Գարուն
Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ	. . . . .	Կը վարժուիս, տիկին Գոլումպոս
Մ. ԹԱԻՐԻԶԵԱՆ	. . . . .	Նրէ՞կ էր միքէ, քէ դար մը առաջ
Յ. ԶՈՐԵՑԻ	. . . . .	Հայկական ուղեւորավիւլ
Խ. ԱՍՈՅԵԱՆ	. . . . .	Զուգահեռի առանցքէն (Ա.)
»	» . . . . .	Զուգահեռի առանցքէն (Բ.)
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	. . . . .	Աստղերուն ձայնը
»	» . . . . .	Ճերմակ պատուհան
»	» . . . . .	Ներաշխարհ
»	» . . . . .	Փետուրէ սգին
Կ. ՍԱՍՈՒՆԻ	. . . . .	Փառքի ետեւէ
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	. . . . .	Ազգայինը, միջազգայինը եւ եւ ազգազայինը երէկ եւ այսօր
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	. . . . .	Մուտքը գեղարուեստական արձակում
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	. . . . .	Փապլօ Ներուտա
Վ. ԹԵՔԵԱՆ	. . . . .	Պուտտան եւ պուտտայականութիւնը
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	. . . . .	Խ. Ասոյեանի «Կէտեր»ը

# Բազմ

## ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԱ. ՅԱՐԻ, ԹԻՒ 4

Ա. ԳՐԻՂ, 1972

ՊԵՐՈՒԹ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

### ԱՊԱՀԱՐՁԱՆԵՆ ԵՏՔ ՄԱՐԴԻԿ

### ԵՐԲԵՄՆ ԿԸ ԿԱՐՕՏՆԱՆ ԻՐԵՆՅ ԿԻՆԵՐԸ

Կար ժամանակ մը, երբ Հալիվուտի մէջ ազուր, իմաստալից ու հետաքրքրական ժապաւէններ կը պատրաստէին. ես ալ, երբեմն, կ'երթայի դանոնք դիտելով քանի մը ժամ հանդիւի կամ, ինչու չէ, զուարճանալ: Հիմա նման բան չկայ: Չկան հին տաղանդաւոր դերասանները. ընտիր պատկերներ չինող արուեստադէտներ չեն մնացած... Լաւ պատրաստուած պատկերի հանդիպելը հրաշքի նման բան մըն է. ճաշակներն ու բարոյական ըմբռումներն ալ շատ են փոխուած: Հիմա կիրք ու միս կայ պատկերներու մեծամասնութեան մէջ:

Երբեմն ամէն ինչէ ձանձրացողներուն պարագան կը հասկնամ, նոյնիսկ կը հանդուրժեմ, բայց յանուն դեղարուեստի ձանձրանալն ու տաղտկացնելը ո՛չ կը հասկնամ, ոչ ալ կը ներեմ: Այդ է պատճառը, որ ամիսներով ուղք շարժապատկերի սրահէ ներս չեմ դրած. բայց մեր տան միւս անդամները, մանաւանդ ջահիլները, յաճախ կ'երթան: Երբ տուն դառնան, հետաքրքրուած ձեւացնելով, դանոնք կը հարցաքննեն: Եթէ աղջիկս հաւանած է, եթէ ըսէ, թէ սփափա, շատ լաւ էր, վնա՛ դուն ալ ու անպատճառ տես, կը նշանակէ, թէ երթալու չեմ...

Տարբեր, շատ տարբեր են մեր ճաշակները:  
digitised by A.R.A.R.@

Բայց չեմ յուսահատած. վստահ եմ, որ ես պիտի չըլլամ իրեն պէս, բայց որ մը ան պիտի խորհի ու դատէ ինծի պէս:

Մետալին միւս կողմը տիկինն է: Վստահելի: Ճիշդ է, թէ քաղմաթիւ տարիներէ ի վեր միասին ապրելով հանդերձ, ես չեմ կրցած հասկնալ զինքը (ո՞վ կրցեր է որ... մէկ կեանքի տեւողութիւնը չի բաւեր այդ դժուարին դասընթացքին համար...) բայց ան գիտաւ կը ճանչնայ ու տեղեակ է ճաշակիս. այնպէս որ՝ երբ շարժանկարէ մը իր վերադարձին հարցնելու ըլլամ, թէ «ինչպէ՞ս էր» ու ինք դրական պատասխան տայ, կը հաւատամ խօսքին: Երբեմն ալ, իմ բերան կարենալ բանալէս առաջ, կ'ըսէ.

— Վաղը միւս օր, փոխուելէ առաջ, դեմ' ու անպատճառ տես. չփախցրնես, լաւ է:

Ես ալ իր խօսքը մտիկ ընելով, ժամանակ կը ստեղծեմ ու պատկերին փոխուելէն առաջ կ'երթամ, զայն կը տեսնեմ:

Եւ յուսախար չեմ ըլլար:

Տասնըհինգ օր առաջ, իրիկուն մը, տուն եկաւ ու ըսաւ.

— Տրէյք թատրոնին մէջ լաւ ժապաւէն մը կայ: Վաղը դեմ' տես: Վերջին օրն է: Երկու պատկեր է. մէկը բանի չի դար. չարփեր անոր ժամանակ տալ, բայց միւսը լաւ է, շատ լաւ: Ժամը երկուցուկէսին որ Հոն ըլլաւ, լաւ եղածը սկիզբէն կը տեսնես, միւսին սպասելու պէտք չես ունենար, ու հայհուցելով հոգիդ չես սեպներ...

Աս իր հայհուցիլ որակածը շատ լուրջի մի առնէք. երբեմն, երբ իրեն հետ ըլլամ շարժապատկերի սրահին մէջ, ու տեսածս չհաւանիմ, օրտնդիմ, իսողը կիսատ ձգած գուրս ելլելէ առաջ, «իշտ ձագեր՝ ո՞ր, կ'ըսեմ, ճառ տխմարաբանութիւնները մեզի հրամցնելու համար դրամ ու ժամանակ վատնեցիք»...

Հաւատացէք, եղանն ա՛յդ է. ան դեռ պատկերաւոր հայհուցիլն չէ՛ լսած:

— Երեթը Ի՞նչ է, Ի՞նչ բանի շուրջ կը դառնայ, — Հարցուցի այդ օրը:

— Ձեմ ըսեր: Վաղը կ'երթաս կը տեսնես: Հետաքրքրական է: Տեսարանները լաւ են, դեղեցիկ, իրապէս գեղեցիկ: Վաղը կ'երթաս կը տեսնես: Դերասաններն ալ առաջնակարգ են:

— Այնչափ գովեցիր օր, — ըսի, — վաղուան սպասելով քունս պիտի չտանի...



Յաջորդ օրը, պաղ ու խոնաւ օդով լուսաբաց մը, յանձնարարուած ժամուն թատրոնի դրան առջեւ էի: Կիշէին առջեւ պոչ բանոցներու երկար շարք մը կար: Պատկերի լաւութեան յաւելեալ փաստ մը, խորհեցայ ինքնիրենս, եւ ուրախացայ, Մտայ Հերթի:

Առջեւ, մինչեւ իրենց բարակուկ մէջքերը հասնող դեղին մագերով, դաշտի շուշան, երկու շատ սիրուն աղջնակներ կային. ետիս, աչքիս պոչով տեսայ, որ իր ութ եւ տաս տարեկան թուող զաւակներով կին մը Հերթի մըսաւ: Անհամբեր ըլլալ կը թուէր, որովհետեւ նկատեցի, որ բացաւ իր մեծկակ պայտասակը եւ իր ու զաւակներուն տոմսակին դինը մատներուն վրայ հաշուելով, պատրաստեց ու առաւ ասին մէջ: Դրաւ պայտասակը թելին տակ, ու դառնալով իր լանդերուն, պատուիրեց, որ կոնկուրին.

— Լուա, Լիլի, կոնկուեցէ՛ք, պաղ շառնէք. հիւանդի նայելու սիրտ չու-  
նիմ...

Քիչ վերջ ըսի, թէ խոնաւ ու պաղ օր մըն էր: Իրաւ է, թէ ես ալ կը  
մսէի, բայց մեծարտութիւնս բռնեց եւ երբ հերթը ինծի հասաւ, կարգս զիջե-  
ցայ իրենց:

— Առաջ անցէք, խնդրեմ, կը տեսնեմ, որ երեխաները կը մտին. յու-  
սամ ներքը տաք է...

— Շնորհակալութիւն:  
Իրենց մօր օրինակին հետեւելով՝ երեխաներն ալ շնորհակալութիւն  
յայտնեցին, ժպտեցան քաղցրօրէն ու դացին ներս:

Բարեգործութիւն մը ըրած ըլլալու գոհունակութեամբ սիրտս լեց-  
ած՝ առի իմ տոմսս ու ես ալ մտայ ներս: Սրահի յետնամասին մէջ, աչքե-  
րուս մութին վարժուելուն սպասած պահուս, նկատեցի, որ անոնք աջ դար-  
ձան. ես ընտրեցի կեդրոնի միջանցքը: Էջրանէն ջսան աթոռ ետ հաշուելով  
— Հետատես եմ — եղիւրջի առաջին աթոռը, որ պարապ էր, գրաւեցի:

Սիր մինչեւ ընդարձակ սրահի կամարները լեցնող մեծադմուկ նուազը  
դադրեցաւ, դիմացի ընդարձակ, որմէ որմ հասնող պատտառը լեցունեցաւ դաշ-  
տային տեսարանով մը, որուն նմանը, բազմաթիւ թափառումներու ընթաց-  
քին, չեմ յիշեր տեսած ըլլալ:

— Միայն այս տեսարանը վայելելու համար կ'արժէր որ դայի, — ան-  
ցաւ մտքէս:

Քիչ ետք, Հորիզոնին վրայ ամպեր երեւցան, թուխ, ջրոտ ամպեր,  
որոնք, դաւադրական ժողովէ մը ետք, եկան դրուեցին երկինքը ու լճին վրայ  
անձրեւ տեղալ սկսաւ:

— Աստուած իմ, Աստուած իմ, Աստուած իմ... Աշխարհի վրայ կա՞յ  
աւելի գեղեցիկ տեսարան, քան լճի ջուրերուն վրայ երկնքէն տեղացող անձրե-  
ւը... Իրաւ է, թէ արշալոյսներն ալ գեղեցիկ են, վերջալոյսներն ալ, ցորե-  
նի արտերն ալ, դարունն ալ, ձմրան ու աշնան խաղաղ դաշտանկարներն ալ,  
բայց ամբան օր մը լճի խաղաղ ջուրերուն վրայ ինկող անձրեւի զիրուկ հա-  
տիկներուն նման գեղեցիկ տեսարան չկա՞յ, ես չեմ տեսած, չեմ ճանչցած...

Յանկարծ զգացի, որ մէկը, վրաս ծոռած, կը շնչէր ծոծրակէս վտար ու  
դէմքս կը քննէր:

— Անցնի՛ր կ'ուզէք, — Հարցուցի վրաս ծոռդին ու ոտքերս քաշեցի ետ,  
ամփոփուեցայ:

— Ո՛չ, անցնի՛ր չեմ ուզեր, — ըսաւ կանացի մայն մը, չեմ դիտեր ինչ-  
պէ՞ս ըսեմ... պարոն, խնդրեմ, ետ առւր մեր դրամը...

— Ի՞նչ դրամ, — Հարցուցի անակնկալէ եկած ու արտնդ, որ ընդհա-  
տեց վայելքս:

- Այն դրամը, որ շարքին մէջ հետս խօսած պահուէք առիք:
- Ե՛ս, առի՛, ձե՛ր դրամը...
- Այո՛, պարոն, խնդրեմ, տո՛ւր ետ:
- Ե՛ս, տա՛մ, ձե՛ր դրամը, ե՛տ:
- Այո՛, խնդրեմ, տո՛ւր մեր դրամը ետ...
- Վստահ ե՞ս, թէ շխտակ անձի հետ է, որ կը խօսիս...
- Այո՛, վստահ եմ, դուք չէի՞ք դրան առջեւի շարքին մէջ ձեր հեր-  
թը մեզի՛ ինծի ու գաւակներուս զիջողը:
- Այո՛, ես էի, ես էի այդ սխալը գործողը:

— Ուրեմն...  
 — Ուրեմն ի՞նչ:  
 — Ուրեմն դուք է, որ առիք դրամ... Շարքին մէջ եղած պահուստ քովս 23 տուար ունէի, երեքը տուի տոմսակազմաւորին՝ մնաց քսան տուար, բայց այդ քսան տուարը քովս չէ հիմա:  
 — Եւ ես ինչո՞վ մեղաւոր եմ այդ բանին համար:  
 — Պարոն, խնդրե՛մ, զաւակներուս հետ կը պաղատի՛նք, ե՛տ տուր մեր դրամը... Մենք խեղճ, աղքատ մարդեր ենք, յաճախ չենք կրնար թաւառնի կամ շարժապատկեր դալ. բայց ըսին մեզի, թէ լաւ ու մաքուր ժապաւէն մըն է այս օրուանը ու եկանք զաւակներուս սիրոյն. մա՛նաւանդ՝ որ մեծիս ծննդեան տարեդարձն է, եւ փափաքեցայ երջանկացնել զինքը, յուսախար չընե՛լ... Մեր կաթէն ու հացէն կտրելով՝ եկանք... Խնդրե՛մ, խնդրե՛մ, կը պաղատի՛մ, պարոն, ետ տուր մեր դրամը:  
 Պատասխանելու պատեհութիւն դեռ չէի ունեցած, երբ ձեռքիս վրայ արցունքի տաք կաթիլ մը ինկաւ:  
 Վերցուցի գլուխս ու նայեցայ իրենց:  
 Երեքին ալ աչքերուն մէջ լճացած արցունքը կը փալիւլէր էջրանէն ցոլացող լոյսէն:  
 — Փլի՛գ, փլի՛գ, մըքը՛ր...  
 — Տիկին, — ըսի տակնուվրայ եղած, — ես ո՛չ ձեռք դրամը առի, ոչ ալ՝ առնելու հնարաւորութիւն ունէի, եթէ առնել փափաքէի... Ձեր դրամ ունենալէն իսկ լուր չունիմ... Ինչպէ՞ս կրնայի լուր ունենալ...  
 — Ձեր քով պայուսակս բացի տոմսերու փոխարէ՛քը հանելու համար...  
 — Այո՛, բացիք, բայց չէ՞ որ դուք երեքով վեց աչք ունիք... Իրաւ է, թէ հերթս տուի քեզի ու զաւակներուդ, բայց այդ արարքիս մէջ բնաւ յետին միտք չկար. լսեցի, որ Վիսնգուիլը կը պատուիրէք փոքրերուն, որ չմտին... Ու ահա բարիք կամենալուս համար կը վարձատրուիմ:  
 — Բայց ձեզմէ զատ ոչ ոք, բացարձակապէս ոչ ո՛ք մօտեցաւ ինծի այդ պահէն ի վեր՝ ու դրամս անհետացաւ... Պարոն, ետ տուր դրամս, ես կը խոստանամ խնդիր չյարուցանել, մէկու մը բան չըսել, չրողքել, խնդրը դադարի կը մնայ մեր մէջ, ու մարդ բանէ մը լուր չ'ունենա՛ր:  
 — Ըսել կ'ուզէք, թէ...  
 — Կ'երդնում, կ'երդնում ի՛նչ սրբութեան վրայ, որ կ'ուզէք, որ մարդու բան չեմ ըսեր, գաղտնիքը կը մնայ մեր մէջ ու կը մոռցուի...  
 — Շատ մեծ սիրտ էք, տիկին, շա՛տ մեծ սիրտ. բայց կացինը զարկիք քարին... Ուրեմն դեռ կը հաւատաք, թէ նշանաւոր քսակահա՛տ մըն եմ: Լա՛ւ: Ձեր գիտնայիք բանն է... Հաւատացէք, որ կը մեղքնամ ձեզի ու ձեր զաւակներուն, որովհետեւ կ'ըսէք, թէ ձեր կորսնցուցած դրամը մէկ շարժաթեան ձեռք արձուտի գինն էր: Կը վստահեցնեմ ձեզ, որ եթէ քովս այդքան գումար մը ունենայի, առանց այլեւայլի կու տայի ձեզի, բայց չունիմ: Եւ որպէսզի համոզուիք այդ բանին, կ'առաջարկեմ, նոյնիսկ կը պահանջեմ, որ երթանք այս հաստատութեան վերահսկիչին, ու պահանջենք, որ մանրամասն խուզարկէ զիս: Ու եթէ գտնէ իմս եղող ու վրաս գտնուող մէկուկէս տուարէն աւելի դրամ, կը խոստանամ, յաւելնալ ամէն մէկ տուարի համար, ձեզի հարիւր տուար տալ: Ի՞նչ կ'ըսէք, կ'ընդունի՞ք այս առաջարկս:  
 Ու տեսնելով, որ կը վարանէր, ամուր մը բռնեցի իր նախարազուկէն ու ըսի.

— Եկէ՛ք, հաւանիք կամ ոչ, պիտի երթանք անոր կամ ուրիշ վկայի մը ներկայութեան. կրնանք նոյնիսկ փողոց ելլել ու ոստիկան մը գտնել:

Մինչ այդ, արդէն սրահի վերահսկիչը, որ վերջապէս լսած էր մեր աղմուկը, աճապարանքով հասաւ մեր մօտ եւ ուղեց զիտնալ, թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ:

— Միշտ հիմա ո՛ւր էիր, — ըսի փոխանակ իր հարցումին պատասխանելու:

— Էրիկ-Կնիկ ուրիշ կտուելու տեղ չգտա՞ք...

— Ի՞նչ էրիկ-Կնիկ, այ մարդ, Աստուած չընէ, որ ես այս կնոջ էրիկն ըլլամ... (Ըսի ու անմիջապէս զղջացի կոպտութեանս համար) Ես ու այս տիկինը անծանօթներ ենք, իրար չենք ճանչնար: Ան դիւ կը մեղադրէ, թէ գողցած եմ իր քսան տոլարը:

— Ես՞...

— Ես՞, — ըսի ես՝ դարմացողի իր ճեան կրկնելով:

— Խնդիրը բարդացա՛ւ. կա՛մ լռեցէ՛ք, կամ բոլորդ ալ եկէ՛ք ինծի հետ:

— Բոլորս ալ կու գանք, պիտի գանք, — ըսի՝ կնոջ աչքերուն մէջ նայելով:

Ճամբան երկու աղջիկները, չես գիտեր ինչ խորհելով, հեկեկալ սկսան: Մեղքայ:

Սրահէն դուրս ելլելով, դուրսի աջ թեւին վրայ գտնուող դուռնէ մը ներս առաջնորդուեցանք: Գրասենեակի մահականիէ շքեղ ու ծանր սեղանին ետին, հաստ սիկարը բերանը, ծուխի կապոյտ ամպի մը մէջ կորած, նստած էր յոգնած կոպերով գէր մարդ մը:

Ու մինչ ծառայողը մեծ պերճախօտութեամբ անոր կը բացատրէր մեր վէճը, ինք, մէկիւմէկիւմ, ակնարկով կը քննէր մեզ:

— Այս մարդը շատ ալ քսակահատի չի նմանիր, — ըսաւ:

— Ծնորհակալ եմ բարի կարծիքիդ համար, — ըսի ես:

— Նմանի-նմանի՛ իմ քսան տոլարս թուցուց, — ըսաւ կինը:

— Հո՞ս, ի՞՞մ թատրոնիս մէջ:

— Ձեմ գիտեր ուր. հաւանաբար դուրսը, կիշէին առջեւ, ուր տոմս գնելու համար ստիպուած էինք հերթի կանգնել:

— Խնդրեմ, բան մը կրնամ ըսել, — հարցուցի մարդուն:

— Ըսէ՛ք, ինչո՞րեմ:

— Վրաս խուզարկեցէ՛ք, — ըսի՝ թեւերս մինչեւ երկինք բարձրացնելով:

— Խե՞նթ ես... Որ դուրս փորձանքի մէջ մնայ... Իրաւունք չունի՞մ...

— Ես իրաւունք կու տամ:

Մարդը ինծի պատասխան չտուաւ, բայց դարձաւ կնոջ կողմը ու ըսաւ.

— Տիկին, կ'ուզէ՞ք, որ ոստիկան մը կանչեմ:

Ու ձեռքը երկարեց գործիքին կողմը:

— Ձեմ գիտե՛ր, չեմ գիտե՛ք, ես բան մը չեմ գիտեր, — լացաւ կինը:

— Մի՛ լաք, բայց գիտցէ՛ք, որ առանց փառտի, պարզ ենթադրութիւնով, ծանր ամբաստանութեան տակ կը դնէք այս պարտը: Ես իրաւունք չունիմ անոր վրայ-դուրսը խուզարկելու. ետքը, ես ալ, քեզի պէս, կը մնամ փորձանքի մէջ:

— Ձէ՛ք մտար, ըսի, թէ ես այդ իրաւունքը կու տամ քեզի:

— Տիկի՛ն, Հարցուցի ձեզի, թէ կ'ուզէ՞ք, որ ոստիկան մը կանչեմ, —  
ըսաւ մարդը:

— Ձեմ գիտե՛ր, չեմ գիտե՛ր, ես չե՛մ գիտեր. գիտցածս այն է, որ լը-  
ման շարթուան մը ապրուստիս գինը այս շէնքի դրան առջեւ կորսնցուցի ու  
չեմ գիտեր, թէ ինչպէ՞ս պիտի կերակրեմ դաւակնեբս:

— Չունի՞ս մէկը, որ օգնէ քեզի:

— Չունի՛մ, ոչ ոք չունի՛մ... Ահա տասնը՛հինգ տարի է բաժնուած եմ  
ամուսինէս. ան, դատարանի որոշմամբ, շարաթը միայն քսան տոլար առաւ  
պարտաւոր է. ինք ալ Հարուստ չէ, սահմանափակ եկամուտ մը ունի:

— Քանի՞ տարի է ամուսինիդ բաժնուած ես ըսիր, — Հարցուց մարդը  
լացող կնոջ:

— Տասնը՛հինգ տարի է:

— Բայց քոյիդ դաւակը Հաղիւ ութ տարու կայ:

— Այո՛, ութ տարու է, բայց ամուսինս երբեմն ինծի կը կորստնայ ու  
քովս կու գայ... .

Այս միամիտ պատասխանին վրայ շինգալու Համար՝ ես խածի չըր-  
թունքս:

— Երբ տունը ձգեցիր Հոս դալու Համար որքա՞ն դրամ ունէիր, — Հար-  
ցուց մարդը անոր:

— Քսաներեք տոլար ու քանի մը սենթ: Երեք տոլար մեր ամուսինե-  
րուն Համար տուի եւ ծարր մըն ալ ծամոն գնեցի երեխաներուս:

— Հիմա որքա՞ն դրամ ունիս:

— Բացի քանի մը սենթ մանրուքէ, ուրիշ դրամ չունիմ:

— Թոյլ կու տա՞ս, որ պայուսակը բանամ:

— Խնդրե՛մ... .

Ու թեւին տակ սեղմած կերպընկալէ պայուսակը երկարեց անոր:

Մարդը առաւ պայուսակը ու առջեւի սեղանին վրայ խոշոր լրագրի էջ  
մը տարածելէ ետք, պարզեց անոր պարունակութիւնը:

— Ուէ՛լ, — ըսաւ, — տեսնենք մէջը ինչի՛ր կան... .

Սեղանին վրայ թափուած էին օդակի մը վրայ անցուած երեք բանա-  
լի, ծամոն, ծխախոտ, Հրահան, լուցկի, փուտրի ոսկեզոյն տուփ մը, ալքի  
ծարիր ու չրթունքի ներկ, սանար, յօնք փետտելու ունելի, երեք կրճակ,  
Հասցէատետր մը, մատիտ, ութ սենթ, թաշկինակ, դրոշմաթուղթ, անուշա-  
Հոտութեանց սրուակ մը, կօշիկի կապ, ակնոց, մաշած, դեղնած, ազտոտած  
բազմաթիւ այցաքարտեր, շիշերով գեղաՀաստ, ու նման բաներ: Մէկ խօսքով՝  
մանրազաճատի խանութ մը սկսելու չափ բան:

Մարդը իր ակնարկը պտտուց այս բոլորին վրայ ու մտքէն խնդաց  
կարծեմ: Յետոյ, վերցնելով սեղանին մէկ անկիւնը դրուած պայուսակը,  
դուրսը կոխեց անոր մէջ:

Երկար չտեսեց իր որոնումը. ազտոտ, մաշած ու ծակ աստառին մէկ ան-  
կիւնէն շորտի ծալուած կտնայ թուղթի կտոր մը գտաւ ու զայն կնոջ ապշած  
աչքերուն առջեւ բանալով՝ Հարցուց.

— Ա՞յս է կորսնցուցած դրամդ:

— Օ՛, այո՛, այո՛, այո՛ է. ներսը, մութին մէջ, երբ կը ստուգէի, թէ  
ձգած չըլլած տեղ մը, ըսի, չէ՞ որ մէկ շարթուան ապրուստս է, ինկած ըր-  
լալու է աստառին մէջ: Ինչպէ՞ս ալ խելք չըրի... . Ամբաստանեցի ահաւասիկ  
այս պարտնը, որուն ներդամտութիւնը կը խնդրեմ... . Ձեր բոլորին առջեւ



ամօթով մնացի... Այս յարգելի պարօնին առջև ամօթով մնացի... Իրաւունք ունի զիս ատելու, արհամարհելու, դատի քաշելու, տգիտօրէն նախասեցի սւ անպատուեցի զինքը... Օ՛, Աստուած իմ, որքա՛ն տխմար եմ... որքա՛ն տխմար... Կ'երդնում զաւակներուս արեւով, որ զիտումնուօր շէր. կ'ուզեմ, որ հաւատաք, կը հաւատաք, չէ՞... :

Վշտի ու ամօթի այս հեղեղը գեռ կը շարունակուէր հոսիլ, երբ ևս մատներուս ծայրին կոխելով ելայ դուրս :

Ես ստիպուած եղայ լաւ պատկերին ամբողջութիւնը տեսնելու համար մնալ, «չարժեքն» ալ տեսնելու. ու յետոյ՝ լաւին ամբողջութիւնը :



Հիմա, երբեմն փողոցին մէջ կամ նպարավաճառին խանութը գնումներ ըրած պահուս, կը հանդիպիմ այդ կնոջ ու ան կը խուսափի նայուածքէս, զիս վտեանելու կու դայ :

Եթէ երբեւիցէ քաջութիւնը ունենայ ու առանց շեկնելու նայի ալքերուս մէջ, պիտի տեսնէ, որ սխ շունիմ իրեն դէմ :

Ու եթէ առաւելադոյն քաջութիւնը ցուցադրելով հարցնելու ըլլայ, թէ զինքը ամէն տեսնելու ինչու՞ կը ժպտիմ, պատասխանս պատրաստ է :

Կարծեմ գուշակեցիք :

Կապ ունի ապահարզանէ ետք իր կինը երբեմն կարօտցող մարդուն արբքին հետ :

Բայց երբեմն կը մտածեմ, որ եթէ նման առիթ ներկայանայ, չտկէ շիտակ այդ բանն ըսելու քաջութիւնը պիտի պակսի ինծի :

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ



## Գ Ա Ր Ո Ւ Ն

Իր թուխ պտուկին բողբոջն զգաց  
մատն արելի

Ու փօրօփիլը գարթնեց՝ սարսուռն.  
Վազեց նա ծառի երակն ի վեր,  
Ու իր շրթունքը լոյսի կտուցին՝  
Համբուրուեց երկա՛ր...

Արեան նժոյգը խրիսնչաց անձայն,  
Դոփեց ու ֆանդեց նա ամէն պատուար,  
Վառեց սել բոցեր աչքերում մեր մառ.  
Ու ականջում մեր՝ վրնջաց երգը

նա լինելութեան:

Լուսեան մատը շրթիս զգացի  
Ու չասացի ես, որ սիրում եմ քեզ,  
Զի նա ով ասաց՝ չսիրեց երբեք  
Նրա պէս, որ լուռ ու անխօս սիրեց:

ԱՐՄԱՆՏ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԿԸ ՎԱՐԺՈՒԻՍ,

ՏԻՎԻՆ ԳՈՂՈՄՊՈՍ

Դ.

Հրաշալի գիշերուան յաջորդող յիտմիջօրէն էր ու մենք ամայի համբաներու վրայ ժամանակ կը սպաննէինք, սպասելով հոգեպարտք իրիկուան, երբ մեր սրտերը կը մերկանային ու սէրը կը պոսկկար լաւայի նման: Մեր անյազ սպասումի ընթացքին, սիրոյ արտոյայտութիւնները զանազան երեսօթներով կը դրսուորուէին յաճախ, սակայն մեր պիտաւոր ժամանցն ու խանգաւանութիւնները կը բիւրեղանային երգերու մէջ: Հասա՛մը ինք կ'երգէր, հասա՛մը՝ ես:

Ես կ'երգէի՝ էս աշխարհում ոչ մի բան ինձ չի յազրի:  
 Ինք կը շարունակէր՝ Վախճում եմ որ քո սէրն ինձ տապալի:

Ապա միասին կը վերջացնէինք՝ Դու

անմեղ ես, քո աչքն եմ մեղաւոր...

Թէեւ մեր հայերէն րեփերք-ուարը բուսական ճոխ էր, սակայն յաճախ օգնութեան կը հասնէին Փրանսերէն ու անգլերէն երգեր: Նոյնիսկ, շատ նեղ պարագայի մը, առաջարկեցի թրքերէն երգել:

— Անկարելի է, — սարսափեցաւ, — ո՛չ իսկ բառ մը, չեմ ուզեր, որ չըթներդ աղտոտին այդ շորնալիք մարդոց գործածած բառերով:

— Սիրելիս, — քեզի շափ ես ալ ատելութիւն ունիմ այդ շորնալիք ազգին հանդէպ, սակայն կը վստահեցնեմ քեզ, թէ ատելութիւնը չէ, որ պիտի լուծէ մեր հարցերը: Ես ալ քեզի շափ կ'ատեմ թուրքերը, երկու մեծ-հայրերս ու երկու մեծ-մայրերս զո՛հ գացած են թրքական ջարդին: Հաւ, հիմա ի՛նչ պիտի ընենք, մենք ալ երկու միլիոն թո՛ւրք

պիտի շարժենք, թուրք երեխաները պիտի խողտողենք, թուրք կիները պիտի բռնաբարենք ու խոչտանդենք: Վստահ եմ, որ մեր առնական ու խիզախ նկարագիրը թույլ պիտի չտայ այսօրինակ վայրագութիւններ Ռւրեմն, ինչո՞ւ չենք մտածեր աւելի զործնական միջոցերու մասին, միջոցներ, որոնք հակակուռին մտքով ու սրամտաբանութեամբ, եւ ոչ թէ սրտով ու զգացումներով:

— Եւ ի՞նչ իմաստուն լուծում կ'առաջարկես, — Հարցուց հեղինակը:

— Մի ծաղեր, — ըսի լուրջ, — օրինակ առնենք աւելի յառաջգէմ ու զարգացած ազգերէն: Վերջին հարիւր տարուան մէջ, զերմանացիք երեք անգամ աւերեցին Պրանսան, շարժեցին Ֆրանսացիները, սակայն նոր սերունդը այդ բոլորը յանձնած է պատմութեան, հիմա երկու երկիրները զայնակիցներ են գրեթէ ու միասնաբար կ'աշխատին ընդհուր համար այդ սեւ օրերու հետքերը: Անդ լիտ ու Պրանսա, քանի՞ պատերազմներ մղած են իրարու դէմ, Նապոլէոն աւերած է ամբողջ Եւրոպան, սակայն այսօր, գրեթէ ոչ մէկ ազգ ատելութիւն ունի Ֆրանսացիին դէմ: Ես կ'առեմ թուրքը, որովհետեւ այդպէս սորվեցուցած են մեզի, Հայր մերէն ետք՝ սորվեցուցած են մեզի ատել թըրքականը, թուրքիան: «Հայր մեր» սորված ենք, սակայն երբեք չենք անդրադարձած, որ անոր մէջ տեղ մը կը խնդրեն Աստուծո՞ւմ՝ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մե՛ք թողա՞մք մերոց պարտապանաց... մենք ներել գիտե՞նք, որո՞ւ ներած ենք մինչեւ հիմա, խեղճ Վասակը կ'ատենք տակաւին, Վասակը՝ որուն յանցանքը տակաւին վաւերական չէ, մենք ատել գիտենք միայն... մինչդեռ ես կ'ըսեմ, սէր եւ հաւատք պէտք է միայն, քիչ մը սէր եւ հաւատք միայն, ա՛յն հաւատքէն, որուն կորեկի չօտը լեռներ տեղահան կ'ընէ...

— Կը բաւէ ապուշ-տապուշ խօսիս, — ջղայնացաւ, — տիւրք փոխէ:

— Այս բոլորը կ'ըսեմ թեքնաքննադատութեան համար, ես զտարիւն հայ

եմ ու ամբողջ Հոգիովս կ'առեմ թուրքերէնը, սակայն, ամէն մարդ տկարութիւն ունի, քանի մը թուրքերէն երգեր կան, որ շատ կը սիրեմ, եւ ասիկա կարծեմ մեծ մեղք մը չէ...

— Երգէ սա երգը ու սիրջանսնք, — ըսաւ անհամբեր:

Երգելու ախորժակս դացած էր, ցեղիս տառապանքն ու խաչելութիւնը ցնցած էին հոգիս, գլխահատ դիակներ ու պատռուած որովայններ կ'ուրուագծուէին աչքիս դիմաց...

Այդ վայրկեանին, Հերմինէն բալորովին անհաղորդ էր յուզուածիս ու անտարբեր, արդէն սկսեք էր երգել՝

Իցաւ մարմանդ իրիկուն, հովն է փշուս, իմ կար,  
Սար ու ձոր մտել են քուն, սարից իրիւր ինձ տար...

Իսկապէս մարմանդ իրիկունը իջած էր յուշիկ ու հովր անուշ կը փչէր: Ես, կարծես սարսափելի մղձաւանջէ մը արթնցած էի, ու Հերմինէի խանդավառութիւնը խորթ կը թուէր ինծի այդ վայրկեանին:

Քիչ-քիչ իր սիրայեղ նայուածքներն ու հպումները վարակիչ դարձան ու ես ալ սկսայ երգել, կլանուած գալիք գըղւանքներու մտածումներով:

Ամայի սրճարանի մը առջեւ կանգ առինք ու առաջարկեցի իջնել, ըմպելի մը կամ սուրճ մը առնելու համար:

— Ես քու ըմպելիդ եմ, իսկ դուն՝ իմ սուրճս, — ըսաւ ծիծաղելով, — աւելի լաւ չե՞նք ընձեր, եթէ չըջազայինք: Հաւատա՛, նստելէն զանա՛ծ եմ, երազած եմ լեռները, անտառները, արտերը, թոյլ տուր, որ երազներս յաղենան...

Օրեր ամբողջ, բնութեան ծարաւ իր երազները յագեցնելու համար, թափառեցանք սար ու ձոր, արա ու անտառ, արբեցանք ու կլտացանք իրարմով, երգեցինք ու սիրեցինք միասին, ծիծաղեցանք անցեալին վրայ եւ սակայն երբեք չուզեցինք խօսիլ ապագայի մասին:

Տարեկան արձակուրդը շուտով վերջ  
գտաւ ու ստիպուեցանք հնարքներ յղա-  
նալ, մեր յարաբերութիւնները կարելի  
զարձեւելու համար:

— Տղու դասերուն օգնելու հա-  
մար՝ ուսուցիչի մը պէտք ունիմ, —  
յայտնեց օր մը խանդավառուած, —  
չե՞ս կարծիր, որ այս պաշտօնը ընդու-  
նելով՝ շատ մը դժուարութեանց վերջ  
տուած կ'ըլլաս:

Տան մէջ երեք հոգի էին, ինք, Հինդ  
տարու զաւակը ու ծեր մայրը, որ միշտ  
ձեռագործով գրազած կ'ըլլար:

Ինք գործէն կը վերադառնար այն  
ատեն, երբ փոքրիկ Հրաչը նոր ա-  
ւարտած կ'ըլլար դասերը: Ես մաս-  
նաւոր ճիգ կ'ընէի դասերու տեսու-  
ղութիւնը երկարածուելու ու պաշտօն  
կ'երկարէի մինչեւ Հրաչին անկողին  
մտնելը, պատմելով հեքիաթներ ու ա-  
ռակներ, զորս կ'ունկնդրէր նաեւ Հեր-  
մինէն, միշտ ինծի կպած, երբեմն ծու-  
կերուս վրայ նստած ու յաճախ կունա-  
կէս զիս զրկելով: Եստ անգամ ան-  
համբեր կը դառնայինք, երբ Հրաչ կը  
յամառէր ու չէր ուզեր աչքերը գոցել:  
Մեր սպասուածը կը դառնար տաժանելի,  
երբ երեխան կը սկսէր լալ ու պահան-  
ջել, որ նոր պատմութիւններ հնարեմ:  
Նման պարագաներու, Հերմինէ կը ջղա-  
յանար, ու ինքզինքը զսպելու համար  
յաճախ կը խածնէր թեւերս, կամ ծոծ-  
րակօ: Երբեմն ա՛յն տպաւորութիւնը  
կ'ունենայի, թէ Հրաչ կասկածներ ունէր  
մեր յարաբերութեանց վրայ:

— Ապուշ քանի կ'ըսես, — առար-  
կեց օր մը Հերմինէ, երբ այս նիւթը կըր-  
կին արծարծեցի, — այդ տարիքին ի՞նչ  
կը հասկնայ այդպիսի բաներէ:

— Եստ կը սխալիս, ես անձնական  
փորձառութեամբ պիտի խօսիմ: Երկու-  
քուկէս տարեկանիս, ճիշդ երէկուան պէս  
կը յիշեմ, երբ մեր երկրորդ յարկի բնա-  
կարանը ձեռքով-տոքով կը մազլցէի...  
երկուքուկէս տարեկանիս ես սիրահար-  
ւած էի Մարի անունով աղջկայ մը, որ  
ինծի պէս, երկուքուկէս տարեկան էր:  
Անկեղծօրէն կը խօսիմ, մեր սէրը փոխա-

դարձ էր: Եստ լաւ կը յիշեմ, ամէն օր,  
կէսօրէ ետք ժամը երկուքի ատենները,  
ես կամացուկ մը կ'իջնէի վարի յարկը,  
ուր կը բնակէին իրենք: Կը յիշեմ, յան-  
ցաւոր ու վախով խառնուած հաճոյքով  
մը, զի՞նք կը պառկեցնէի սենեակին մէջ-  
տեղը դանուոց ցած սեղանի մը վրայ,  
ու վերացած, այո, մինչեւ հիմա շատ լաւ  
կը վերյիշեմ հոգեվիճակս, այնպիսի հը-  
նարքներ ի գործ կը դնէի, որ այսօր իսկ  
չեմ համարձակիր պատմել, նոյնիսկ ա-  
մէնէն մտերիմ շրջանակի մէջ: Ձմռան  
ըսելու, որ քանի մը վայրկեանը անգամ  
մը, կու գայի զէպի դուռ ու ճեղքէն կը  
զխտէի դուրսը, ստուգելու համար, որ  
մէկը չէ՞ր դար: Այս սիրաբանութեամ  
ընթացքին, իմ երեխայի հոգիս կը վե-  
րանար, ու ես բացառիկ երանութեամբ  
մը մինչեւ այսօր կը յիշեմ Մարին, իմ  
առաջին սիրուհիս:

— Իսկ ես, վերջին սիրուհիդ, —  
ծիծաղեցաւ:

— Այս բոլորը պատմեցի, սպացու-  
ցանելու համար, որ սէրը բնազդ մըն է,  
եւ երբ՝ իբր օրինակ առնենք անասուննե-  
րը, ամէն ինչ կը պարզանայ: Կանանց  
քով, բնազդաբար, շէտուած է պշտի-  
րութիւնը, տղոց քով՝ նախանձը: Իսկ  
տղու մը առաջին սէրը, իր մայրն է...

Պատաւը երբեւիցէ չկասկածեցաւ մեր  
յարաբերութեանց վրայ, սակայն դրացի-  
ները բնականաբար սկսան թամբասել...

— Պէտք է լրջօրէն խօսինք, — առա-  
ջարկեց օր մը, — չենք կրնար այսպէս  
շարունակել, ի վերջոյ պիտի խայտա-  
նակուինք...

— Այո՛, պէտք է տարբեր ձեւ մը  
գտնել: Ես կ'առաջարկեմ, որ գործը փո-  
խես ու գտնես այնպիսի պաշտօն մը, որ  
աւելի ազատ ժամանակ ունենաս:

— Հանճարեղ զաղափար մըն է իսկ  
եաքը, մինչեւ ե՛րբ պիտի շարունակուի  
այս կատակերգութիւնը...

Գիտէի թէ, ուր կ'ուզէր հասնել այս  
խօսքերով, սակայն չհասկնալ կը ձեւա-  
ցընէի:

— Ի՞նչ է փնտածդ, — Հարց տուի  
զարմացած:

— Ձե՞ս դիտեր: Ինչո՞ւ կ'ուզես նեղ կայսրութեան մէջ շնեւ գիտ, դուն՝ որ ա՛մէն ինչ կրնաս գուշակել:

— Գուշակ'ել: Բաներ կան, որ յընտակօրէն պէտք է բուռն ու կրկնուին: — Ես կը կարծէի, թէ մինչեւ Հիմա դուն ինքզ պէտք է առաջարկ մը բրած ըլլալիր, — շարունակեց նոյն տրամադրութեամբ, — մինչդեռ կը տեսնեմ, որ մեռալին միայն մէկ կողմին է, որ կը նայես...

— Ես դուրս ազբիւրէ մը անուշ ջուր կը խմէի, — ըսի հանդարտ, — ես ծարաւս կը յագեցնէի, բնաւ ժամանակ չուտեցայ ուրիշ բանի մասին մտածելու:

— Իսկ իմ վիճակս ի՞նչ պիտի բլբլայ, — հարցուց խեղճացած:

— Ատիկա դուն պէտք է վճռես, — պատասխանեցի չոր շերտով, — պզտիկ աղջնակ մը չես, խիչք ունիս, արամաբանութիւն եւ, մա՛նաւանդ... փորձառութիւն...

— Սրիկայ, — աղաղակեց ինքնիրմէ ելած, — զիս հմայեցիր, որպէսզի Հիմա այսպէս վրա՞ս ինչոս:

— Տիկին, — ըսի վիրաւորուած եղանակով մը, — ինչո՞ւ չէք ուզեր իրականութեան նայիլ ճակատէն: Ես ձեզ սիրած եմ ու դեռ կը սիրեմ, ու վստահ եմ, դուք ալ, ձեր կարգին, զի՛ս կը սիրէք...

— Խնդրեմ, հետո եզակիով խօսէ, — ջղայնացաւ:

— Այս բոլորը մենք իրարու հասկըցուցած էինք լուրջաբար...

— Եւ երբեմն խօսքերով, — ճշդեց ջղայնացած, — խնդրեմ, իրականութիւնները մի խեղաթիւրէք...

— Դուն ալ եզակիով խօսէ, — ըսի զինք աւելի ջղայնացնելու համար:

— Անտանելի ես, — ըսաւ ձայնը ցածրնելով, — կ'ուզես ուշադրութիւնս շեղել նիւթէն, սակայն ի՛նչ ալ պատահի, այսօր պէտք է մեր դիրքերը ճշգրտեմք իրարու հանդէպ:

— Այո՞, — պատասխանեցի սիրալոյսով մը, — սիրազեղ հառաչանքներու մէջ, դուքէ բաներ մը ըսած ըլլամ, սակայն կրնամ վստահ ըսել, որ

ես որեւէ խոստում չեմ տուած քեզի, բան չեմ խոստացած եւ չեմ դիտեր ինչո՞վ մեղաւոր կը հուշակես դիս: Ես քու մեռեալ վիճակիդ յարութիւն տուած եմ, քեզ խրատուած եմ ու խանգալուած, քեզ կեանքի կոչած: Ձեմ ըսեր, որ այս բոլորը ըրած եմ իբրեւ չոր պարտականութիւն, նախ եւ առաջ այս բոլորը ըրած եմ իմ անձնական հաճոյքիս համար, սակայն այս հաճոյքը բաժնած ենք մեր միջեւ, կրնա՞ս հակառակը պնդել...

— Ի՞նչ բանի կը ծառայէ հակառակը պնդելը, — ըսաւ աւելի մեղմ, — ճշգրտեմք մեր դիրքերը իրարու հանդէպ, ահա՛ թէ ինչ պէտք է ընենք:

— Ես կը սիրեմ քեզ ու լաւագոյն պագայ մը կը մազթեմ քեզի, — ճշգրտեմ անմիջապէս, — ես պատրաստ եմ զործադրելու ի՛նչ վճիռ ալ արձակես:

— Իսկ ոչ մէկ նախաձեռնութիւն յանձն չե՞ս առներ, — հարցուց:

Գիտէի, թէ այս բոլորը ըսելով ինչ բանի կը ձգտէր, բոլորովին տրամաբանական, բայց զրեթէ անկարելի:

— Քանի որ քաջութիւնը կը պակսի քեզի ու կը սարսափիս իրականութիւնէն, — ըսաւ շատ հանդարտ ու յստակ, — քա պիտի առաջարկեմ ինչ որ պէտք է:

— Պատշաճ չէ. այսպիսի զգացումներ սակարկութենէ շատ վեր պէտք է մնան, պէտք է երեւան գան ինքնասինքեան, պէտք է ենթակայ ըլլան որեւէ ընդդիմադիր հակազդեցութեան:

— Ապրի՛ս, — ծիծաղեցու, — իսկական ճարտասան մըն ես: Քեզի համար, աշխարհի ամենախրթին հարցերն իսկ կարելի է լուծել խօսքերով, իսկ մեր պարագային՝ խօսին իսկ աւելորդ է... կը կարգադրուին ինքնատիքեան:

— Ինչո՞ւ կը վիրաւորուիս, — հարցուցի անկեղծօրէն, — յստակ ըսէ, ի՛նչ է ուզածդ:

Աչքերուս նայեցաւ շեղակի, եւ՝

— Հետո չե՞ս ամուսնանար:

— Ո՛ր, — պատասխանեցի՝ առանց իր նայուածքէն խուսափելու:

Աչքերը խոնարհեցուց տխուր, Հրային մահաճակատին քով ծուռնկի եկաւ,

բարձն ու վերժուկը շտկեց, ու մնաց անշարժ:

— Աշխարհի վրայ կարելի է մէկուեւ մտաւորի, — ըսաւ վերուոր, — այս կեցուածքք ինձի համար չափազանց վիրաւորական է ու անհանդուրժելի: Ձէի ակնկալեր, որ երբեք կընայիր այսպէսի բացասական կեցուածք մը որդեգրել ինձի հանդէպ:

— Շատ կը ցաւիմ, որ կը ստիպես զիս անախորժ իրականութիւններ քացայայտօրէն ըսելու, — պատասխանեցի հանդարտ, — պէտք է գիտնաս, որ որեւէ արարք պէտք է գործուի զգացումներու եւ տրամաբանութեան համադրումով: Մեր պարտադրանքն է միութիւնը հարցերը պիտի լուծէր առժամաբար, ու ապագան պիտի մնար մութ, զժուարութիւններով լեցուն: Առաջին զժուարութիւնը... ո՛հ, չեմ ուզեր, որ այլեւս այս մասին խօսինք...

— Անշուշտ, զոհողութիւնները միշտ ալ անախորժ կացութիւններ կը ստեղծեն անձնասէր մարդոց համար, սակայն մէկ բան պէտք է առանց վերապահութեան ընդունիս. վարդը փուշեր կ'ունենայ...

— Իսկ փուշերը միշտ ալ վարդերով զարդարուած չեն ըլլար, — ըսի հեղանակով, — նոյնիսկ վարդեր կան, որոնք փուշ ունին, սակայն բոյր չունին...

— Չափազանց փափկանկատ ես ու հաճոյակատար:

— Ներողութիւն, քեզի համար չէ, որ կ'ըսեմ, — ես միշտ պաշտամունքի հասնող սէր ունեցած եմ քեզի հանդէպ եւ կ'երգնում, որ զգացումներս եղած են անկեղծ:

— Եւ ահա թէ ո՛ւր հասցուց զիս անկեղծութիւնդ, — պատասխանեց տրտում, — ես համակերպած էի ճակատագրիս, յաջողած էի մտնուլ ու մէջս խեղդել զգացական ամէն խորտում, հանգուցեալին պատկերը վարագոյր ըրած էի մտքիս, ու սեւերով ծրարած էի էութիւնս. իբրեւ կի՛ն՝ միայն մայր էի, մինչդեռ հիմա, խլիպակ մըն եմ, ընդարձակ ուղիքանոսին մէջ կորսուած, ամէն

վայրկեան ենթակայ ընկղմելու գտնուելին:

— Ես թոյլ չեմ տար, որ ընկղմիս, — ըսի դինք արտադնուելու համար, — թէեւ օգնութիւնս ժամանակաւոր է, սակայն կրնամ օղնել, որ ապահով հասնիս մինչեւ նաւահանգիստ:

— Ես պէտք չունիմ այդ ժամանակաւոր օղնութեանդ, — պատասխանեց զուրբ հպարտօրէն բարձրացնելով ու ռոթի էլլելով, — վշտիս բեռը ես առանձին կը տանիմ, պէտք չունիմ որեւէ օժանդակութեան, որ պայմանաւորուած է կեղդոնախոյս պատճառաբանութիւններով:

Հանդարտ քայլերով դուրս ելաւ սենեակէն՝ արհամարհական ակնարկ մը նետելով վրաս: Ես նայուածքս խոնարհած էի գետին, ու լուռ կը սպասէի: Եռարած էի կացութեան յանկարծական վերելոյթումէն եւ ի զուր կը ջանայի որոշել ընելիքս:

Քանի մը վայրկեանէն՝ արդէն փողոցն էի, մտահոգ ու վերաւոր: Կը զգայի, թէ յանցաւոր էի, զիբքս առաջին իսկ վայրկեանին ճշդած չըլլալու համար: Մինչ այդ կը կարծէի, թէ ինք պէտք է հասկցած ըլլար, որ մեր միջեւ միութիւն մը սնկարելի էր, որովհետեւ ես ամուսնութեան վրայ կը նայէի իբրեւ ապագայի ամենալուրջ ծրարիս, դեռ պտորստ չէի, նիւթապէս թէ հոգեպէս, հասած չէի պէտք եղած հասունութեան ու կը կարծէի, թէ ի՛նք պէտք է հասկըցած ըլլար այս բոլորը...

Եւ դեռ բնաւ չէի սպասեր, որ այրիի մը հետ ամուսնանայի. այրի մը՝ որուն կ'ընկերանային զաւակ մը եւ մայր մը:

Յաջորդ երեկոյ, Հրաչի դասերով զբաղած էի, երբ ներս մտաւ Հերմինէն: Ես յանցաւոր տրամադրութեամբ աչքերս խոնարհած էի, իսկ ինք, չէնչոյ ժպիտով մը մօտեցաւ մեզի, համբուրեց Հրաչը ու ապա փոփոսաց ականջիս.

— Դեռ հո՞ն ես:  
— Ո՛ւր կ'ուզէիր, որ ըլլայի:

— Կատակ կ'ընեմ, — ըսաւ բարձրամայն քրքջալով, — ընդհակառակն, կը կարծէի, թէ պիտի չպայիբ ու ամբողջ օրը մտահոգ էի: Երբ դրան առջեւ հասայ, գրեթէ սարսափի մատնուած էի, ու երբ ներս մտած ատենս քեզ չտեսնէի, գուցէ յուզումէս նուազէի...

— Եթէ նոյնիսկ վռնտես՝ ես դա՛րձեալ կու գամ, — ըսի տխուր, — կատակ չէ, որ կ'ընեմ, մենք անստահման սէր ունինք իրարու: Հանդէպ, սակայն պարադաներու բերումով, երկուքս ալ կանգնած ենք անելի մը դիմաց եւ կը թելադրեմ, որ պաղարիւն մնանք, որպէսզի եղբական սխալ մը չգործենք:

— Այո, — Հաստատեց, — ճիշդ այդ պատճառաւ, ես նոր դործի մը համար դիմում ներկայացուցի ամերիկեան ընկերութեան մը քով, ու վստահ եմ որ արդինքը դրական պիտի ըլլայ: Պիտի աշխատիմ մինչեւ կէսօր ու պիտի ստանամ, կրնամ հրեակայել, առտոսպելական դու՛մար մը իբրեւ ամսական...

— Հրաշալի է, — խանդավառուեցայ, — կը տեսնե՞ս, է՛ս եմ, որ արժէքը երեւան բերի, ինքնավստահութիւն ներշնչեցի քեզի ու մղեցի դէպի կեանքի պայքարը:

— Ծնորհակալ եմ, — ըսաւ երկու ձեռքերս բռնելով, — չեմ գիտեր ինչպէ՞ս յայտնեմ երախտադրաութիւնս...

Ս.

Արդէն շարթէ մը ի վեր, Հերմինէ սկսած էր իր նոր պաշտօնին, ու յետմիջօրէնները մեզի համար հրջանկութեան ու հաճոյքի երանաւէտ հանդրուաններ էին: Այլեւս չէինք մտահոգուեր ազագայի հարցերով, թեթեւ էինք ու անհոգ: Կարճեա սասնըճինգ տարեկան էինք երկուքս ալ, զուարթ ու թովաւս ճնճղուկներու նման:

Գործի բերումով շարթ մը պարտաւորուեցայ բացակայիլ քաղաքէն:

Յուդիչ էր մեր բաժանուժը, սակայն բընաւ մտահոգ չէինք, քանի որ մէկ շարթէն արդէն վերադարձած պիտի ըլլայի ու մեր կեանքը պիտի շարունակուէր, Կրկան առուակի մը ընթացքով:

Վերադարձիս հեռաձայնեցի.  
— Եկայ, — ըսի կտրուկ ու խանդաւումով:

— Բարի եկար, — պատասխանեց չոր ու տափակ:

— Աժէն օրուան պէս սպասե՛մ, — Հարցուցի անհամբեր:

— Կը ցաւիմ, սիրելիս, — պատասխանեց, — այսօր քանի մը աւելորդ ժամ պիտի աշխատիմ:

— Ուրեմն ինչպէ՞ս պիտի ընենք: Պէտք է անպատճառ տեսնեմ քեզ:

— Մեզի եկուր, աւելի լաւ կ'ըլլայ: Իրիկունը դացի, միայն պատան ու Հրաշը կային:

— Տակաւին չեկու, — բացատրեց պատաւը:

Ես առարկեցի, թէ քանի մը օրերէ ի վեր անհանդիստ էի ու չէի կրցած գալ՝ Հրաշին օգնելու համար:

Դասերուն սկսանք ըստ սովորականին, ու հազիւ քառորդ ժամ անցած էր, երբ դուրսէն ոտնաձայներ լսուեցան:

— Եկան, — ըսաւ յանկարծ պատաւը:

— Եկան, ովքե՞ր:

— Հերմինէն եւ նշանածը:

— Նշանածը, — հարց տուի, ու կարծես ամէն ինչ սեպաւ աչքիս առջեւ:

Յանկարծ դուռը բացուեցաւ ու ներս մտաւ Հերմինէն: Դէմքին շէնչող ժպիտը յանկարծ չքացաւ, երբ նայուածքը հանդիպեցաւ աչքերուս:

Իրեն կը հետեւէր տարիքոտ պարոն մը, ակնոցաւոր ու լաւ հաղուած:

— Ներկայացնեմ, — ըսաւ Հերմինէ անզլերէնով, բռնադրօսիկ ժպիտ մը դէմքին, — Մըսթըր Մաքս Միւլէր, մեր ընկերութեան շրջանային սնօրէնը:

Ձեռ ներկայացուց իբրեւ իր գաւկի՛ն օգնական դաստիարակը:

— Ուրախ եմ ծանօթանալուս, — ը-



սաւ Մըսթըր Միւլէր, — ուսուցչութեան ասպարէզին մէջ նետուելու համար կ'ենթադրեմ, թէ բաւական վկայականներ ձեռք ձգած ըլլալու էք:

— Անշուշտ, — պատասխանեցի ինքզինքս գտնելով, — վկայականներ ունիմ Սորպոնէն, Հոտէն եւ Կիպրոսէն, անշուշտ դիտէք, թէ ո՞ր կը գտնուի Կիպրոսը:

— Կ'աղաչեմ, հանդիստ ձեզ մարդր, — պողատեցաւ Հերմինէ՝ փաղաքշական եղանակով մը:

— Այո՛, այո՛, — հաստատեց Մըսթըր Միւլէր կատկածով, — անշուշտ գիտեմ, Պարսկաստանի մօտերը կամ Հինդկաստանի մօտ, վերջապէս կը գտնուի տեղ մը Միջին Արեւելքի մէջ...

— Մայրապոյն Արեւելքի, — ըսի հեղեական:

— Այո՛, այո՛, — ընդունեց անվարան, — ես ուլ Մայրապոյն Արեւելք պիտի ըսէի:

Պահ մը նստեցանք լուռ, իրարու դէմքը զննելով:

— Ի՞նչ նիւթերու կը վերաբերին ձեր վկայականները, — հարց տուաւ Մըսթըր Միւլէր հետաքրքիր:

— Օհօ՛, — ըսի անմիջապէս, — սպառիչ կերպով սերտած եմ բազմաթիւ գիտութիւններ, սակայն մասնագիտացած եմ միայն հինգ ճիւղերու մէջ, եւ եթէ ձեզ չեմ ձանձրացնիր, կ'ընամ որոշ մանրամասնութիւններ տալ:

— Ես սիրով մտիկ կ'ընեմ ձեզ, — համակերպեցաւ Մըսթըր Միւլէր:

— Աստուծոյ սիրոյն, կարճ կապէ, — ազերսեց Հերմինէ հայերէնով:

— Զարմացանց հետաքրքրական է Հըրմի, — ակնցուց Մըսթըր Միւլէր:

Այդ վայրկեանին, ես կատղած ցուլի մը կը նմանէի, այնքան ընդվզած էի ու տակնուվրայ եղած: Ամերիկացիին դէմքի արտայայտութիւնն կարելի էր հետեւեցնել, թէ մեր խօսածներէն բան չէր հասկնար: Խորքին մէջ՝ թերեւս բարի մարդուկ մըն էր, սակայն կ'ուզէի իր մեծամտութիւնը ձաղկելով, իր յաւակ-

նութիւններուն պատճառած կսկիծը ամռքել:

Ըսի, թէ առաջին հերթին մասնագիտացած էի հետեւեալ ճիւղին մէջ. «Թղթիւնը արգիլող դեղատնայիններու հոգեբանական ազդեցութիւնը այր մարդուն վրայ»:

— Այս նիւթը շատ խորունկ կերպով ուսումնասիրած եմ, — ակնցուցի հըպարտ:

— Զրուելի ես, — ջղայնացաւ Հերմինէ:

— Բայց շատ խրթին նիւթ մըն է ասիկա, — սքանչացաւ Մըսթըր Միւլէր:

Ապա անցայ երկրորդ մասնագիտութեանս. «Սեռային զազումի յարաբերութեանց անախորձ ազդեցութիւնը, ապագայ ամուսնական կեանքին վրայ»: Անշուշտ մանրամասն բացատրութիւններ տուի այս բոլորին տեսական թէ փորձառական պրպտութիւններու մասին, անոր աստիճան, որ Մըսթըր Միւլէր սթանշացումով ընդունեց բացառիկ կարողութիւններու վաւերականութիւնը:

— Բոլոր մասնագիտութիւններու ամենահետաքրքրականը, անշուշտ, — ակնցուցի անմիջապէս յաւակնոտ ժպտով մը, — կը կոչուի՝ «Իսկական սէրը դէմ յանդիման՝ պարտադրուած սիրոյ հետ»:

— Զրուելի շատախօս, — փրփրեցաւ Հերմինէ:

— Իրաւ որ իմ խելագատիկէս շատ վեր են այս բոլորը, — խոստովանեցաւ Մըսթըր Միւլէր, — իմ գիտութիւնս հաշուապահական է ու կազմակերպչական:

— Եստ ուրախացայ ծանօթանալու համար, — ըսի ստքի ելլելով ու Մըսթըր Միւլէրի ձեռքը բռնելով, — յուսամ դարձեալ կը տեսնուիք: Գիշեր բարի:

— Եստ ուրախ պիտի ըլլայի, — պատասխանեց Մըսթըր Միւլէր, — դուք եզական մարդ մըն էք, կը շնորհաւորեմ Հերմինէ մինչեւ դուռը ընկերացաւ ինծի, ու կամացուկ մը ականջիս փոփրսաց:

— Վաղը անպատճառ կը հետաձայնեմ, գրասենեակը սպասէ, տեղ չեքթա՛ս:

Ձ.

Փրասենեակ չզացի: Ամբողջ օրը թափառեցայ: Մերթ ընկողմանած ամառի սրճարանի մը աթոռին վրայ, մերթ պակաս ճամբաները եզերող դարնանային կանանց խոտերուն մէջ, յաճախ արագաուոր ինքնաշարժիս դեկին ջրաձգօրէն փարած՝ կը փորձէի հաշտուիլ Հերմիին կորնցնելու գաղափարին հետ: Կեանքս վերածուած էր յուզիչ ոչրերգութեան մը ու սոյնպէս սպասորուած էի, որ այս հարուածէն անկարելի պիտի ըլլար սթափիլ:

Յաճախ կը փորձէի տրամարտել: Ի՞նչ էր ուզածս: Մինչ այդ, Հերմիին հոգևով ու ամբժնով յանձնուած էր ինծի ու զոնազան առիթներով կրցած էի հաստատել իր նուիրումն ու անկեղծութիւնը, զորս կը հակադէր բորբ զգացումներու: Ապա կը մտածէի, թէ իր այս քայլը շատ տրամարտական ու հեռատեսութենէ թելադրուած ծրագիր մըն էր: Կեղրակացնէի, թէ Հերմիին կը դուրս գալարեցական, հոգեկան ու մարմնային ամէն հաճոյք ու թուրք, ձեռք ձգելու համար այն ապահովութիւնը, որով ամբողջան զրկուած կը զգար ինքզինք: Իսկ Հրայի ապագան ամուր հիմերու վրայ դետեղելը, ուրիշ մէկ դրդապատճառն էր այս յանկարծական փոփոխութեան:

Իրբեմն այնքան կը պայծառանար միտքս, որ իրեն ամբողջովին ներկէ կտք, կը սկսէի արգահատել իր անպաշտպան ու շուրթած վիճակին վրայ, ու ազամայ, աչքերս կը թրջուէին:

Քանի՛ անգամ փորձեցի հաշտուիլ բախտիս հետ եւ ընդունիլ, որ ճակատագիրը ինծի վերապահած էր այրիի մը հետ ամուսնանալու խաղը: Մակայն, վայրկեան մը կտք՝ կ'ընդվզէի, բռունցքներս կը սեղմէի, ակուններս կը կծրտէի ու կը հրամայէի ինքզինքիս մնալ անդրբոլեւի, ճակատարաց ընդունիլ կատարուածը, սրտէս ու մտքէս վերջնականապէս խելով Հերմիին նուազկոտ նայածն ու հեշտալուր փոփոխը:

Ապա քիչ-քիչ կը տկարանայի, խըղ-

ճահարութիւնս կը սկսէր աճիլ սիրուն այրիին ու իր յօժարակամ նահատակութեան տուէր, կը սկսէի մտքիս մէջ փնտռել միջոցներ, իր վիշտն ու անպաշտպանը թեթեւցնելու, դարձանելու համար մեր բաժանման առթած կսկիծը, որ վստահ էի, ինծի շօփ ու քիչ մըն ալ տւելի՛ կը հարուածէր զինք:

Սակայն, հարարութիւնս ու այս որոշման առանց իմ հաւանութիւնս առնուած ըլլալու վերաբերանքը թոյլ չէին տար, որ զիջուած մղէր զիս մինչև Հերմիին ընակարանը: Արդէն իրիկուն էր ու Հրայի դասի ժամը շատոնց անցած: Անսահման կորովի պէտք ունեցայ դիմագրելու համար Հերմիին տեսնելու ցանկութեան: Աննպատակ թափառումներս շարունակեցի ու միայն ուշ տունն հասայ տուն:

Ըսին, թէ եկած էր ու սպասած: Ըսին, թէ անպայման պէտք է իրեն հանդիպէի:

Ինքզինքս զսպելու անկարող դարձած էի այլևս: Մեքենաբար դուրս նետուեցայ տունէն ու քառորդ ժամ ետք, արդէն իր դուռը կը ծեծէի:

Ինքն էր բացողը: Առանձին էր ու մտահոգ:

Դէմ դիմաց նստեցանք, լուռ ու տըրտում, մեր նայուածքները սեւեռած գետին: Ապա, պահ մը ետք, իրարու նայեցանք ափսոսանքով ու մեր աչքերը, կրակոտ բայց արտայայտութենէ զուրկ, յատած մնացին իրարու, թաց ու անթարթ:

Մեր հողիներուն վրայ ծանրացող ողբերգութիւնը աւելի տագնապալի կը դառնար, յոռութիւնը աւելի պերճախօս, երբ սենեակի կիսամութին մէջ, դէմ դիմաց անշարժ կը սպասէինք, մենք, որ խելօք կենալու մասին երբեք մտածած չէինք մինչ այդ:

Ինք միայն քաղութիւնը ունեցաւ լըռութիւնը խղիւղ:

— Բաւական շատախօս ենք, — հըծծեց:

— Հա՛, — պատասխանեցի հաղիւ կոկորդային խրլտոց մը արձակելով:

Ապա դարձեալ լուռ մնացինք։  
 Եւ գեանի քառակուսի պղտիկ մար-  
 մարները կը համբէի, անզո՞յզ թէ զոյգ,  
 էթէ զոյգ են՝ միասին պիտի մնանք, ե-  
 թէ անզոյգ են՝ պիտի բաժնուինք, կ'եզ-  
 րակացնէի։  
 — Մարմարնե՞րը կը հաշուես։ Տաս-  
 նըհինգ շարք են, ես ալ քանի՞ անդամ  
 հաշուեցի, երբ քեզի կը սպասէի...  
 — Անզո՞յգ, — հառաչեցի, — ինծի  
 պէս...  
 — Օ՛, կը բաւէ յօնքերդ պաստես, —  
 անհանգստացաւ։  
 Ծտկուեցայ, ձեռքերս ծունկերուս  
 վրայ դնելով։  
 — Ձիս ուղերձս, — ըսի, — եկայ։  
 — Բարի եկար։  
 — Բարի տեսանք։ Ինչպէ՞ս էք, ինչ-  
 պէ՞ս է ձեր նշանածը։  
 — Ծատախօս, — սաստեց գորովով։  
 — Ինչո՞ւ կանչեցիր զիս։  
 — Այնպէս, — ըսաւ, — քիչ մը խօ-  
 սելու քու նախադրած նիւթիչ մասին։  
 Իսկական սէրը դէմ յանդիման պարսա-  
 դրուած սիրոյ ինտ...  
 — Խօսէ, — ըսի, — քանի որ դուն  
 ես ընտրողը։  
 — Ես հարցը կը ներկայացնեմ տար-  
 րեր երեսով մը, — ըսաւ, — օգտակարը  
 եւ հանելին։  
 — Ատիկա պատրանք մըն է։  
 — Կը օխալիս, սիրելիս, — շարու-  
 նակեց, — եւ որքան կրցայ հասկնալ,  
 նաեւ կը դատապարտես զիս, այս առած  
 որոշումիս համար։  
 — Երբեք, երբեք, — ըսի կամաց-  
 կամաց ինքզինքս գանելով, — ես չեմ  
 դատապարտեր քեզ, նախ՝ որ այդ իրու-  
 շունքը չունիմ, ապա՝ ի՞նչ բանի կը ծա-  
 տայէ, որդէն ուշ կամ կանուխ, այս էք  
 ԸՄԱՄԻՔԸ։  
 — Ալ ի՞նչ կը քննտիս ու կը փախ-  
 չիս ինձմէ հեռու, — դարձացաւ, — քու-  
 նի որ ընդունած ես այդ բոլորը, գոնէ մի  
 զաւանսցնեք վերջին օրերս։  
 — Վերջին օրե՞րը...  
 — Գալ շարաթ կը մեկնենք Ամերի-  
 կա...  
 — Որքան շուտ, այնքան լաւ...  
 — Միայն այդքա՞ն...  
 — Կ'ուզէիր, որ աշխարհը տակնու-  
 վրա՞յ ընէի...  
 — Էրիկմարդ ես, դիտեմ...  
 — Ափսո՞ս...  
 — Ինչո՞ւ...  
 — Աւա՞ղ փառացս անցաւորի...  
 — Աշխարհակային համար, նուաճ-  
 ւելիք երկիրներ շատ կան...  
 — Ամէն տեղ զանձերու չես հանդի-  
 պիր...  
 — Ձիս նախատելու տեղ՝ կը շփացը-  
 նես...  
 — Գիտես, որ միշտ անկեղծ եղած  
 եմ...  
 — Ունէ մէկէն աւելի լաւ դիտեմ...  
 — Ու այս վայրկեանիս այնքան կը  
 ցանկամ գրկել քեզ ու համբուրել...  
 — Հրամմէ, եկուր...  
 — Դուն եկուր, ըստ օրոքու-  
 թեան...  
 — Ձե՞ս կարծեմ, որ սովորութիւն-  
 ները պէտք է փոխուին...  
 — Հաճելի սովորութիւնները էթէ  
 մնան՝ աւելի հաճելի կը դառնան...  
 Դանդաղ, ելաւ տեղէն, ու մօտենա-  
 լով՝ ծունկերուս նստեցաւ։  
 — Չար տղայ, — փսփոսաց թուշերը  
 երեսիս քսելով, ու վզիս փաթթուելով,  
 — ի՞նչ պիտի ընեմ առանց քեզի։  
 — Միւլլէրը կայ, — ըսի, — կը մը-  
 խիթարէ քեզ...  
 — Երանի չճանչնայի, — հեծկտաց  
 զլուխը ուսիս վրայ դրած։  
 — Կը վարժուիս, սիկին Գոլումպոս,  
 — ըսի խանդաղատանքով, — ես այսօր  
 ամբողջ օրը ճղնեցայ, ընդունելու համար  
 կատարուած իրողութիւնը ու կրցայ ինք-  
 զինքս համոզել, նկատելով քու շահե-  
 ըբը...  
 — Մի ծաղրեր, — պաղատեցաւ։  
 Երկուքս ալ լսեցինք։  
 Բաւական ատեն այդպէս մնացինք,  
 մեր շունչերը իրարու խառնած, տաք ու  
 հաղորդական։  
 — Գիտե՞ս, — ըսաւ, — Հրաչն ու  
 մամառ հոս պիտի մնան։

— Որքան շուտ, այնքան լաւ...  
 — Միայն այդքա՞ն...  
 — Կ'ուզէիր, որ աշխարհը տակնու-  
 վրա՞յ ընէի...  
 — Էրիկմարդ ես, դիտեմ...  
 — Ափսո՞ս...  
 — Ինչո՞ւ...  
 — Աւա՞ղ փառացս անցաւորի...  
 — Աշխարհակային համար, նուաճ-  
 ւելիք երկիրներ շատ կան...  
 — Ամէն տեղ զանձերու չես հանդի-  
 պիր...  
 — Ձիս նախատելու տեղ՝ կը շփացը-  
 նես...  
 — Գիտես, որ միշտ անկեղծ եղած  
 եմ...  
 — Ունէ մէկէն աւելի լաւ դիտեմ...  
 — Ու այս վայրկեանիս այնքան կը  
 ցանկամ գրկել քեզ ու համբուրել...  
 — Հրամմէ, եկուր...  
 — Դուն եկուր, ըստ օրոքու-  
 թեան...  
 — Ձե՞ս կարծեմ, որ սովորութիւն-  
 ները պէտք է փոխուին...  
 — Հաճելի սովորութիւնները էթէ  
 մնան՝ աւելի հաճելի կը դառնան...  
 Դանդաղ, ելաւ տեղէն, ու մօտենա-  
 լով՝ ծունկերուս նստեցաւ։  
 — Չար տղայ, — փսփոսաց թուշերը  
 երեսիս քսելով, ու վզիս փաթթուելով,  
 — ի՞նչ պիտի ընեմ առանց քեզի։  
 — Միւլլէրը կայ, — ըսի, — կը մը-  
 խիթարէ քեզ...  
 — Երանի չճանչնայի, — հեծկտաց  
 զլուխը ուսիս վրայ դրած։  
 — Կը վարժուիս, սիկին Գոլումպոս,  
 — ըսի խանդաղատանքով, — ես այսօր  
 ամբողջ օրը ճղնեցայ, ընդունելու համար  
 կատարուած իրողութիւնը ու կրցայ ինք-  
 զինքս համոզել, նկատելով քու շահե-  
 ըբը...  
 — Մի ծաղրեր, — պաղատեցաւ։  
 Երկուքս ալ լսեցինք։  
 Բաւական ատեն այդպէս մնացինք,  
 մեր շունչերը իրարու խառնած, տաք ու  
 հաղորդական։  
 — Գիտե՞ս, — ըսաւ, — Հրաչն ու  
 մամառ հոս պիտի մնան։

— Իրա՞ւ...  
 — Մաքսը այդպէս աւելի յարմար տեսաւ, ես ալ չհակառակեցայ, ըսէ ինչու...  
 — Ինչո՞ւ...  
 — Նախ՝ որ հայկական միջավայրի մէջ կը մեծնայ: Յետոյ, տեւական պատճառ մը կ'ըլլայ, որ վերազատում չուտաւ ու շատ-շատ:  
 — Սատանայ ես, — ըսի, — ամէն ինչ կ'ուզես ձեռքիդ մէջ պահել: Ալ վըտտահ եմ, այլեւս մարդոց վրայ քրոջական աչքերով չես նայիր, ալ օգնութեան պէտք չունիս, ապահով հասար նաւահանգիստ, գիտես, թէ ինչ կ'ուզես ու ամէն հնարքի կը դիմես, ուղածդ ձեռք ձրգելու համար:  
 — Գոնէ երկու շաբաթը անգամ մը կու գամ, վստահ եղիր, — բացատրեց,  
 — Մաքսը կարծածէր շատ աւելի հարուտ է:  
 Ապա՝

— Պտոյտի ելլենք, — ըսաւ, — դիւշերուն գոյ օգը շատ հաճելի է, կը պըտրտինք ու կը խօսակցինք:  
 — Հոս աւելի լաւ է, այսպէս շատ աւելի լաւ է...  
 Օղակայանի մը մէջ, բաժանումները միշտ ալ տիրուր եղած են, մ'նաւանդ՝ երբ մայր մը կը բաժնուի իր զուկէն, իր մօրմէն ու սիրականէն, առանց իր զուրգուրանքը, գորովն ու սէրը դրսեւորելու հնարաւորութիւնը ունենալու:

Մըսթըր Միւլէրի համար, սովորական մեկնում մըն էր, սա տարբերութեամբ, որ այս անգամ հետը կը տանէր արեւելքի կին մը, իր շորրորդ կինը, ու կը զարմանար, երբ Հերմինէ մօրը փաթթըւած կը հեծկլտար:  
 — Այս կիները, իբրև որ երբեք չեմ կրցած հասկնալ, — կը հառաչէր...  
 «Ո՛ր ալ պիտի կարենաս երբեւիցէ հասկնալ, ըսի մտովի...»

(Շար. 2 եւ վերջ)

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ



Մ. ԹԱԻՐԻԶԵԱՆ

ԵՐԷ՞Կ ԷՐ ՄԻԹԷ  
ԹԷ ԴԱՐ ՄԸ ԱՌԱՋ...



Այդ ե՞րբ էր միթե...  
Երէ՞կ էր արդեօք, թէ դար մը առաջ,  
Երբ հանդիպեցանք իրարու, ա՞՛յլ քան.  
Աւա՛ղ, չեմ յիշեր... երէ՞կ էր միթե  
Թէ դար մը առաջ...

Բայց ինչ որ ա՛յլ տեղ հանդիպած եմք մեմք,  
Երէ՞կ էր միթե, թէ դար մը առաջ...  
Երբ կեանքէն խոցուած եւ սերէ խարուած՝  
Կարտառուէիր դուն լուս աւ յուսանաւ,  
Երբ կեանքը համակ քնայքոյն իր դէգ՝  
Կը հարուածէր քեզ եւ մարդիկը հէզ:  
Բայց ինչ որ ա՛յլ տեղ հանդիպած եմք մեմք,  
Երէ՞կ էր միթե, թէ դար մը առաջ  
Երբ հանդիպեցանք իրարու, ա՞՛յլ քան,  
Աւա՛ղ, չեմ յիշեր... երէ՞կ էր միթե  
Թէ դար մը առաջ...

Բայց օրերն էին բազիկ աւ հիւանդ՝  
Այս օրերուն պէս... Այնն էր սէրը՝ բա՛նս:  
Ամէն ինչ Այնն էր եւ այնքա՛ն տարբեր.  
Բայց խաճապահար այս խենթ օրը ծեր՝  
Անցեալին տարբեր շարք կը կրէր.  
Երէ՞կ էր միթե, թէ դար մը առաջ,  
Երբ հանդիպեցանք իրարու, ա՞՛յլ քան,  
Աւա՛ղ, չեմ յիշեր... բայց կատաղութեամբ  
Քայք այցեստանն էր ողկոյզով կարմիր

Ջարդարուած կուրծքդ ցնծութեամբ արբշիտ,  
 Երէ՛կ էր միթէ, թէ դար մը առաջ՝  
 Աւա՛ղ, չեմ յիշեր... սակայն անկասկած՝  
 Նայն խենթ խռովքն էր զիս այսպէ՛ս խայթած,  
 Նայն սիրոյ սարսուռն՝ զիս այսպէ՛ս հանկած:  
 Երէ՛կ էր միթէ, թէ դար մը առաջ՝  
 Աւա՛ղ, չեմ յիշեր... նոյն խռովքն էր, բայց  
 Որ զիս անդադար կը տանջէր, ո՛վ քան...  
 . . . . .  
 . . . . .

Սիրոյ ամառն էր բազեղի նման՝  
 Արմաւենի՛ն էր աչքերդ կայուն՝  
 Քողցրութեամբ օծեր,  
 Այս օճանապուկ տա՛՛ք մարմինն էր նոյն՝  
 Գարալստամենքով որ կը մեղանչէր,  
 Եւ այս բերքառատ կուրծքերն էին նոյն՝  
 Լի՛ ողկոյզներով եւ գինիով բարկ՝  
 Եւ հույ՛է, Եւա՛, անցեալի՛, նախկին՛ն,  
 Ուխտաւորներն են քու շուրջդ կրկին,  
 Գերի՛ք նման՝ քեզ հաստապիմ,  
 Մուրացիկի՛ պէս՝ դէմդ ծնրադիր,  
 Եւ պահանջքն է նոյն,  
 Գթառա՛տ Եւա՛...  
 Ողորմա՛ծ Եւա՛...  
 Տո՛ւր ողորմութի՛նց...  
 Հրաբուխի պէս կիրճերով եռում  
 Մարդոց ջիղերուն... տո՛ւր խաղաղութի՛ւն...  
 Կարծրասի՛րտ Եւա,  
 Զա՛ր, անգա՛րք Եւա,  
 Թող որ խռոված սիրտդ մեղմանա՛յ,  
 Եւ հայսրտաւթեան ձիւնբը հալիմ,  
 Ե՛ւ սիրահալա՛ծ...  
 Ե՛ւ սովահալա՛ծ...  
 Այս հե՛ք խուժանին հագիին վրայ՝  
 Քու սիրախռով տա՛՛ք գիրկէդ, Եւա՛,  
 Տեղացուր բուռ-բուռ սիրոյ մանանայ:

Եւ բաշխէ՛ կրկին,  
 Քու այս հպասակ ուխտաւորներուդ,  
 Մարմնիդ բերքառատ այգիստաններէն,  
 Օ՛ր, կոցսահարուած ողկոյզնե՛ր յուրթի,  
 Փարչերով գինի՛,  
 Հին օրերուն պէս շրթներէդ պագշտո՛ւ  
 Համբո՛յր վաւաշտո,  
 Տա՛՛ք համբոյրներ բարկ՝  
 Քու այս շիկացած շրթներէդ կրակ...  
 . . . . .  
 . . . . .

Երե՞կ էր միթէ, թէ դար մը առաջ,  
 Ափսո՞ս, չեմ յիշեր...  
 Ամէն ինչ նայնն էր եւ այնքա՞ն տարբեր,  
 Նախկին ռերագո՞րծ դուն եւսն էիր,  
 Հիւս՛նդն էիր դուն,  
 Ամէն ինչ նայնն էր եւ նայն պողպատն  
 Տա՛ւ մարմինն էր նայն գիրկդ ծաւրեր  
 Նա՛յն կրճայարոյց եւս՛ն էիր դուն,  
 Նա՛յն պագշառ շարճն էր,  
 եւ նայնանն էր նայն՝ թոյնով ողորուն,  
 Օճի պէս գիրկդ հիւսած իրնն թոյն:  
 Ամէն ինչ նայնն էր եւ այնքա՞ն տարբեր,  
 Նա՛յն օրերն էին՝ նախկինին պէս ծեր,  
 եւ բարճերը հին:  
 Ինչ որ անցեալին՝  
 Օճեղէն մարմնիդ դրած էիր գին:  
 Երե՞կ էր միթէ, թէ դար մը առաջ,  
 Ամէն ինչ նայնն է, ու կեանքը՝ խոփած,  
 եւս՛, հին սակն է քու վիզէդ կախուած,  
 եւ պատտան է նայն.—  
 «Աէրս կը ծախեմ միայն ա՛յն մարդուն,  
 Ով՛ գի՛ն վնարէ անոր բարձրագոյն»:  
 Ներէ, որ գոչեմ, մե՛ղճ, պռանի՛կն եւ նայն,  
 Ջոր նանչցայ իսկոյն:  
 Երե՞կ էր միթէ, թէ դար մը առաջ  
 Մե՛նճ նանչցանճ գիրար,  
 Մե՛ղճ, վայրավատին  
 Նայն բարճերն են հին՝ իրարու կողմն,  
 Ինչպէս մտնապատ գոյգ մը շիրմափար:  
 Ամէն ինչ նայնն է եւ այնքա՞ն տարբեր  
 Որ սիրոյդ սակն իսկ, ափսո՞ս, չէ փոխուեր:  
 Մարդասպա՞նն եւս...  
 Որոգո՞րծ եւս...  
 Այդ ե՛րբ էր միթէ...  
 Երե՞կ էր արդե՞տ, թէ դար մը առաջ,  
 Երբ հանդիպեցանճ իրարու, ո՛վ քած,  
 Ասա՛դ, չեմ յիշեր... Երե՞կ էր միթէ,  
 Թէ՛ դար մը առաջ...

Մ. ԹԱԻԲԻՉԵԱՆ :

Յ. ՋՈՐԵՑԻ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ**

«ԵՆՔ» լայն էիմ թիզամղակամ ևւ հայկական համբանբու վրայ

Իէ.

**SAVENT - ELLES? SAVENT - ILS?**

«Մալաթիատա նե՛ պիր քալաշ»...

Նազը՛մ, ալա՛շ...

«Փարթալ սերվիս» ինքնաշարժով հասայ Ուլաշ, անկէ Տէլիթթաշ, յի-  
տոյ՝ Քանկալ, Արմաղան, Ալաճահան, Հասանչէլէպի, Հէքիմհան, ապա՝ Իս-  
կիմալաթիա:

Հին, իսկական, ուրարտափա՛ռ Մելիտինէն է այս վերջինը. անոր մօ-  
տակայ բարձունքներուն վեհագեղ համայնապատկերին վրայ՝ այնքան ու-  
շազբու տեսք ունի մեծղի «Ս» մը ձեւացուցած էրմէնքափու կիրճը, որ Քան-  
լը տէրէ կը կոչուի այժմ:

Հին անունը փառահեղ, անուան պատկերը գեղեցիկ, յաղթական,  
նորը ահեղ, ահեղութենէն դոյազող տեսարանը քստմնելի, եղերա-  
կա՛ն,

Արմէնդուռ, Հայդուռ, Հայոց կիրճ, Արեաց անցք,  
Եւ՛

Արիւնտ անդունդ, Գարմիր վիհ, վատ հակասութիւն...

Հաղարամեակնե՛ր առաջ, հայ ազգի կաղմութեան, ուրարտական այս  
հողերուն հայաստանացման նախօրէին, էրմէնքափուէն յաղթական մուտք  
գործե- են մեր նախահայր արմէնները. ըստ աւանդութեան, գեղարդներու  
ամպրոպային շողերէն լանթահար, լեռը նուրի պէս ճեղքուելով ճամբայ տը-  
ւեր է գեղարդակիր հին հայ քաջերուն...

Ինչո՛ւ,

Որպէտղի դարեր ետք,  
անոնց գեղարդազուրկ, անղէն յետորդները, Թրքական բանակի մէջ յաղ-  
թանակներ շահած, սակայն յիտոյ բանուորացուած հայ զինուորներ, ըստ



իրողութեան, նոյն կիրճին մէջ, հաղար հազարներով զոհ երթան եաթաղանակիչ հրէշներուն, Գուռը ներկուի արիւնով, դառնայ Գանլը տէրէ, հարմիր ձոր...

Աւելին՝

Անմարդկային բռնութիւններու տակ, իրենց զոհուած հարազատներուն յուրիական արիւնը կոխկռտելով, զէպի անապատային մոռյլ հարկողներ, անկէ անցնին անոնց սգուար մայրերն ու հայրերը, քոյրերն ու կիները... Հայաստանը պարզուի հայրէ, դադրի Արմէնկա ըլլալէ, դառնայ անտոմհայ թուրքիա...


Արդ, ես ալ, ի՞մ կարգիս, անոր ճամբաներուն վրայ՝ թէեւ անտոմհայ թուրք, սակայն շխտերձակամ հայի մի բնկորք, օր մը, աղուոր, քայտաւոր օր մը, անհամար քեկորներով, նոյն այդ Գուռնէն յաղթական մուտք դործելու մեր աղաւթին մեծ երազին հողիս յանձնած՝ վերացեր էի բոլորովին ու շատոնց հեռացեր էսֆիմալթիայէն...

Ի վերջոյ, «Քարթալան էր, որ իր շարժակին արտառց քալաշներով սթափեցուցի ու... վերերէն իջեցուց զիս համեմատաբար ե՛՛՛՛՛՛ Մալաթիա, MALATYA!:

1915 թուականին խորհրդաւոր մտօնկութիւն մը զգալու սարսափելիութիւնը, մեծ նշանի սեւ յաճախներ ապրելու տառապանքը հայկական ոչ մէկ քաղաքի մէջ սրտիս դարկերը քաղմապատկեցին եւ զիս անօրինակ հողփիճակներու ենթարկեցին ա՛յնքան, որքան Մալաթիոյ մայթերուն վրայ, ուր քանի մը օրեր թափառեցայ՝ իմացութեանս ընդմէջէն միշտ դիտելով Ապրիլեան նշանի քարտէսը, քարտէսին քաղաքներուն եւ աւաններուն շուրջի սեւ կլորները ու կլորներու տրամագծներուն իւրաքանչիւր միլիմետրին աստիճանաբար նահատակի արիւն խորհրդանշող անշափելի երկարութիւնը, անհունութիւնը, անազնութիւնը...

Սակայն, ինչո՞ւ այս բոլորը հոս եւ ոչ այլ տեղ...  
Հո՛ւս, որովհետեւ՝

Բազումամբ



փոքր է, սակայն երկու շրջանակներ ունի իր շուրջ՝ այս քաղաքը եղած է կեդրոնատեղին հայկական տարադրութեանց եւ շարժերու...  
Հոս հուշաբան, այստեղէն անցած են մահուան կարաւանները...

Անցեալին: Եղեոնի արիւնոտ ճանապարհներուն վրայ, գէպի դժոխք տանող առաջին կայարանն էր Մալաթիան:

Այժմ, թուրքերոյ մէջ, պատառ մը Եւրոպա է անիկա:

Իսմէթ Ինէօնի, որ իր անունով կոչուող մայր Հրատարակին կիզրոնը սրձան ունի, ջանք չէ խնայած իր ծննդավայրը տիպար քաղաքի մը շահանիւնին բարձրացնելու համար. ամէն կողմ գեղեցկութիւն, մաքրութիւն, արդիականութիւն, արեւմտեան ոճով բաղձայարկ շէնքեր, քառուղիի շատրուանաւոր աւազաններ, ներկայանալի փողոցներ, գազանազարգ ճամբաներ, ուրկէ խումբ-խումբ երկսեռ եւրոպացիներ կ'անցնին, ուրախ-զուարթ ճոռուողներով Փիմ-Փան-Փոն-Փէլ-Փի'լ...

Օ', անոնք գիտե՞ն արդեօք, գիտե՞ն, թէ նոյն ճամբաներէն, սարիներ առաջ տանջանքն ու արհաւիրքը, բռնութիւնն ու մահը անցած են, իրենց իսկ պետութեանց սառն անտարբերութեան հետեւանքով...

Գիտե՞ն նաեւ, գիտե՞ն, թէ իրենցմէ շատ առաջ, հաղար-հաղարներով, որո՞նք եւ ինչպէ՞ս, ինչպէ՞ս հասած են Մալաթիա...

Գիտե՞ն... գիտե՞ն... . . . . .

. . . . . Աստուած իմ, հայ տարադիրներու անվերջանալի կարօտաններ... Սերաստիայէն, Խարբերդէն, Երզնկայէն, Կարինէն, Բարձր Հայրի միւս շրջաններէն, Տարօն աշխարհէն, Տայքէն, Տարսուսի հովիտներէն, Արածանիի, Արաքսի հեռաւոր ափերէն, Բիւրակնեան լեռներու մօտաւոր փէշերէն բի՛ւր, բի՛ւր հայ դաղթականներ, մահուան դատապարտուած անմեղ պանդուխտներ՝ անօթի, ծարաւ, սարսափահար, մահամերձ մայրեր, «մամա, ջո՛ւր», «մամա, հա՛ց» աղերսող մանուկներ, վիրաւորի ճի՛ւղ, նորածինի լաց, որդեկորոյսի վայնասո՛ւն, տառապանքէն խենթացածի աղաղակ, անկարող ծերերու աղօ՛թք ու անհի՛ծք...

Հայ բլլալու «մեղքին» ծանրութիւնը իրենց կարկամ եւ խարազանուող ուսերուն, ՊԼԼ Հասսա կոչուող նոյն այս պողոտայէն քալեցին բոլորը...

Քալեցին մահուան դատապարտուած երկու միլիոն հայեր, հասան իսթապոն փողոցի հրատարակը, ախրահաշուկ սէրայի նոջեւ...

Յեղասպան թուրքին հանդէպ ցասուժ սրտիս, ուշքս Եղեոնի սեւ յիշատակներուն, Մալաթիա հասած առաջին օրս իսկ, նոյն պողոտայէն ես ալ քալեցի, հասայ միեւնոյն շարաշուք հրատարակը՝ միշտ հարցական նայելով արժէններու երբեմնի օրրանին մէջ այժմ կարծես մեծամասնութիւն կազմող եւրոպացիներուն կամ... ճոռուողներուն Փան-Փէլ-Փի'լ.

Առաջին ձեռնասայի պատմութիւնը գիտե՞ն արդեօք, Savent-elles ? savent-ils ?...

ԻԸ.

ԲԱԶՄԱՃԱԽԱՐԱԿ ԶԱՅՆԱԳԻՐ

- Վալի փաշա, ընդունեցէք խոր յարգանքներս:
- Յարգանքներդ միշտ ընդունելի են. դուն իմ սերտ բարեկամս ես, Փոշա Շիւքրիւ: Ի՞նչ կայ նորէն...
- Հաճի Քասա կորսոյրները եկած են՝ քանի մը կարաւան հայ տարադիր գնելու... կ'ուղեն ձեղի ներկայանալու:

- Այսօր քանի՞ կարաւան հասաւ Մալաթիոյ...
  - Ձորս կարաւան, փաշա՛:
  - Ո՞ր կողմերէն:
  - Երկուքը Խարբերգի շրջաններէն, մէկը՝ Երզնկայէն, միւսը՝ Մա-  
մախաթունէն:
  - Իւրաքանչիւր կարաւան մօտաւորապէս քանի՞ հողիէ կը բաղկանայ,  
Փոշա՛:
  - Ձորս հարիւրէն հինգ հարիւր...
  - Աղուոր կիներ կա՞ն եկողներուն մէջ... շատ կա՞ն...
  - Կան, փաշա՛, շատ կան... լոյսի կտոր աղջիկներ ալ կան...
  - Օ՞, շատ լաւ, շատ լաւ... բախտաւոր ենք, չըտե՞ս...
  - Ալլաւիք միւս մեզի հետ է, փաշա՛, մենք ենք իր ժողովուրդը...  
կեանքները իր դաւակները չեն, իրաւունք չունին ապրելու... անոնց կիներ  
ու գիւնը հալալ է ձեզի...
  - Հերիք, հերիք, նորէն մի երկարեր. դնա՛, պաշչալուշ ձաֆարին  
բսէ, որ ամֆնէն աղուոր կիներէն եւ այդ լոյսի կտոր աղջիկներէն տաս-տաս-  
նըհինգ հատ դազանօրէն ընտրել տայ ինծի ու միւսներուն համար...
  - Ողորմածութիւնդ գլուխէս անպակաս, փաշա՛, մէկ հաս ալ ինծի  
համար...
  - Լամ երկո՛ւ հատ. դնա՛ հիմա պաշչալուշին հաղորդէ հրամանս, յե-  
տոյ իմաց տուր Հանի Քայա եղբայրներուն, որ դան... կը սպասե՛մ...
  - Անմիջապէս, անմիջապէս...
- (Փոշան դուրս կ'ելլէ. փաշան աւանման, շնական գոհունակութեամբ,  
կը սկսի իր քառերը յարմարցնել փոզոցային թքերգի մը եզանակիմ).
- Կիւզիլ Բատընլար, սաթլըք կեանքներ  
Մամախաթունտան վէ Էրզնկանտան,  
Թալաթա քայ վար պիզիմ Բազմետան...

(Դուռը կը գարնուի, փաշան կը լռէ, Փոշան կը մտնէ):

- Ձեր հրամանը կատարեցի, փաշա՛, աղուոր կիներէն, լոյսի կտոր  
աղջիկներէն քսան հատ ընտրել տուինք. հիմա սէրային վարի սենեակներէն  
մէկուն մէջ արգելափակուած են անոնք...
- Ապրի՛ս, ապրի՛ս... Իսկ Հանի Քայա եղբայրնե՞րը...
- Մրահն են. անհամբեր կը սպասեն, որ շնորհ ընէք. ընդունիք գի-  
րենք:
- Թող դան, թող հրամեն. կը սպասե՛մ...
- (Փոշան դուրս կ'ելլէ դարձեալ, փաշան առանման)
- Հը՛մ... անցեալ անգամ շատ աժան ծախիցի տարազներէրը... այս  
անգամ տարբերութիւնը պէտք է հանեմ... բաւական սուղ գին պէտք է գը-  
նեմ իւրաքանչիւր կարաւանին վրայ... Թալաթը արդար բաժին ունի...  
ինչի՞քին իրաւունքը պէտք չէ մոռնալ... . . . . .
- Սէլալ, փաշային...
- Աստուած երկար կեանք շնորհէ մեր վալիին...
- Հրամայէք, Հանի Քայա եղբայրներ, հրամայէք, նստեցէք... քա-  
րի՛ եկաք...
- Բարի տեսնեք, փաշա՛...

— Ինչպէ՞ս էք նայինք... հալ, քէ՛յֆ...

— Լաւ ենք, շատ լաւ, փաշա՛... անցեալ շարժումն մեր գնած կարաւանները ոչնչացուցինք... Հիմա եկեր ենք քանի մը նոր կարաւաններ եւս դնելու... կեանքն ա՛րիւնն ու ազուրիները հալա՛յ ըրէք մեզի...

— Դուք սուղ, մեր ծախելիքը ասան...

— Շնորհակալ ենք, փաշա՛, ձեր բարութիւնը անպակաս ըլլայ. Մալաթիան ձեր շնորհիւ օր-արեւ տեսաւ...

— Ապրիք, շատ ապրիք. բայց հետաքրքրական է. նախ պատմեցէք, թէ ինչպէ՞ս ոչնչացուցիք նախորդ կարաւանները...

— Գեղեցիկ կիներն ու ազջիկները մեզի վերապահեցինք, զի՛յ գեղեցիկներն ալ մեր իկիտներուն նուիրեցինք... մնացած ծերերն ու միւսները յանձնեցինք մեր չէքէներուն, որ շարշարելով մեռցնեն, դիմի՛ր տեղ արիւն խմեն, արեամբ արբենան...

— Իսկ ձեր գառած գեղեցիկ կիները կ'ապրե՞ն առկուսին...

— Ձէ, փաշա՛, դանոնք ալ մե՛նք սպաննեցինք. բայց ինչպէ՛ս... բռնի դիմումեցինք, մերկացուցինք, գիրենք հաւաքաբար վայելելով խեղդեցինք... մեր ընկերներէն վառելի վէ՛հուրը նոյնիսկ անոնցմէ մէկուն ծիծերը վազրի պէս խածաւ, փրցուց...

— Ապրի՛ Վեհուրը, ապրիք դուք ալ, այսօր ծախելիք չորս կարաւաններ ունինք. իւրաքանչիւրը հինգ հարիւր հողիէ աւելի, էդերը շատ գեղեցիկ, ծառի փերի՛...

— Հապա դի՛նք...

— Սեղանիս վրայի ֆէ՛սը ոսկիով լեցուցէք կը բաւէ... մենք բարեկամներ ենք ի վերջոյ... գալիքին մանր-մունր կարաւաններ ալ ձրի կու տամ ձեզի... բոլորը կողոպտեցէք. տասը ֆէս ոսկի կը շահէք, վաստակ եմ...

— Շնորհակալ ենք, փաշա՛, կ'ընդունինք. ֆէ՛սը բռնեցէք լեցնենք ոսկին...

— Բռնեցի, լեցուցէք...

Խը՛ 22222՛22222՛2 . . . . .

Ոսկիներուն ձայնը ո՛չ մէկ ատեն այնքան դէ՛չ պիտի չհնչէր լսողի ահանջին. կարծես օձերու խլչոց ըլլար... զարհուրանքէս ցնցուեցայ, ցնցումէս կորուսեցան բոլոր ժապաւէտները ու խանդարուեցաւ մեքենան, որ, հայկական սարագրութեանց եւ ջարդերու կեդրոնատեղի Մալաթիոյ տարահարչակ Ալրայիսի առջեւ, թուրքին վաստութիւնը երեւակայած միջոցիս, Ապրիւեան Սղեանի քարտէսին պայմանական գիծերէն եւ սեւ կլորներէն դոյրացած էր իմացութեանս մէջ:

Տարիներ առաջ, թրքերէն լածը հայերէնով հաղորդող ձայնագիր մըն էր անիկա, անսովոր, բարդ ու բազմաձայնարակ, իւրաքանչիւրին տրամադծի իւրաքանչիւր միլիմետրը աս՛օք հոգար նահատակ...

(Շար. 9)

Յ. ԶՈՐԵՑԻ

Մեր Լրիսասարգ աշխատակիցներին Խորով Ասոյանի շնորհիվ անընդհատ Լրիսասարգ արժանացաւ ժամանակակից թէ՛ ընթերցող շրջանակներուն լուրջ ուշադրութեան: Կարճ կամ երկար գրութիւններով գրքոյկին անդրադարձան Կ. Սասունի, Ս. Թէօփոյան, Ն. Չարխուան, Յ. Չորեղի եւ Ա. Տոնոյան, իսկ Քիւրդիսի ներկայ ճամարին մէջ ընթերցողը կը գտնէ անոր երբեք անտես արձակագիր Սմբատ Փանոսեանի բնորոշ և վերջուժամբ, որ ուշադրաւ է թէ՛ գնահատանքի եւ թէ՛ խափսիանքի արժանաներով: Լեւոն Միլոնեան, իր կարգին, Վճռորոշ ժամանակ գրիած է բնագծումներով ու դիտարկութիւններով հարուստ գրութիւն մը, զոր ընթերցողին պէտք ներկայացնենք յաջորդ թիւով:

Այս թուումները կատարեցինք, ունեցնելու ճամբ, որ անկեղծութեան, լրջութեան ու պատասխանատուութեան երաշխիքներ բերող գիրքերը աննշմար չեն տեսնիր, Կ'ունենան իրենց հասարակական արժանակը:

Ասոյանին կը մտայ օգտուիլ թէ՛ գնահատանքներին եւ թէ՛ մանաւանդ, դիտարկութիւններին:

## ՉՈՒԳԱՀՆՈՒ ԱՌԱՆՅԻՆ

Ա.

Աչքերուն մէջ, ուր խոսնումս Արեւիչի արեւուն ջերմութիւնը կը ցույց,  
 Կը աւզի մերք նշխարառոյր ցորեաններու քիտոնուն ազաչանքը խոսացած՝  
 Ու չափելով ճեպընթաց հայրանքները Արեւմտեան մշտաւոյնով սիրամէքին՝  
 Ան կը փութայ ծխնելոյզի ներսումս հնոցին մէջ հաստափոր,  
 Իր ամբարած շողերու փնացումին զամբանականը կարդալու...

Ու փայտելով սովորուել հայուածքներու գիրար կրկնող ճանկերէն,  
 Իրանք սորվիլ կը փորձեն հմտութիւնը զինք սպառող օրերում՝  
 Կ'իջնէ նիրհող քաղաքի թռիչքուն մէջ ապակի,  
 Գորշ օրերու հարցախոյզին էջագրումը կազմելու,  
 Կախանակելով ցնցոտիներ կրող զժգոհ խումբերուն,  
 Որանց երգերը տխուր, ճայնիսկ իրենց կշռոյթներով վայրենի՝  
 Մետաղառոյր ուղեղներէ խոյս տալով՝  
 Կ'հասկործան կիթառներուն կը կառչին...

Որոճումները բոլոր էջի մը պէս իր ուղեղին մէջ փռած  
 Ու տաղակացած՝ գործարանի յանախանէն տրտմալար,  
 Ան կը շտապէ  
 Գոյաւթիւնն իր՝ երկարի պէս անանձ՝  
 Արեւիչի վեհաբնակ մէջ անձակիլ...

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԱՆ

## ԶՈՒԳԱՆՆՈՒ ԱՌԱՆՑՔԷՆ

Բ.

Իմ ու քու միջև  
 Կը քաւայի  
     ժամանակի հարկատուն՝  
 Բազմակէտի  
     Կապարները չձուլուած՝  
 Մեր շուքերում  
     Առանցքին մէջ շարելու,  
 Որոնց միջև  
     Ստորակէտ մ'իսկ չկայ...

Իմ ու քու միջև  
 Կը քաւայի  
     ժամանակի հայելին,  
 Կը բազմաման  
     Ամբառ տողերն սպիտակ,  
     Սպասումով առցում,  
 Միմէ լռելեայն,  
     Խորհրդաւոր շղկապներ  
 Անոր անհուն  
     Ջրհորին մէջ կը շրջին.  
 Ու ես աւ դուն,  
 Կեդրոնախոյս  
     Մասնիկներու մման զերմէ խայթուած՝  
 Կը դառնանք մոյն  
     Շքամակին շուրջ դատարկ,  
 Ուր ոչ մէկ յուշ,  
     Ոչ մէկ երիզ առանձին  
 Կրնայ երկնել  
     Ամբողջութիւնը միւսին:

Իմ ու քու միջև  
 Կը քաւայի  
     Մեր երգերում պէս անձայն  
     Արարչագործ լիւրբիւնը բնութեամ...

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՑԵԱՆ

ՅԱՌՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

Նորերու, քերէս աւելի ճիշդ կ'ըլլար ըսել անձանոթներու ստորագրութիւնը յանախ գրութիւններ կը հասնին ձեզի, բայց մենք ասածին հետաքրքրութեամբ կը մտնենք անոնց, որոնք տեսրակներով կը ներկայանան: Տեսրակը, այսինքն՝ շատր, շատը ունենալով հանգերծ մութին մէջ մնալու համարութիւնը ման մը կը նշանակի, կ'ենթադրէ լրջութիւն մը, առանց որուն գոնաւոր է լուրջ առնել զբաղանուսթեան ծառայելու համար ճամբայ ելլող սեւէ տն:

Տեսրակով ներկայացողներէն մէկն է Յարութիւն Նազուչեան, որ մեր տրամադրութեան տակ զրամ է տամեակ մը բանաստեղծութիւններ, ուր, իր սերունդին յատուկ անիշխանութիւններուն առնթեր՝ կան յղացումներու եւ գրեւորուելու յուսադրիչ կերպեր, յանգնութիւններ, որոնք չեն կրնար անտարբեր ձեռքէ ընթերցողը:

Մեզի տրամադրուած տեսրակը սպասելէ առաջ, վստահարար նոր տեսրակով մը պիտի ներկայանայ այս երիտասարդը: Իր էջերը անկաշտութիւններ ստեղծող էջեր են...

ԱՍՏԳԵՐՈՒՆ ՉԱՅՆԸ

Ջանգերուն ձայնը աստղերէն կու գայ ու կ'արձագանգէ ներաշխարհիս մէջ. երկինքին չափ մեծ հորիզոն չկայ, մ'նոեցներն են լոկ հեռու աստղերէն իրենց օրհներգով մեզ կը խնկարկեն:

Ջանգակները՝ մեզ մեր թմբիրին մէջ արթուն կը պահեն:

Հին մեռելներուն սուրբ տաճարն է այս երկնային հողը, եւ պատարագ է արօթքի նման, երբ աստուածները տիեզերական ընմադրիչներն ֆն թիւրիմացութեան:

Մենք պարզաբանդակ մեր դերերուն մէջ, գոյներ որոնող, դեռ չենք մահացած, որ հանդիսատեան ըլլանք դարերու այս պատարագին:

Եւ հեռուէն, հեռուէն պանգակները դեռ դեռ կ'արձագանգեն անունը միայն այս բեմադրութեան «անիմաստ կեանքը, ապսխրտ տրաման»:

## ՃԵՐՄԱԿ ՊԱՏՈՒՀԱՆ

Ճերմա՞կ պատուհան,  
շռուկներուն մէջ՝  
գարնան գեփուտին  
կը բացուիս  
յանկարծ  
և դուրսէն  
տաճուկ,  
տաճուկ արևու մը  
կը ծպտի  
դեմքիս:

«Առաւօտն արդար»...

Ակնբարբ մըն է շրշիւնն երկնային,  
կեանքի պէս շենշող,  
տառապամքի պէս  
խորհմաստ,  
խոհուն,  
զգացմունք մըն է  
հեփիաբանման ու շղարշային:

Ճերմա՞կ պատուհան,  
ծպիտն արևիկն  
կ'անցնի շղարշէդ,  
կ'անցնի աչքերէս,  
ու կ'արձագանգէ  
մերաշխարհիս մէջ՝  
իբրև խնկարոյր,  
լուսնային շրշիւն,  
կը համակէ զիս  
երագկոտ վազէով,  
և արիւնիս մէջ  
փրփուր լեցնելով՝  
քեքեցած հոգիս  
կը տանի հեռու  
երջանկուքեճէն,  
կապոյտէն անդին,  
իմ ապրումներս  
դիւցազմերգական  
հի՞ն աստուածներուն:



### ՆԵՐԱՇԽԱՐՀ

Խունկի բուրմունք կայ  
 Տիեզերքին մէջ  
 Եւ օրօրացնէր ծովերուն վրայ  
 կեանքի փշրանքները  
 մամուկալած  
 ծլարձակեցան ու գարդարեցին  
 փխրուն մայրերը մեր երկրագունտին :

Հին երազներ կան  
 տիեզերքին մէջ,  
 սահմաններ չկան ծովերուն վրայ,  
 անանուն բեկեր  
 դիւ կը կաշկանդեն երազներուն մէջ,  
 կ'իշխեն մտերուն .  
 այս երկրագունտէն  
 իմ անցած ամէն մէկ ֆայլափոխիս :

Ազատութիւն կայ  
 տիեզերքին մէջ  
 ու գոյներ, գոյներ, գոյներ կան բազում  
 ծովերուն վրայ,  
 ապրումներուն մէջ սրբութիւն չկայ,  
 մոխրագոյն է գոյնն իմ ներաշխարհիս :

Խորհուրդը ծովուն  
 անցրպետն է ողջ,  
 գոյներու երգը  
 ծովերու երգն է  
 եւ մարմին չունի  
 տիեզերքը մեծ :

Խունկի բուրմունքը  
 յաւիտենական  
 կը լեցնէ հիմա իմ ներաշխարհս,  
 աչքերուս մէջ կայ  
 ծովերու երգը,  
 օրօրացային  
 ռոջ անջրպետը  
 կը լեցուի հիմա ապրումներուս մէջ .  
 կը վերադառնամ  
 դէպի անմարմին իմ էութիւնս  
 տիեզերական . . .

Տրտունջքէն կաթած  
կարմիր գինիէն  
ոչ որ արբեցաւ:

Սուրբ աղ ու հացէն  
ոչ որ ճաշակեց:

Ոչ որ խնկարկեց  
վերջին ընթրիքի սեղանէն յառնող  
խորհուրդը խորին:

### ՓԵՏՈՒՐԷ ՈԳԻՆ

Ամէն տեղ տիրեց երկնային փոշին  
եւ ստրկացնող  
շունչն աստուածային:

Երուաղէմի խսիրէ խաչին  
խաչեցին անոր  
մարմինն անմարմին:


Հոգիի ծանաղը  
երկու դար արդէն  
ծածկեր է գէմքդ,  
ստուեր դարձուցիր փառքդ երբեմնի,  
հեթանոսացած,  
բաբելոնացած  
հին Երուաղէմ:

Փետուրէ ոգին  
երկու դար տիրեց  
երկնի կապոյտին:

Եկաւ,  
կոչուեցաւ,  
սուրբ ու սեւ քարը  
Երուաղէմի:

Մենք կ'երկնենք հիմա  
կապոյտն երկինքին,  
երկնային փոշին  
մեր հոգիներուն  
ապաստութիւնը անտող ջոյքէն  
կ'անջատենք փետուրն այդ փոշիացած,  
նոր մկրտութեամբ,  
կրկին կը խաչենք  
այս նոր օրերու  
ոսկեղէն խաչին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ



ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Փ Ա Ռ Ք Ի Ե Տ Ե Ի Է

Այս յօդուածը գրած եմ 1930ին, «Յառաջ»ի Յունիս 8 թիւին մէջ։  
 Եղած դատումը այդ թուականներում գրական մթնոլորտը կը բնորոշէ։  
 Հիմ գրութիւնները աչիւ անցուցած պահուս, այս յօդուածը ուշադրու-  
 րիւնս գրածեց։ Մեր այս օրերուն, նոյն պատկերը կը տեսնեմ եւ նոյն մտա-  
 հոգութիւնը կ'ապրիմ։

Կ. Ս.

*Փառքի ձգտումը բնական երեւոյթ մըն է, նոյնիսկ մղիչ ուժ մը քա-  
 չաքական գործիչին, գրողին ու արուեստագէտին քով։*

*Այս ընդհանուր երեւոյթէն դուրս չէր կրնար մնալ ժամանակակից Հայ  
 գրական սերունդը. ու ատոր համար չէ, որ ան մեղադրանքի կրնայ կան-  
 չըիլ։*

*Բայց փառքը երկասյրի սուր մըն է։ Փառասիրութեան եւ փառամտու-  
 րեան սահմանները իբրամէթէն շատ հեռու են, սակայն սահմանագծերը  
 շատ նուրբ են։ Նրբուղին խիստ սայթաքուն է, ու անոնք որ չեն կրնար բա-  
 ւականանալ բաւական փառասիրութեամբ, գիւրութեամբ կրնան ցատկել փա-  
 ռամոլութեան անսահմանի սլորտներուն մէջ։*

*Փառքի գոհացումը շատ քիչ անգամ ինքնարաւականութեամբ իր լրու-  
 մին կը հասնի։ Այդ պարագան կախում ունի գրողին զօրուոր նկարագրէն  
 եւ անկախ անհատականութենէն։*

Ընդհանրապէս փառասիրութիւնը ինքնիրմով սնանոյ կրեւոյթ մը չէ, այլ պայմանաւորուած է արտաքին տպաւորութիւններով: Դուրսի մըթնոյրտէն կը ըլի եւ կու գայ շոյելու դրազէտին կամ արուեստադէտին փառքի ընդունարանները: Այս փոխադարձ յարաբերութիւնները կրնան պահել դրազէտը փառասիրութեան սահմաններուն մէջ: Որովհետեւ պրոպագանդա կը դառնայ փառքի ընդունարան, իսկ գրական մթնոլորտը ինքնարուխ ճանապարհով փառքը կը բաշխէ այդ ընդունարաններուն:

Այս պայմանը երբ խախտի, գրադէտը կը դադրի ընդունարան ըլլալէ, ու կը սկսի արշաւել փառքի աւարին ետեւէն: Փառքի աշխարհակալութիւն: Ու արդէն մենք փառամոլութեան բարձունքներուն վրայ ենք: Այս անհատական նախաձեռնութեան բնական հետեւանքն ա՛յն կ'ըլլայ, որ գրադէտն ինքնիրեն փառք կը ժողովէ, կը մեծցնէ, ինքնաբաւական՝ շուրջը կը նայի, երբ դիտակից չըջապար կը բացակայի:

Մեր գրական կեանքին մէջ այս վերլին կրեւոյթը շատ ակնբախ է: Ու այդ հիւանդապիւն կրեւոյթ մըն է, որմէ պէտք է խուսափի ժամանակակից գրական սերունդը: Որովհետեւ այդ սերունդը իր ապրած կեանքով, իր ծանօթութեամբ եւ իր աշխարհատեսութեամբ աւելի նպարտ, աւելի անկարի եւ աւելի ծանր ըլլալու տուեալներ ունի՝ քիչ մը աւելի ուժով կառչած մնալով իր իսկական արժէքի խորհրտին, փոխանակ սուսանելու՝ անխորտին:

Պէտք է մտածել ու գիտակցիլ խորապէս, որ փառքը փառասէրին շուքն է: Եթէ փառասէր գրադէտը ընդունակ է կենալու իր ստեղծագործութեան պատուանդանին վրայ, այդ շուքը պիտի գայ ու փառքի իր ստեղծութեան առջեւ: Իսկ եթէ սկարածութիւնն ունեցու վազելու շուքին ետեւէն, ի՛նչ ողբերգութիւն, շուքը միշտ պիտի փախչի հեռուն:

Վաղըը շուքի ետեւէ...

Ո՛վ է տեսեր, որ մարդ կարենայ իր շուքը բռնել: Առաւելագոյն շահն այս անմտութեան՝ ծիծաղելի դառնալն է:



Ժամանակակից գրական սերունդը փառքի բնական տենչանքն ունի, սակայն փառքը բաշխող գրական մթնոլորտը գոյութիւն չունի:

Մտահոգութիւնը միջին սերունդի մասին է: Աւելի բարեհաճ պիտի ըլլար հին սերունդը եւ աւելի դիւրութեամբ իր գնահատանքը պիտի ուղղէր այսօրուան սերունդին, եթէ դէպքերն ու տարիքները հինիցը մինակութեան չմղէին:

«Վերին շնորհ»ը, որ պիտի դար հիներէն, հազուադէպ է, կամ պատահական: Հարկ պիտի ըլլար հետեւիլ գրական ամբողջ շարժումին, բարեխիղճ դատաստան մը ընելու համար, ինչ որ տեղի չ'ունենար շատ մը պատճառներով:

Վերէն յուսակտուր, մեր օրերու երիտասարդ գրողէան իր ակնարկը պիտի խոնարհէր գալիք սերունդին, որ խանդավառ ու անկաշկանդ՝ պատանեկան հիացումը զրկէր իր անմիջական առաջնորդին: Այդ հորիզոնէն ալ արձագանք չկայ:

Մինակութիւն...

Շեշտուած մինակութիւն: Ու մերօրեայ գրական սերունդը ստիպուած է ինքը իր մասին խօսիլ: Դժուարին անցը: Որովհետեւ նոյն սերունդի մար-

դիվ առհասարակ ժլատ են իրարու հանդէպ: Իրենց մէջէն ցցուն փառքեր չեն կրնար ստեղծել:

Այս բնդհանուր երեւոյթը մեր մէջ աւելի հիւանդաւրիւն համեմատութիւններու հասած է: Զգայնացած սերունդը (բացառութիւնները յարգելով) փառքի հոռուէն վազած ժամանակ՝ մէկը միւսը տապալելով կ'անցնի: Վարկարեկում՝ մէկը միւսին հանդէպ: Յարդանքի բացակայութիւն: Կամ ընդհակառակն, փոխազարձ բեքլամ:

Աւելին կայ տակաւին, մթնոլորտի հարադատ զաւակը, — զրազէտներ, որոնք այլեւս համբերութիւն չունին ուրիշի խօսքն ու գնահատութիւնը լսելու, իրենք իրենց մասին կը զրնն: Տեղի ու անտեղի:

Փառամոլութեան թշուառութիւնը:

Ու այս խաչ մըն է անցողական կեանքի այն մարդոց, որոնք շահագանդուած յաւակնութեամբ, ամէնէն քիչ յարդանքն ունին իրենց անձին ու ստեղծագործութեան հանդէպ:

Պօսքը ինքնավստահութեան մասին չէ: Ինքնավստահութիւնը անհրաժեշտ յենարանն է տաղանդին ու հանճարին (եթէ ճարուի), արժէքաւոր գործ մը ստեղծելու համար:

Ինքնահաւանութիւնն ու անհիմն մեծամտութիւնը շատերու կողմէ հեշտօրէն կրնան շփոթուիլ ինքնավստահութեան հետ: Ու այդ պարագային՝ համեստութիւնը, որ աստուածատուր շնորհն է արուեստագէտին եւ դիտանկանին, մեր էրականութեան մէջ կը գառնայ մտնամտայ:

Յոգնած ու ջգայնացած մթնոլորտ, ուր դադար մը անհրաժեշտ է, քիչ մը շունչ տունելու եւ կտրած ճանապարհը չափելու: Եթէ այդ պահը օգնէր յատերուն՝ վերադարձ մը կատարելու դէպի խարխիւր վիրկաբար վերագնահատումը նոր ճամբաներ պիտի բանար անոնց առջեւ, աւելի ամուր եւ աւեւի անսայթաք քաշելու:

Վտղքէ աւելի, այսօրուան սերունդը ինքնամտածումի եւ ինքնադատութեան պէտք ունի:

Մինակ մարդու միակ ճամբան:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

L. ՄԿՐՏԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆԸ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆԸ

ԵՒ ԱՊԱԶԳԱՅԻՆԸ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Ազգերի գոյութեան ու մանուանդ ծագման հանգամանքների վերաբերեալ հրապարակում արդէն կան այլեւայլ ուղղութեան տեսութիւններ ու նոյնպիսի համապատասխան առաստաղներու շարքը։ Եւ դեռ շարունակում են ծշակուել այդ կարգի նորանոր տեսութիւններ, ուսումնասիրութիւններ։ Այդ գործնականում անընդգրկելի բաղադրանքների մէջ ամէնից հիմնական գրոյթներին ծանօթանալն իսկ բերում է այն եզրակացութեան, որ աւհասարակ տեսական համատեղութիւն չկայ ազգային երեւոյթի թէկուզ եւ ամենապարզ ու վաւերական առանձնաշատութիւնների շուրջ։ Որքան գրիչ բռնող՝ գրեթէ այնքան տեսութիւն, այնքան ելակէտ ու չափանիշ, թէեւ նոյն ժամանակ կարելի է արձանագրել, որ գոյութիւն ունեցող բոլոր ըմբռումները վերջ է վերջոյ ըստ էութեան համախմբում են երկու մայր առանցքի շուրջ՝ հաստատական կամ ժլխ-

տական վերաբերմունք արտայայտելով ազգային երեւոյթի նկատմամբ, այդ հաշուով էլ ընդհանուր կողմնորոշում մշակելով ազգերի անցեալի ու մանուանդ ապագայի հանդէպ։

Ազգերի ծագումնաբանութեան հարցում տարակարծութիւնները կարելի է բացատրել առաջին հերթին պատմական տուեալների հասկանալի սակաւութեամբ, զրուածութեամբ ու անհամաչափութեամբ։

Յիրաւի, որքան էլ շատ բան իմանանք մարդկութեան անցեալի մասին, այնուամենայնիւ, անյայտն ու մշուշապատը անսահմանօրէն աւելի շատ է, ուղղակի անմատչելի, ուստի եւ դժուարանում է լիովին հաւաստի ընդհանրացումներ կատարելու գործը։ Բայց տարակարծութիւնների աղբիւրը միայն դա չէ, քանի որ նոյնիսկ պատմական հանրայայտ իրողութիւնները այս կամ այն դէպքում տարբեր, երբեմն էլ տրամա-

դրժօրէն հակառակ վերաբերմունքի, բընօթաբարձան ու զհաճատման են արժանանում: Նայած հետադօտողների աշխարհայեացքային մտայնութեան ու արամադրութեան, երբեմն առաջին դիժ են քաշուած որոշ իրողութիւններ եւ նըրանց կողքին անաեւուած միւսները, ընդհանրապէս ազգային երեւոյթի բացատրութիւնը կապուած է, նախընտրաբար, անպայման այսինչ կայ այնինչ երկրամասի, ի միջի այլոց, բնօթաբարձուած է մարդկային միւս հասարակութիւնների քաղաքակրթական «տարիքն» ու զէմքը: Այս պայմաններում անխուսափելի են դառնում կամայակամայ շփոթութիւնները, փոխադարձ անհամաձայնութիւնները ու նաեւ նոյնիսկ բացայայտ խեղաթիւրումները, շատ յաճախ որպէս հատուանք «կողմերի» քաղաքական ընթացիկ շահերի ու մրցումների:

Եթէ ծագումնաբանական տարակրծութիւնները պայմանաւորուած լինէին միայն պատմական տուեալների անբաւարար չափով, ապա դոնէ ազգերի արդի կեանքին վերաբերող հարցերում պէտք է որ բնդհանուր հաւատով չափանիւզ պոյութիւն ունենար, քանի որ թանձրացեալ իրականութիւնը բոլորի աչքի առջեւ է եւ ստուգման պարտաստ: Մինչդեռ այդպէս չէ: Աշխարհում կան, ինչպէս միշտ, ամենժ ու «փոքր» ազգային հասարակութիւններ, ճնշողներ ու ճընշւողներ, ծաւալապաշտներ ու գոյամարտ մղողներ, եւ այլն: Հետեւապէս իւրաքանչիւր կողմի պատկերացումներն էլ ազգային երեւոյթի նկատմամբ, այսպէս թէ այնպէս, իրենց արտացոլումն են զըտանում տեսական ու գաղափարաբանական այլեւայլ համակարգերի մէջ, դիտակցական ճանապարհով կամ ինքնաբերաբար: Մարդիկ իրենց այսօրուայ պատաստի՝ ստացած կամ ձեռք բերած ըմբռնումները ջանում են տարածել նաեւ ուղղերի ծագման ու անցեալի գոյութեան հարցերի բացատրութեան վրայ: Մտգումնաբանական կարգի «անմեղ» վէճերը երբեմն խոստովանելի կամ անխոստովանելի պատուեակ են հանդիսանում

գերազանցապէս արդիական վճիռներ ապահովելու համար: Եւ ստացում է պարազայական ուժեղի ու թոյլի, յաղթողի ու պարտուողի ճշմոջնական հակամարտութեան ժամանակակից մի պատկեր:

Ճիշդ նոյնպիսի արհեստական շփոթութիւն է տիրում եւ «ազգային», «միջազգային» ու «ապագային» հակացոթութիւնների սահմանման, ինչպէս եւ բուն ազգային, միջազգային ու ապագային իրողութիւնների փոխարարութիւնները ճշդելու ասպարէզում:

Այդ շփոթութեան պատճառը ոչ թէ այն է, որ իսկապէս դժուար է իրականում տարբերել ազգային միջազգայինց ու ապագայինից, այլ որովհետեւ որոշ շահագրգռուած կողմերի քարոզչական անպարարութիւնները խճճել են բառային արտայայտութիւնների ու նըրանց համարպատասխան իրականութիւնների փոխարարութեան հարցը, գուեաւորել ու դունափոխել նոյնիսկ ամենաանփիճելի իրողութիւնները: Այնպէս որ՝ յաճախ նոյն բառերի մէջ ասորբեր կողմեր տարբեր իմաստ են զնում, շարունակելով միեանեց «չհասկանալ», վիճել եւ նորանոր բացատրութիւններ որոնել: Այս հարցի մէջ պարզութիւն մտցընելու համար կարիք չկայ դիմել պատմական հեռաւոր վկայութիւնների, այլ բաւական է սահմանափակուել վերջին ժօտաւորապէս մէկ դարով, նրա մէջ ամփոփելով մեզ հետաքրքրող «երէկն» ու «այսօրը»:

Այստեղ չի խօսուելու այն ժամին, թէ երբ, ինչպէս եւ ինչու են գոյացել ազգերը, ինչ դեր են խաղում նրանք մարդկանց կեանքում եւ ահաստակ ինչումն է կայանում նրանց գոյութեան իմաստը: Բաւական է ասել, որ ազգերը բնական-հասարակական ինքնատեղծ երեւոյթներ են եւ անկախ այս կամ այն պարազայական տեսութիւնից ու բացատրութիւնից: Տեսութիւններն են յաջորդել ազգերին եւ ոչ թէ ընդհակառակը: այս կէտը շեշտուած է, առանց ժըխտելու համախմբող գաղափարական գործօնների դերը: Մարդիկ դարերով ապրել

են այս կամ այն ազգային միջավայրում, ազգային-հասարակական կեանքի այս կամ այն ստիճանի համաձայն, առանց կասկածի տակ գնահատելու այդ ձեռի համակեցութեան նպատակադրմանը: Եւ դոյութեան իրաւունքը, առանց միմեանց հետ չփոխելու ազգային ու ապագային իրողութիւնները: Ազգայինը համարուել է որոշակի խմբի մարդկանց հիմնական արդիւակերպ, իսկ այդ ամբողջութիւնը ներսից կամ դրսից խախտող մնացեալ ամէն բան՝ անբնական է: Եւ անընդունելի շեղում եւ խոտորում, ինչ-որ այսօր կարող ենք արտայայտել բոլորիս ծանօթ «ապագային» հասկացութեամբ:

Բայց ահա 19րդ դարակէսին, հանրային բարդ ու ետուն կեանքով ապրող Եւրոպայում անհախընթաց դործածութեան արժանացան «ազգ» եւ նրանից բխող «ազգային» հասկացութիւնները:

Դա չի նշանակում, ի հարկէ, թէ ազգերը այն ժամանակ նոր էին ստեղծւում, այլ այն՝ որ վաղուց իրար կողքի ապրող այլեւայլ մեծ ու փոքր ազգերի փոխյարաբերութիւնները զանաւում էին, վերջապէս, այն կէտի վրայ, երբ ազգային համապարփակ սկզբունքի բացառապատ հռչակումն ու ազգային ինքնատիպ եւ անկրկնելի արժէքների անվերապահ պաշտպանութիւնը ամէն ինչից նախապատիւ էր համարւում մարդկանց աչքում, երբեմնի դաւանական ու դադափարական այլ կարգի կապերի ու նկատառումների փոխարէն:

Նիշք է, որ այն ժամանակ, երբ առօրեայ հանրային խօսակցութեան մնայուն նիւթեր էին հանդիսանում զլխուտրապէս «իշխանապետութիւնները» եւ «թագաւորութիւնները», «զաւանանքները» եւ «եկեղեցիները», — ազգերի մասին խօսելու համեմատաբար շատ քիչ ասուիթներ ու հնարաւորութիւններ կային: Բայց իրականում ազգային հուններն էին պայմանաւորում հասարակական խմբերի կեանքի ընթացքը, այնտեղ էին խաշտձեւում այլեւայլ ուժեր եւ վերջին հաշուով ընդհանուր յայտարարի բերւում:

Իւրաքանչիւր թագաւորութիւն, հզօրութեան որոշ մակարդակի հասնելուց յետոյ, մգտում էր կայսրութիւն դառնալ եւ աւելի շատ ազգեր կլանել, իր սեփական պայմանները թելադրել այդ ազգերին ու, վերջին հաշուով, խախտել նրանց ինքնուրոյն արդիւակերպը: Դրան հակառակ, պաշտպանողական դիրքերում գտնուող ազգերը ուշ ուշով հետեւում էին զէպգերի ընթացքին եւ ջանում յարմար ասիթով ձերբազատուել ինքնակոչ հովանաւորութիւններից ու ապահովել սեփական ինքնավարութիւնը: Եւ ահա յամառ պատերազմներն ու ազգային-ազատագրական շարժումները յաջորդում էին միմեանց:

Ուշագրան այն է, որ ազգային ըմբռնումների բուռն ծաւալման շրջանում եւ նրան զուգընթաց՝ հրապարակ հանւեց եւ «միջազգային» հասկացութիւնը, մերթ որպէս լրացում, մերթ էլ որպէս հակադրեցութիւն: Այսինքն լրացում այն իմաստով, որ ազգային հաւաքականութիւնների դոյութեան լուազոյն երաշխեքը բոլոր ազգերի միջեւ փոխըմբռնում, դործակցութիւն հաստատելն է եւ միջազգային հանրաձանսալ, ընդհանուր կանոններ մշակելը: Այս զէպգում միջազգայինը ո՛չ միայն չի հակառում ազգայինին, այլեւ, ընդհակառակն, հաստատարում եւ օրինականացնում է նրա դոյութիւնը: Բայց դրա կողքին կայ նաեւ հակադրեցութեան հարց, քանի որ աշխարհում միշտ չէ որ ազգայինը ազնիւ դիտաւորութիւնների ու նպատակների հետ է կապւում: Պատմութիւնը վկայում է, որ մանաւանդ հզօր ու մեծապետական կողմերը, ինչպէս եւ դիշատիշ ընտղներով օժտուած ցեղերը, ուզած ժամանակ «ազգայինը» դարձնում են կոպիտ ուժի մբրազաշտ, ինքն իրենով հարբելու եւ ուրիշներին անպայման հակադրուելու պատրուակ, տարբեր երկրներում ապրող մարդկանց մշտապէս միմեանցից մեկուսացնելու եւ նրանց խորթացնելու դրօշ: Եւ ահա այս զէպգում էլ «միջազգայինը» դառնում է այդ երեւոյթին ամէն գնով հակադրելու մարդկայնական շարժում:



ազգերի գլխի վրայով դէժ մասնակի «ներկայացուցչական» համերայնութիւններ ստեղծելու փորձ, ինչ որ որսը շփոթ պարագաներում որդեգրում է միտումնաւոր ապագային ուժերի կողմից եւ խորամանկօրէն ծառայեցում ապագային քանդել նպատակներ՝ «միջազգայնականութեան» շողշողուն անունով:

«Միջազգային» ըմբռումներ մշակելու եւ տարածելու ապարէզում առանձնապէս մեծ եռանդ ցուցաբերեց Մարքսի եւ նրա համախոհների կողմից կազմակերպուած կոմունիստական շարժումը: Նոյնիսկ «Միջազգային» բառը («Ինտերնացիոնալը») զարձաւ նրա հոմանիշից է՛լ աւելի մի բան՝ կոմունիստական շարժումը փոխարինող գրեթէ միակ պործանական արտայայտութիւն: Մարքսի մինչև հիմա է՛լ, օրինակ, «Առաջին Ինտերնացիոնալ» են ասում ու անմիջապէս պատկերացնում մի ամբողջ ժամանակաշրջան ու իրականութիւն, մի ամբողջ ուսմանք ու կազմակերպութիւն՝ իր բոլոր բաղադրիչներով: Պէտք է ասել, որ «միջազգային» այդ ձեւով հրապարակ հանուելը ի սկզբանէ յղի էր ակընյայտ երկուութիւններով եւ հետագայ բոլոր շփոթութիւնները բխում են հենց այդ երկուութիւնից, հիմք հանդիսանալով քարոզչական գոյնզգոյն անպարարութիւնների համար:

Մարքսի իր համախոհների հետ հանդէս եկաւ հիմնականում ընկերային վերափոխութիւնների ծրագրով: Այդ ծրագիրը, բնականաբար, բոլոր երկրներում էլ կարող էր ոմանց հրապուրել, իսկ ուրիշներին վանել, քանի որ ընկերային կեանքի այնպիսի փոփոխութիւններ էր առաջարկում, որոնք կարող էին ընդունելի համարուել իւրաքանչիւր ազգի միայն որոշ խմբերի, այլ ոչ թէ ամբողջ ազգի համար: Նրա ծրագրերի մէջ ազգերը, որպէս այլպիսին, ինքնուրոյն տեղ չունէին, քանի որ սկզբունքով նկատի էին առնւում սոսկ դասակարգերը եւ մանաւանդ նրանցից մէկը՝ «պրոլետարիատը» (արդիւնաբերական արտադրութեան զարգացման հետեւանքով ստեղծ-

ւած ընչազուրկների դասակարգը), որի հետ էին կապուած ապագայի բոլոր յոյսերը: Բայց եւ այնպէս, հենց Մարքսը շրջանառութեան մէջ դրեց «միջազգային» հասկացութիւնը եւ այդ անունով մկրտեց իր արմատական նպատակներ հետապնդող կազմակերպութիւնը:

Ինչո՞ւմն է կայանում այստեղ երկուութիւնը: Երբ ասում է «միջազգային», անմիջապէս ենթադրում է եւ «ազգային»-ը, որովհետեւ առանց «ազգային» առկայութեան անիմաստ է «միջազգային» պատկերացումը: Պէտք է նախ ազգեր գոյութիւն ունենան, ճանաչուի նրանց գոյութեան իրաւունքը, որպէսզի յետոյ հնարուոր լինի մտածել նրանց միմեւ բոլորին վերաբերող կապեր, գործակցութիւն ու ոչնչացիլ յարաբերութիւններ հաստատելու մասին:

Բացի այդ, յարաբերութիւնները իրական միջազգային կարող են լինել միայն այն դեպքում, երբ հաստատում են ամբողջութիւն կազմող ազգերի միջև, ի դէմս նրանց կողմից լիազօրուած պետական եւ այլ մարմինների, այլ ոչ թէ նրանց այս կամ այն խառն կամ խմբերի: Մինչդեռ Մարքսը եւ նրա համեմատաբար օակաւաթիւ համախոհները եւրոպական տարբեր երկրներից դադարաբազէս համախոհուել էին մի որոշակի նեղ ծրագրի շուրջ, հետագնուում էին որոշ վերազգային նպատակ եւ յենւում տարբեր ազգերի ներսում գտնուող նայնպէս փոքրաթիւ հաստատմանի վրայ: Պարզ է, որ ինչպէս էլ բնութագրելու լինենք մարքսեան կոմունիստների գործունէութիւնը, նրա նկատմամբ լիարժէք «միջազգային» բառը գործածելը բառ էութեան անտեղի է կամ ա՛ռնուաղն թերի:

Ի հարկէ, պէտք է նայել եւ խնդրի միւս կողմից:

Մարքսի ժամանակ, երբ նրա համախոհների կողմից խօսուում էր «Միջազգային» մասին, անմիջապէս դրան կրցուում էր եւ «բանուորական» կամ «կոմունիստական» բառը, ցոյց տալու հա-

մար, որ իրականում նկատի են առնու-  
 ւում ազգերի ներսի յատկապէս բանու-  
 րական ու կոմունիստական տարրերը,  
 նրանց ընդհանուր շահերն ու ձգտումնե-  
 րը, առանց ազգային սահմանափակման  
 ու խտրութեան: Բացի այդ, յոյս դնե-  
 լով «սոցիալիստական» վերափոխիչ ա-  
 ռաքելութեան վրայ, բարձրաձայն կամ  
 լռեցիկայն այն միտքն էր առաջ քաշու-  
 թէ «չազնազործող դասակարգերի տիրա-  
 պետութիւնը միացնելուց» եւ ապա աշ-  
 խատաւորների իշխանութիւն հաստատե-  
 լուց յետոյ՝ բազմամարդ աշխատաւոր-  
 ութիւնն ինքնին նոր պայմաններում կը  
 փոխարինի ամբողջ ազգին, արդարացը-  
 նելով մղուող պայքարի ամէն ինչով մի-  
 ջազգային բնոյթը: Սակայն այս ամէնը  
 հաշուի առնելուց յետոյ էլ ոչ մի տա-  
 րածումը սկզբից եւեթ ըստ էութեան եւ  
 բառի իսկական իմաստով միջազգային  
 չէր, թէեւ միջազգայնութիւնը իր պիւան  
 ու մենաշնորհն էր համարում:

Միանգամայն հասկանալի է, թէ կո-  
 մունիստական շարժման սկզբնական եւ  
 աւելի բան թոյլ ժամանակ ինչո՞ւ էին  
 նրա կազմակերպիչներն ու դադափարա-  
 խոսները այնքան վճռական դեր տալիս  
 տարբեր ազգերի ներսում կոմունիստա-  
 կան ուսմունքին հաւատացող տարրերի  
 համախմբման ու գործակցութեան հար-  
 ցերին: Այն ժամանակ ամէն ինչ դեռ ա-  
 պագայի ծրագիր էր եւ կոմունիստական  
 շարժմանը յարողները որեւէ իշխանու-  
 թիւն կիսելու եւ այդ հողի վրայ իրար  
 դէմ կոտուելու անմիջական պատճառ չու-  
 նէին: Սակայն ժամանակի ընթացքում  
 նա՛եւ կոմունիստական կազմակերպու-  
 թիւնների ներքին խնդիրները բարդացան  
 եւ այդ հաշուով էլ նորանոր երկպառա-  
 կութիւններ առաջ եկան կոմունիստական  
 շարժման մէջ, ստեղծուեցին նոր քաղա-  
 ջական ու գաղափարական ճիւղաւորում-  
 ներ, հակառակորդ բանակներ, այդպի-  
 սով ամէնից առաջ ապացուցելով, որ  
 ազգային գոյութեան հարցերի կոյր կամ  
 յարամիս անտեսումն ու միջազգային  
 անունով կամայականորէն ապագային,

այն էլ համաշխարհային տարողութեամբ  
 նպատակներ հետապնդելը ի վերջոյ է-  
 ժան չի կարող նստել նաեւ կոմունիս-  
 տական շարժման վրայ:

Իայց անցեալ դարում եւ մեր դա-  
 րասկզբին «ազգայինի» եւ «միջազգայի-  
 նի» փոխարարներութեան վերաբերեալ  
 տարածուած ու աստիճանաբար բեւե-  
 ոացուող տեսակէտները դեռեւս սոսկ  
 տեսակէտներ էին եւ գործնականում չէին  
 անդրադառնում ազգերի կեանքի վրայ:  
 Ազգերը շարունակում էին ապրել ու կազ-  
 մակերպուել իրենց ներքին ուժերի ըն-  
 ձեւում հնարաւորութիւնների սահմա-  
 նում, միտմանակ պայքարելով տննը-  
 պաստ պայմանների դէմ: Ազգամիջեան  
 յարաբերութիւնները որոշում էին ա-  
 ւանդական հիմունքներով եւ օրուայ կա-  
 րիքների համաձայն: Ազգերի գոյութեան  
 սկզբունքը համեմատաբար քչերի կող-  
 մից էր կասկածի տակ դրոււմ բուն ազ-  
 գերի ներսում, եթէ չհաշուենք արտա-  
 ճին բազմակողմանի ճնշման հետեւանքով  
 կրած անխուսափելի կորուստները թոյլ  
 աղբերի կողմից:

Պատմական մի պղտոր պահի, սա-  
 կայն, կոմունիստները իշխանութեան  
 դուրիս անցան անկազմակերպ Ռուսաս-  
 տանում, հետզհետէ իրենց տիրապետու-  
 թիւնը հաստատելով շրջապատի բազմա-  
 թիւ ոչ-ուրու ժողովուրդների վրայ,  
 միտմանակ փորձելով վճռական ազ-  
 դեցութիւն գործել նաեւ աշխարհի միւս  
 բոլոր ժողովուրդների կեանքի մէջ: Եւ  
 ամէն տեսակ ազգային ըմբռնման դէմ  
 պայքարելն ու միջազգայնութեան անու-  
 նով իր գոյութիւնն արդարացնելը դար-  
 ձաւ նորահաստատ իշխանութեան առաջ-  
 նահանգի խնդիրներից մէկը: Հայաստա-  
 նը պտուկելով կոմունիստական իշխա-  
 նութեան զօտում, բնականաբար ենթա-  
 կայ եղաւ այդ աշխարհում տիրող պայ-  
 մաններին ու կրեց արգային հարցում  
 գործադրուած բոլոր միջոցառումների  
 անմիջական եւ այն էլ ամէնից ծանր հե-  
 տեւանքները: Հենց այդ պարագան է, որ  
 առիթ է հանդիսանում այս յօդուածի  
 համար՝ ա՛յս հարցադրումով:

ի գէպ, աւելորդ չէ նշել, որ ազգային սկզբունքը մերժելու մենաշնորհը կոմունիստներին չի պատկանում: Միշտ էլ եղել են եւ կան այլեւայլ կենտրոնախոյ տարրեր, որոնց մտքին ու սրտին ոչինչ չի ասում այդային կազմակերպուած կեանքի սկզբունքը. նրանք ամէն տեսակ ապագային շարժումների ու նշանախօսքերի կամուրջ հարկատուներն են ու երկրպագուները: Բայց իրականում այդպիսիները ոչ մի բնականոն երկրում վճարական կշիռ ու իշխանութիւն չունեն եւ չեն էլ կարող ունենալ: Սակայն ամէնուրեք, որտեղ հաստատուած է կոմունիստական իշխանութիւն, անմիջապէս հրապարակ են դալիս եւ անաջ թաշուած մանաւանդ կատաղի աղպամերժները:

Ինչո՞ւ: Որովհետեւ մինչեւ հիմա չի պատահել, որ սեւէ փոքր ժողովուրդ իր ազատ կամքով կոմունիստական իշխանութիւն հաստատի իր սեփական երկրում. այդպիսի իշխանութիւններ պարտադրուել են բացառապէս դրսի աւելի հզօր, ասարածուած բառով սասած, իմպերիալիստական ուժերի կողմից: Ուստի եւ հզօր իր հայեցողութեամբ ընտրել է իրեն ձեռնտու ղեկավար «անձնակազմերը», հրապարակը ողողել իր թիսած «լողունքներով», իր «ստիբական» գրոշմը դրել ամբողջ բնակչութեան կեանքի բոլոր բնազատականների վրայ: Մենք դիտենք, որ այժմ այսպէս կոչուած «Միջազգային» կոմունիստական շարժումը, ըստ կեանքի ենթակայ օրէնքների, պատակտուել եւ հակամարտ ճամբաների է բաժանուել: Գիտենք նաեւ, որ պատակտումը հետեւանք է առաջին հերթին տարբեր ազգային կոմունիստական իշխանութիւնների ու նաեւ նրանց կողմից կառավարուող երկրների միջեւ գոյութիւն ունեցող անհաշտ վէճերի ու շահերի: Այսպիսով, մեր առջեւ դարձեալ ծառանում է «ազգային», «միջազգային» եւ «ապագայային» փոխարարութեան հարցը:

Թէ ինչ է նշանակում ազգայինը՝ յայտնի է բոլորիս մանկութիւնից ի վեր: Դա համակեցութեան, կազմակերպուածութեան, զանազան կապերի որոշա-

կի համակարգ է: Այն ամէնը, ինչ որ անտեսում, խախտում է այդ համակարգը կամ դուրս դալիս նրա ոլորտից՝ պարզապէս ապագային է, ինչպէս էլ որ արտայայտուելու լինի: Ազգայինն ու ապագայինը ի բնէ փոխադարձաբար հերքում են միմեանց: Այս հարցում կողմնորոշուելը գործնականում ոչ մի դժուարութիւն չի ներկայացնում, քանի որ՝ այնքան որոշակի են բեւեռները:

Բաւական տարբեր է «միջազգային» գործը:

Այս յօդուածում արդէն նշուեց, որ երբ ասում է «միջազգային»՝ անմիջապէս ենթադրում է եւ «ազգայինը», որովհետեւ առանց «ազգայինի» առկայութեան անիմաստ է «միջազգայինի» պատկերացումը, եթէ այն չի նոյնացում «համաշխարհայինի» հետ, որը կարող է, իր հերթին, ամէն տեսակ ձեւեր ընդունել: Իրականում այդպէս էլ պէտք է լինի: Նրանք, ովքեր պաշտօնապէս դաւանում են «միջազգայնութեան» սկզբունքը, պէտք է անվերապահօրէն եւ գործնականում հիմնական միւսը ու արժէք համարէին նաեւ ազգը եւ ըստ այնմ էլ վարէին իրենց քաղաքականութիւնը: Նրանք պէտք է ազգերին հնարաւորութիւն տային նախ կազմակերպուել ու ամբանալ եւ ապա միայն մտածել ազգամիջեան բեղմնաւոր գործակցութեան մասին: Բայց դա արդէն կը լինէր սոցալտութեան յաղթանակ ու բռնակալութեան ճակատագրական պարտութիւն, ինչ որ բնաւ ձեռնտու չէ, ասենք, խորհրդային կոմունիստական իշխանութիւնների: Ուստի՝ խօսքով անընդհատ քարոզում է հրապուրիչ «միջազգայնութիւն», իսկ գործնականում տարւում ազգայինը ամէն գնով ապագային վերածելու հետեւողական, յամառ ու անզիջում քաղաքականութիւն:

«Միջազգայնութիւնը» (ինքնընդունակալիզմը) խորհրդային պաշտօնական ու քարոզական լեզուով յաճախ ուղեկցւում է «սոցիալիստական» կամ «պրոլետարական» պիտակներով: Դա եւս պատահական չէ եւ ունի իր տար-

մարտնութիւնը: Իրենց «ուզդափառ» կոմունիստական առումով միջազգայնական համարողները մտքի մէջ երբեք նըկատի չունեն ամբողջական ազգերը՝ նորանց ընդհանուր սպրումներով, աւանդոյթներով, շահերով ու ձգտումներով, այլ կառչում են ներազգային որեւէ խումբի ու հոսանքի տնունին, որպէսզի ուզած պահին կամայական յայտարարութիւններ տնեն այդ անունով: Եւ կացութեան անհնթթութիւնն այստեղ է պարզուում: Բանից դուրս է զայիս, որ զանազան ազգերի առանձին խաւեր՝ պրոլետարներ կամ կոմունիստներ, կարող են կազմակերպուել ու գործակցել իրենց ազգերի գլխի վրայով, այդ ազգերից անկախ ու նրանց հակառակ, միեւնոյն ժամանակ ինքնակոչ կերպով իրենց համարելով ամբողջ ազգի միակ՝ «ինտերնացիոնալիստ» ներկայացուցիչներ: Իսկ ազգի մնացեալ Հիմնական զանգուածները կարող են նուազազոյն դէպքում յայտարարուել «բուրժուական» կամ «չեւտազիմական ազգայնականներ», չխօսելով աւելի կծու «մեծարանքներ» մասին: Բայց այդ ձեւով ունէ ազգի մէջ անխորտիբ բոլոր զբաղմունքների տէր մարդիկ կարող են գործակցել ուրիշ ազգերի նոյն զբաղմունքի տէր մարդկանց հետ ու իրենց հուսկել «միջազգայնականներ»՝ «ինտերնացիոնալիստ» թիւը հասցընելով Հարիւրների ու հազարների:

Յայտնի է, օրինակ, որ տարբեր երկրների գողերի ու մաքաննեղների միջև եւս որոշ պարագաներում կարող է «արգինաւէտ» համերաշխութիւն ու գործակցութիւն հաստատուել, բայց ի՞նչ կապ ունի դա իրական միջազգայնութեան հետ:

Միջազգայնութիւնը կարող է իմաստ ունենալ եւ իրականութիւն դառնալ միայն ամբողջական ազգերի միջև՝ նըրանց ազատորէն ընտրուած ներկայացուցչական մարմինների միջոցով, այլ ոչ թէ՛ ունէ ազգի առանձին խմբերի եւ ուրիշ ազգերի նոյնպիսի խմբերի միջև, զանազան «գործարքներ» ու լարաշուռումներ ճանապարհով:

«Ազգային» ու «միջազգային» փոխարարութեան հարցը այնքան է խորճըւած Խորհրդային Միութեան մէջ, այնքան տկնայառ է հակասութիւնը պաշտօնական գաղափարախօսութեան եւ բուն իրականութեան միջև, որ խորհրդային շատ հեղինակներ մեծ եռանդով ջանում են ելք փնտռել եւ հաշտութեան կամուրջ դրել ազգային ու միջազգային վրայով: Նրանք սովորաբար յայտարարում են, թէ իրական հակասութիւն չկայ ազգային եւ միջազգային միջև: Եւ յիշատի, այդպիսի հակասութիւն չպէ՛տք է լինի, և թէ՛ զաւանուող միջազգայինն իսկապէ՛ս միջազգային է, այլ ոչ թէ՛ ազգերը խարճական միջոցներով ապագայինացնելու խայծ ու գէնք: Բայց սա մարդկային տրամաբանութեան թելադրանքն է: Իրական կեանքում իրողութիւնները ուրիշ տեսք ու դոյն ունեն: Տիրող իշխանութիւնը, իր տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցներով, յամաուորէն փորձում է խափանել ճշուած ազգերի ինքնակազմակերպման ճանապարհները եւ վերացական «միջազգայնութիւն» քարոզելու ու պարտադրելու գրօշի ներքոյ՝ հետապնդել բազայառ կամ թաքուն ապագայինացման քաղաքականութիւնը:

Բնականաբար, բոլորովին տարբեր հարց է, թէ՛ ե՛րբ եւ ինչքան է յաջողւում այդ քաղաքականութիւնը: Տուեալ դէպքում հիմնականը իշխանաւորների մտայնութիւնը հասկանալն է, ձգտման ուղղութիւնը որոշելը, եւ եթէ՛ նրանց քաղաքականութիւնը երբեմն կամ յաճախ հակառակ արդիւնք է տալիս՝ դա, ինչպէս ասում է, «նրանց մեղքը չէ», այլ անխորտ բոլոր ազգերի ներսում ներկայ դիմադրական ոգու եւ հաստատակամութեան:

Ազգային եւ միջազգային փոխարարութեան հարցը բնականաբար շատ աւելի լայն լուսարանութիւններ պահանջում, քան հնարաւոր եղաւ ուրուագծել այս փոքրիկ յօդուածում: Այստեղ գիտակցաբար ուշադրութիւնը կենտրոնացւեց յատկապէս կոմունիստական իրակա-

նութեան վրայ այն պարզ պատճառով, որ միայն կոմունիստներն իշխանութեան տակ դառնուող երկրներում է ազգային երեսփոխաններն ու ըմբռնումներն զէմ պայքարը զարձեղ դեր-պետական ուժերի պետական քաղաքականութեան ու դադարախախտութեան մղելու ուժերից մէկը: Դարձեալ այնտե՛ղ է, որ ապագա-դայնացման կարթիւրը քողարկուած են «միջազգայնութեան» հիւթայի խայծե-րով, ըստ սովորութեան սկզբում թիւ-րիմացութեան մէջ պցում ամէն աստի-ճանի անտեղեկաներին, իսկ ի վերջոյ անխուսափելիօրէն ըմբոստութեան մը-լում փոքր ու ճնշուած ազգերի պատկա-նող նոյնիսկ բազմաթիւ սթափուած ու իսկապէս գիտակից կոմունիստներին:

Ոչ մի ազգ չի կազմուած միայն կո-մունիստներինց եւ հետեւապէս սեւէ ազգ-ամբողջօրին պատասխանատու չի կտրող լինել կոմունիստական վերնաստի զա-նազան ազգավնաս դործարքներէ համար: Մա՛նաւանդ՝ որ նման դործարքները, որպէս կանոն, բխում են սպառազէն բա-նակի ու ոստիկանութեան ուժին կոթնած

տիրող ազգերի վարիչներինց, այլ ոչ թէ անպայման նուաճուած երկրի ի պաշտո-նէ ղեկավարներինց: Արդի կոմունիստա-կան աշխարհի իրադարձութիւնները ար-դէն բազմիցս վկայել են, թէ թուով եւ ծանրութեամբ ուժեղ ազգերի մօտ ի՛նչ բովանդակութիւն է դրւում «միջազգայ-նութիւն» բառի մէջ եւ ինչպէ՛ս է գոր-ծադրուած այն նուաճուած ազգերի նը-կատմամբ: Պերճախօս վկայութիւններ կան եւ այն մասին, որ նուաճուած ու ճնշուած ազգերը առնուազն գիտակցում են իրենց կախեալ կացութեան անբնա-կանոն լինելը եւ ըստ այնմ էլ փակու-ղուց դուրս գալու յուսալի ելքեր որո-նում, որովհետեւ «միջազգայնի» հուն մտածը չի կարող առանց այլեւայլու-թեան ուրանալ սեփական զարգայինը»: Անպայման ճիշդ դրոյթ է, որ բուր պա-րագաներում էլ, առանց վերապահու-թեան, ազգայինն ու միջազգայինը մի-մեանց պէտք է երաշխաւորեն, այլ ոչ թէ հերքեն ու հակասեն: Մնում է որո-շել միայն, թէ ինչն է համապատասխա-նում այդ դրոյթին եւ ինչը՝ ոչ:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ



ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

**ՄՈՒՏՔԸ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ**

Արիլիսի գայրոյթն է իմ  
պատմութեամ Յիւր...  
ՀՈՄԵՐՈՍ — Իլիական

արտագրում մի քանի անգամ, ապա այդ  
Գեղարուեստական արձակի իմ ու-  
սումնասիրութիւններէ եւ անհատական  
ընթերցանութեան ժամանակ, ես նկատել  
եմ, որ բազմաթիւ գրողներ, հայ եւ օ-  
տար, իրենց մի որեւէ երկի մասին վը-  
րայ մեծ ուշադրութիւն են դարձրել:

Նրանք իրենց ստեղծագործութիւն-  
ների սկիզբն սկսել են մէկ կամ աւելի  
նախադասութիւններով, որոնք ընթեր-  
ցողին մտաւոր գաղափար են տալիս  
տուեալ երկի բովանդակութեան մասին  
կամ էլ առաջնորդում են այդ երկը:

Դրանք՝ այդ մուտքերը, անմիջական  
բնայթ են կրում եւ գրուած են լինում  
անպիսի հաստատական երանգով, որ  
գրողին զնում են ականատեսի դերում:

Տուեալ մուտքերի շահն այն է յի-  
նում, որ դրանք ընթերցողի ուշադրու-  
թիւնն իրենց վրայ են հրաւիրում, թա-  
կարդում են նրան, եւ հետաքրքրութիւն  
են առաջ բերում, մուտքերը ստեղծագոր-  
ծական գեղեցիկ օրինակներ են հանդի-  
սանում:

\*\*\*

Վերջերս ես կարդացի անգլերէնով  
գրող մի կին գրողի մի յօդուածը իր  
գրուածքների մուտքերի եւ վերջաւորու-  
թիւնների մասին:

Նա գրում է, որ եթէ իբ պատմը-  
ւածքների ձեռագրերը, մինչեւ հրատա-  
րակութեան յանձնելը, փոփոխում է ու  
պատմուածքների մուտքերն ու վերջաւո-

րութիւնները փոփոխութեան է ենթար-  
կում մի քանի տասնեակ անգամ:

Նախապէս, ես ասացի, թէ ինչքան  
է շահում գեղարուեստական արձակի մի  
երկ ուշադրութեամբ շարադրուած մուտ-  
քով, եւ, ինչպէս յիշեալ կին գրողն է աս-  
ում, նաեւ եւ վերջով:

Իմ այս գրութեան մէջ ես ցանկա-  
նում եմ մի քանի օրինակներ բերել հայ  
եւ օտար անուանի գրողների ստեղծա-  
գործական մուտքերից (սկիզբներէից):

\*\*

Մուտքերի մի քանի նմուշներ օտար  
գրողներից (\*):

ՊՂԱՏՈՆ (427 — 347)  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Առում են, թէ յոյն այդ անուանի  
փիլիսոփան եւ հասարակագէտը յիսուն  
անգամ փոխել է իր «Հանրապետութիւն»  
գրուածքի մուտքը եւ վերջապէս ընդու-  
նել է այսպէս.

«Երեկ Արիստոնի որդու՝ Գլուկոնի  
հետ Պիրէա գնացի: Ը ե Բանի որ փառա-  
տօնի առաջին հանդիսութիւնն էր, ես աւ-  
զնցի ե՛ւ ազօրեյլ ատուածուհուս, ե՛ւ  
տեսնել արարողութիւնը...»:

(\*) Օտար եւ հայ գրողներից արտագրուած  
մուտքերը միայն օրինակներ են: Այս գրութիւնը  
շուրջիկ մի ակնարկ է եւ ոչ ամբողջական աւ-  
տանմասիրութիւն: Ս. Ս.

Իր այդ մուտքով Պղատորը ցոյց է տուել, որ ո՛չ միայն մեծ փիլիսոփայ է եւ հասարակագէտ, այլեւ մեծ գրող է: Ոչինչ այնպէս չի հաստատում ճշմարտութիւնը, ինչպէս վկայութիւնը: Եւ Պղատորը ճշմարիտ կամ իրական դարձընելու համար իր գրուածքի սկիզբը վկայակոչում է «Արիստոնի որդի Գլուկոնին»: Յետոյ, նա ինչքա՞ն պարզօրէն է գրում, ինչքա՞ն անմիջական: Եւ սուսուրութիւնն ա՛յն է, որ նա զրուցում է հենց այնպէս: Պղատորն «Համրապետութիւն» գործը աշխարհի մարդկանց մաքուրի վրայ ամէնէն շատ ազդած գրութիւններէն մէկն է եւ դարձանալի չէ, որ այդպէս է:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼ (Առաջին դար) ԱԻՅՏԱՐԱՆ**

«Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն»: Այսպիսի անզուգական մուտքով է սկսում Յովհաննէս Առաքեալը Յիսուսի կեանքի եւ ուսմունքի իր պատմութիւնը: Ես չեմ կարծում, որ համաշխարհային ամբողջ արձակում մի որեւէ երկ սկսում է այսպիսի մի գոհար մուտքով: Յովհաննէս Առաքեալն ամբողջ Արարչագործութիւնը տուն է երկու տողով, եւ ասել է անմիջականօրէն, խոր հաւատքով իր ասածի նկատմամբ: Նա իր այդ երեք կարճ նախադասութիւններով Յիսուսի Յայտնութիւնը շարունակութիւն է դարձրել Արարչագործութեանը, Սկզբին: Երեւի միայն սրբերին է վերապահւած ստեղծագործական այդպիսի մի տաղանդ:

**ՋՈՂԷՅ ԲԵՂԻԷՐ (1864 - 1938) «ՏՐԻՍՏԱՆ ԵՒ ԻԶՈՂԻԷ» (ՎԷՍ)**

«Տրիստան եւ Իզոլիէն միջնադարեան ժողովրդական սիրավէպ է, թերեւս ամէնից շատ ցաւ պատճառող եւ երբեք չմոռացուող սիրավէպերից մէկն էր ողբերգական բովանդակութեամբ:

Վերաւոր Տրիստանը բուժում է գեղեցիկ Իզոլիէի պատրաստած ամենարուժիչ բալնանից... Եւ հետագայում, երբ Տրիստանը հորս է տանում Իզոլիէին իր թաղաւոր հորեղբոր համար, Անպլիտ, նաւի մրայ նրանք պատահաբար իմուծ են կախարդական մի հեղուկ եւ սիրահարում են իրար վրայ այնպիսի աստուկութեամբ, որ նրանք այլեւս միմեանց մոռանալ չէին կարող: Տրիստանի թաղաւոր հորեղբայրն իմանալով իր կնոջ (Իզոլիէի) եւ դարմիկի սիրայ մասին, ուղում է մտանդել նրան: Տրիստանը փախչում է եւ տարադրութեան մէջ մեռնում է՝ միշտ տողորուելով Իզոլիէի սէրից...

Միջնադարեան ժողովրդական այդ բանահիստութիւնը զեղեցիկ մի աւանդույթ է եւ ունի իր բովանդակութեամբ բազմաթիւ փոփոխութիւններ: Անպլիտի, Փրանսացի եւ գերմանացի շատ դրողներ ներշնչուելով այդ սիրավէպից փորձել են այն վերածակել:

Գերմանացի երգահան Ռիչարդ Վադները (1813 - 1883) գրել է նոյնանուն մի օպերա: Կան զրուած նաեւ վէպեր ու եօթ վիպերգներ:

Իւրաքանչիւր դրող Տրիստան եւ Իզոլիէի (Երբեմն Տրիստարմ եւ Իզոլի) պատմութիւնը իւրովի է սկսում, բայց մեր կարծիքով շատ զեղեցիկ է սկսել Փրանսացի գրող Ջոզէֆ Բէզիէրը:

Ահա այն.  
«Տեա՛րք, եթէ ուզում էք լսել սիրայ եւ մահուան մի գերագանց պատմութիւն...»:

Այստեղ մեկնաբանութիւնն աւելորդ է:

Անչուշտ, այսպիսի մի մուտքով սկսուող վէպն ամէն մարդ պիտի ցանկանար կարդալ:

**ԼՆԻ ՏՈՒՍՏՈՅ (1828 - 1910) «ԱՆՆԱ ԿԱՐԷՆԻՆԱ»**

«Երջանիկ բնութեամբ միամտան երբանիկ եմ, իւրաքանչիւր բնութեամբ դրժախտ է իւրովի...»:

Այսպիսի մի ճակատագրական եւ

Թերեւս փորձուած ու ստուգուած իմաստութեամբ է սկսել Նեւ Տոյտան իր «Աննա Կարէնիան» վէպը, որն իր տեսակի մէջ համարեա՛ւ անդուշակեան է :

ԷՐՆԵՍԹ ԼԷՄԻՆԿՈՒԷՅ (1898 - 1961)  
Նորեղիտան դափնեկիր՝ 1954ին  
1) «Ո՞ՒՄ ՀԱՄԱՐ ԵՆ  
ՂՕՂԱՆՁՈՒՄ ԶԱՆԳԵՐԸ»

«Նա պառկել էր ափսոսի ծառերի տակ, սոցիոներից քստաւած շագանակագոյն ասեղների վրայ...» :

2) «ՀՐԱԾ-ԵՇՏ ԶԵՆՔԻՆ»

«Յարորդ տարի շատ յաղթանակներ եղան...» :

Հէմինկուէյի առաջին մուտքն անմիջական է, ուղղակի եւ թելադրում է, որ «սոցիոների ասեղների վրայ պառկած մարդն անցեալ է ունեցել եւ հեղինակը հիմա նոր է սկսում պատմել նրա մասին :

Երկրորդ մուտքը թիրազւում է, որ «յարորդ տարուայ յաղթանակների» մասին այդ պրքում իսոք չի լինելու, այլ վէպը պատմելու է անցնող տարուայ մասին, եւ թերեւս կրուած պարտութիւնների մասին :

Երկու մուտքերն էլ խորհրդաւոր բնոյթի են եւ ընթերցողը կարդալով այդ երկու վէպերի այդ սկիզբները՝ չի կարող կարդալ դրանք ամբողջութեամբ :

Ռ. ՔԱՄԻԻ (1913 - 1960)  
Նորեղիտան դափնեկիր՝ 1952ին  
«ՕՏԱՐԱԿԱՆԸ»

«Մայրս մահացել է այսօր, քերտու երէկ, ես վստահ չեմ...» :

Այսպէս է սկսում Քամիւի, թերեւս մեր դարի երկրորդ կէտում գրուած ամէնից լաւ վէպերից՝ «Օտարականը» :

«Օտարականը» գրուած է առաջին դէմքով, եւ այդ վէպի մուտքն անմիջապէս ցոյց է տալիս, որ վէպի հերոսի եւ նրա մօր միջեւ մի առանձին մօտիկութիւն չի եղել եւ նրա մօր մահը դեր է ունենալու վէպի հետագայ գործողութիւններում :

ԵԱՍՈՒՆԱՐԻ ՔԱՂԱՊԱԹԱ  
Նորեղիտան մրցանակակիր՝ 1968ին  
«ՁԻՆՆՈՏ ԵՐԿԻՐ»

«Գնացքը երկար գետնուզուց դուրս գալով՝ մտաւ ձիւնոտ երկիրը...» :

Այս հասարակացի . դրող, 1968 թուի Նորեղիտան գրական դափնեկիր Քաղապաթայի «Ձիւնոտ երկիր» վէպի մուտքն է :

Այս մուտքը նոյնպէս հաստատական է այնքան, որ թւում է, թէ հեղինակը այնտեղ էր, «երկար գետնուզուց» ելքի մօտ, երբ գնացքը դուրս եկաւ եւ մտաւ «ձիւնոտ երկիրը» :

Այս վիպակը դեռ չկարդացած, ընթերցողը սկզբից զգում է, որ վէպի գործողութիւնները տեղի են ունենալու մի ցուրտ երկրում եւ հեղինակը բաներ պիտի պատմի, որոնք իրականութիւն պիտի թուան, թէեւ իրականութիւնն արուեստ չէ :

Ասենք, որ Եասունարի Քաղապաթան գրում է մարդկային հոգեկան մենակութեան մասին, որը զգում ենք մենք :

Միայն Ամերիկայում «Ձիւնոտ երկիր» վիպակը սպասուել է մի քանի հարիւր հազար օրինակ : Այս տարի այն լույս տեսաւ եօթներորդ հրատարակութեամբ :

\*\*\*

Մուտքերի երկու մուշներ հայ գրողներին :

Մեր այս գրութեան մէջ մենք մէջբերումներ կատարեցինք միջազգային հռչակի տէր օտար գրողների ստեղծագործական մուտքերից : Այդ գրողներից երեքը նոյնիսկ Նորեղիտան դափնեկիրներ են :

Հայերէնի «փոքրիկութեան» եւ մեր երկիրը միջազգային պետական միաւոր չհամարուելու պատճառներով, հայ գրողներին շատ քիչը «միջազգային հռչակ» ունեն եւ չեն էլ արժանացել Նորեղիտան մրցանակի :

Սակայն, հայ գրողներն իրենց տալանդներով ո՛չ միայն յետ չեն միջազ-



պային անունի տէր գրողներէց, այլեւ դրողներ շատերը զլուստնցնում են վերջիններէն:

Նոյնը կարելի է ասել նաեւ Հայ գրողներէ զեղարուեստական արձակի մուտքերի կամ սկիզբների մասին: Բերէնք միայն երեք օրինակ:

ԸԱՖՖԻ (1835 - 1888) «Խենթ»

«Բայագէղը պաշարուած էր...»:

Այսպէս է սկսում մեր գրականութեան վիպապատմական դարացի Հեռուորդ անծայրածիր պաշարի տէր՝ Բաֆֆու մի կատարեալ վէպ «անդիսացող» «Խենթը»:

Եթէ Բաֆֆու այդ մուտքը համեմատելու լինենք միջազգային հուշի տէր գրողներէ մեր կողմից արտագրուած մուտքերի հետ, այս կը տեսնենք, որ Յովհաննէս Առաքելայից բացի, միւսների սկզբները չեն կարող մրցել Բաֆֆու այդ սկզբի հետ:

«Բայագէղը պաշարուած էր...»: Ով ճանաչում է Ասիան եւ գիտէ, թէ հայկական այդ բերդը պաշարողները ովքեր են եղել, սարսափով կարող է երեւակայել, թէ ինչ էր սպասուած պաշարուածներին, պարտութեան զէպքում:

«Բայագէղը պաշարուած էր...»: Այս մի հատիկ նախադասութիւնը մի պատմութիւն է ներկայացնում: Բաֆֆու ներկայ սերունդների ընթերցողների վրայ թերեւս այդ նախադասութիւնն այն սպառնալիքներ չթողի, ինչ այն թողել է տասնիններորդ դարի վերջերի ընթերցողների վրայ, որոնց մտքերում դեռ թարմ էին 1877-78 թուերի ռուս-թրքական պատերազմից հայ ժողովրդի կրած արհաւիրքները:

Սքանչելի վէպ է Բաֆֆու «Խենթը»: Նոյնքան սքանչելի է այդ վէպի մուտքը: Այն ուղղակի է, հաստատական, խորհրդաւոր, մեծիմաստ եւ ընթերցողներին դաւադրող, անսպասան կարդալու ամբողջ վէպը:

Մեծ տաղանդները գիտեն դրել: Բաֆֆին այդ մեծերից էր:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ (1869-1923) «Գիֆո»

«Գիւլագի Համբոյի տունը կռիւ էր ընկել...»:

Այսպէս է սկսում Թումանեանի աննման «Գիֆո»ը, որը մանկական ողբերգութիւնն է, եւ որի նմանը համաշխարհային մանկական գրականութեան մէջ, թերեւս միայն զանկայի գրող Հանս Անդերսենի (1805-1875) «Լուցկիներ վաճառող աղջիկը» համեմատուի:

«Գիւլագի Համբոյի տունը կռիւ էր ընկել...»:

Միայն Յովհաննէս Թումանեանի նրման պարզ, անսթեւեթ մի գրողը կարող է այսպէս սկսել իր պատմութիւնը:

Այդ «կռիւ» նշանակալից է, որովհետեւ Հենց այդտեղից էլ սկսում է փոքրիկ Գիֆոյի ողբերգութիւնը: Համբոն ուզում էր Գիֆոյին քաղաք տանել ծառայութեան տալ: Գիֆոյի մայրը չէր ուզում, որովհետեւ, երեւի, մայրապէս զգում էր, որ իր սիրասուն որդին կարող է այլեւս չվերադառնալ... Այդտեղից էլ «կռիւ»:

Փոքրիկ ու գոթախառ Գիֆոյի պատմութիւնն ամէն մարդու յայտնի է: Ջարմանալի չէ, որ «Գիֆո» կարդացած ամէն մի ընթերցող այդ պատմութիւնը յիշում է «Գիւլագի Համբոյի տունը կռիւ էր ընկել» շնորհիվ մուտքից:

Սակայն մեծատաղանդ Թումանեանը անդուզական է նաեւ «Գիֆո» — սրասաճլմիկ, սրտակեղեք վերջով, երբ տան տանիքը բարձրացած իր որդուն սպասող ժօր դրկից փոքրիկ Գալուն իր նոր բացուած լեզուով իր եղբորն է կանչում:

«— Այի՛, ալի՛, հէյ Գիֆալ, հէ՛յ...»:

Հայերէնից բացի, մի ուրիշ լեզուով չկայ գրուած մի ուրիշ «Գիֆո»: Եւ չկայ գիֆոյեան այդպիսի մուտք եւ վերջ:

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ



Փ Ա Պ Լ Օ  
Ն Ե Ր Ո Ւ Ի Տ Ա  
ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԽՈՐ  
(1971)

■

## I

«Oubliez tout ce que vous avez  
appris, commencez la rêve».

1971 Հոկտեմբերի 22ին, Շուէտի Ակադեմիայի նուգէրեան դրական մրցանակի միւրին հռչակաւոր մրցանակը յատկացուց չիլիքի բանաստեղծ Փապլօ Ներուային:

Եւ ստիկա, ըստ ինքեան շատ բան կը նշանակէ:

Քսաներորդ դարու արագութեան, մարդամեքենայացման, ճանճրոյթներու եւ անհեթեթեան ալեկոծումները անտեսելով «Բանաստեղծութեան դարը անցած է այլեւս» առաջ նախադասութիւններ ծածող մտաւորականներէն ու ջննդատներէն: Մարդիկ, արդարեւ, անդամ մը եւս կու գան Հաստատելու, թէ բանաստեղծութիւնը կենդանի է, կա՛յ ու պիտի մնայ ա՛յնքան

ատեն, որ կանք մենք, որովհետեւ անիկա երազ է, երանգ, իսկ երազը՝ երանական պահ չէ միայն եւ հոգեկան անդորրութիւնը ըլլալէ աւելի իմաստ կը բովանդակէ: Որովհետեւ, երազը կեդրոնական հանգոյցն է իրականին (այսինքն՝ կեանքի չոր առօրեային) եւ յաւիտենականին (այսինքն՝ հոգեկան եւ միատեք աշխարհին) միջեւ:

Երազը չոր ճշմարտութիւն չէ: Յստակ ու զօրաւոր լոյս մը չէ, եւ ոչ ալ անթափանց եւ խորհրդաւոր աշխարհ մը:

Այս երկու ուղիներուն, զիրար ամբողջացնող եւ յաճախ մէկը միւսին հակադրուող աշխարհներուն միջեւ ստեղծուած պորտակապն է երազը, ուր մարդը կը պարզուի իր առօրեայ բոլոր հոգերէն, կ'ապրի, կը զգայ բնագանցական ու ենթագիտակցական իր զսպանակներէն մղուած, անկաշկանդ, ճշմարիտ, իր էութեան, ջիղերուն ու ներաշխարհին իսկական կեանքը:

Առօրեան, չոր ճշմարտութիւնը եւ անոր անդրադարձներն ու ցնցումները բացայայտ իրողութիւններ են մարդու համար: Պարզ խօսքով՝ լուսարձակներ: Իսկ հոգեկանն ու անոր շուրջ զարճող արբանեակները՝ խորհրդաւոր մթութիւններ:

Երազը բանաստեղծութիւն է: Թափանցիկ, լուսաւոր եւ ծոգուն ջուրերուն նման խորունկ ճշմարտութիւն:

Անիկա անտառ մըն է, ուր թէ՛ լոյսը եւ թէ՛ խորհրդաւոր-մթութիւնները մերուած են իրարու մէջ, ինչ որ է պարագան անտառին:

Յաճախ հակադիր եւ հրեման լրացուցիչ երկու բեւեռները իրարու կապող աշխարհն է եւ այդ կապէն նոր էակ մը, շունչ մը արարող ո՛ւժն է, բանաստեղծութիւնը:

II

Անշուշտ, ասանց այս մուտքին կարելի չէր խօսիլ Փապլո Ներուտայի մասին:

Որովհետեւ Փապլո Ներուտա այն մարդն է, այն Եւրաշխարհը, որուն մէջ պիտի հանդիպինք թէ՛ երազին եւ թէ՛ ճշմարտութեան, ու տակաւին երրորդ գոյութեան մը:

Արդարեւ, բանաստեղծին տողերէն մենք կը զգանք զանազան բոյրերու խուժումը, զոր սեղմ գիծերով կարելի է ամփոփել հետեւեալ կէտերուն մէջ.

- Կուսակցական մարդուն ներկայութիւնը հաստատող բոյրը:
- Ազգային ազատագրական շարժումներու մասնակցած մարտիկին արեան ջերմութիւնը:
- Լատին Ամերիկայի անտառներուն փոշիին եւ կոյս պատկերներուն թուալըը ապացուցող ձայնը:
- Ռորհրդապաշտ եւ գերիբապաշտ իր արեան յտակ ալիքները:
- Հողը, դիւղը, հասկերն ու ծաղիկները եւ հողին բոյրը:
- Ու մա'նաւանդ ըմբոստ սիրահարին սրտին երգը, ըմբոստ մարդուն, գիւղացի մարդուն ամուր նկարագիրը հաստատող ազատութեան կանչը:
- Ազատութեան սրբազան պահանջին ի խնդիր տուայտոյ, տաղանայտ, յաճախ ըմբոստացող, եւ մերթ Ընդ մերթ բողոքող, ցոյցեր կազմակերպող ի նպաստ համեստ դասակարգին, այսինքն՝ բանուորին, հանքադրծին եւ գիւղացիին...

III

Ո՞վ է ՆԵՐՈՒՏԱ

Ներուտա ծնած է 1904ին, Զիլիի Փարալ քաղաքին մէջ: Աւագորնի անունով Առնկուսթօ Ռիքարտօ Նէֆթալի Բէէն, որ հետագային ինքզինք կը մկրտէ գրականութեան աւագանին մէջ ու կը կոչուի Փապլօ Ներուտա: Տարի մը շանցած՝ Ներուտայի ծնողքը կը փոխադրուի Գոթեան նահանգի հիւսիսային փոքր քաղաքը՝ Թոմոքօ:

Մանուկ հասակին՝ Ներուտա կը փորձէ խաղալ թուղթին հետ: Այս մանկութիւնը եւ անոր փորձառութիւններն ու յիշատակները յաւիտենապէս պիտի ընկերակցէին իրեն, հանգիստանալով իր ճամբորդութիւններուն հաւատարիմ ընկերը, որ պիտի տրոփէր իր ջիղերուն իւրաքանչիւր լարին հետ:

Յօսելով այդ շրջանին մասին, Ներուտա ըսած է.

«Ծնայ 1904ին. 1914էն առաջ, երբ եօթ-ութ տարեկան մնալով էի, սկսայ ստանաւորներ գրել: Հոգիս մէջ կը հեղեղուէր Հարաւայիմ Ամերիկայի երկար ձմեռը: Յամախ ստուերիս մէջ բնացայ: Գրելու համար պէտք ունէի երգիչներու վրայ կատարուող անձրեւներու պարիմ, ծաղկեղէն յաճախ փոքորիկներու լայն թեւերուն, որոնք կը հարուածէին գիւղերն ու յեռները:

«Սոսկալի եւ տնտեսութեան գիշերի մը յանձնուելէ ետք, առաւօտեան շոգը կը բացուէր եւ իր ջերմ ու ջնուշիչ լեզուակներով կը փաթկէր մարդը, կենքանիները, բնակարանները, երազները, անձ ու գիւ: Ինչպէս նաեւ աներաժեշտութիւնը կը զգայի ջուրի ա՛յն կաթիլներուն, որոնք մեր տան առաստաղէն կը կաթկթէին եւ կ'ըլլային, միայն իրենք կ'ըլլային մանկութեանս դաշնակը:

«Հայրս արդէն խօսած էր ինձի դաշնակ մը գնելու իր ցանկութեան մասին. մանկուցս իմ հարցումներէս, անգամ մը գրեց «գաշնակ ունի՞նք» բացատրութիւնը եւ կախեց մեր տան մէջ: Ինչպէս նաեւ շափեց դուռները, որոնցմէ ներս պիտի մտնէր մեղեդիներով բեռնաւոր այդ այցելուն:

«Բայց տարիները անցան, իսկ ժամայրուած այցելուն չեկաւ: Եւ մնացին այդ կաթիլները, իրրեւ հսկայ եւ քազմալար միակ դաշնակ, որոնք կլանեցին կեանքս:

«Առաջին անձրեւին հետ, մայրս տան մէջ, հոս ու հոն ամառներ կը քածնէր, ջուր կը կաթէին տնտեսաբաններին հատիկները եւ կը ծնէր ամառներուն բիւրեղեայ բազմալար երաժշտութիւնը, որուն հունչերէն ոչ մէկը կը խեղդուէր սմբուն ընթացքին: Այս երաժշտութիւնը՝ մանկութեանս հետ ընկերացաւ ինձի: Վերլուծեցի եւ տարբարակեցի զինք, որ քափանցեց սրտիս եւ բանաստեղծութեանս մէջ»:

Բանաստեղծութիւն փորձող եւ անդադար թուղթեր մրտող մանուկին երկրորդ խաղը եղաւ անյառ ընթերցումը:

Իրեն համար գիրքերը, իր իսկ բացատրութեամբ, որ գրուեցաւ «Մտնկութիւն և բանաստեղծութիւն» ամբողջական ժողովածուի յառաջարանին մէջ՝ «անտառի մը նման էին, ուր կորսուեցայ եւ կը կորսուիմ տակաւին»: Շատ բան կարդաց սղանական ու Փրանսական դրահանութենէն: Մասնաւորաբար խորհրդապաշտ, սպաւորապաշտ եւ դերիբապաշտ ժառանգութենէն. եւ դեռ՝ ուսանական դրահանութեան հետաքրքրաշարժ ու խորունկ վերլուծումներով լեցուն երկերը, որոնց ծանօթացաւ, իր իսկ բացատրութեամբ զսփրտակ ու

լայն ժպիտով բանաստեղծուհի՝ կապրիելլա Միսքրայի թելադրութեամբ, ա՛յն Միսքրային, որ Նոպէլեան մրցանակի կապակցութեամբ կանխեց Ներուտան, ստանալով հռչակաւոր մրցանակը 1945ին :



ԲԱՆԱՍՏԵՆԾԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԵՒ ՓԱՌԳԻ ՄԸ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

1921ին, պատանի շիլիցին ուսանող է՝ Սանթրակոյի համալսարանը : Ան կը Հետեւի ուսուցչութեան, մանկավարժութեան, Փրանսական լեզուի եւ գրականութեան դասընթացներուն : Սակայն, երեք տարի ետք, կը լքէ համալսարանը եւ Պը սկսի յաճախել Յրեատրիք-Լանս գեղերային ինստիտուտը, միաժամանակ մաս կազմելով «ԼՅՅ» ամսաթերթի խմբագրական կազմին :

13 տարեկանին, «Առաւօտ» օրաթերթին մէջ բանաստեղծութիւններ ստորադրող պատանիին անունը կը սկսի փայլիլ : 3 տարի անց, արդէն կը սիրահարուի Փօլ Վերլէնի եւ Միւլլի Փրիւտտի, անգիր ընելու աստիճան կ'իւրացնէ անոնց վաստակը, որ իր առաջին քայլերուն վրայ կը թողու ազգեցութեան խոր նշաններ :

Ներուտա երկուներէ մէջ է :

Այդ տարի, կ'արձանագրէ բանաստեղծական իր առաջին յաղթանակը՝ Արդարեւ, «Գարնան տօն» անունով՝ Զիլիի համալսարանական ուսանողներու միութեան կազմակերպած բանաստեղծական մրցանակին ներկայացուած հարիւրաւոր բանաստեղծութիւններուն մէջէն, առաջնութիւնը կը լահի Ներուտայի ստորագրած «Տօնին երգը» անուն չբրթուածը : Ներուտայի ուղարուութիւնը կ'ըլլայ անսահման :

1923ին, երբ լոյս կը տեսնէ «Արշալոյսը» անուն բանաստեղծական իր անդրանիկ հատորը, Ներուտա իբրեւ նորը եւ արասկարգ շեշտ ունեցող բանաստեղծ՝ ճանչցուած անուն կը դառնայ :

1927ին, կը նշանակուի Բանկուէի դեսպան : Եւ այդ օրէն կը սկսի իր պանդխտութիւնը :

1933ին, Մատրիտ է Ներուտա : Կրկին դեսպան : Հոն կը ծանօթանայ սպանական արդի բանաստեղծութեան հիմնադիրներէն Յրեատրիքօ Կարսիս Լորքայի, որ նոյն տարին իսկ, շնորհալից կերպով պիտի յայտարարէր. — «Աետասիլ Լատին Ամերիկայի մեծագոյն բանաստեղծը» :

1934ին, Ներուտա դեսպան է Պարչիլոնայի, ուր Մատրիտի համալսարանին մէջ, Լորքան Հանրութեան կը ներկայացնէ «Լատին Ամերիկայի մեծագոյն բանաստեղծը», որ կ'արտասանէ ինքնագիր բանաստեղծութիւններ :

1935ին, Մատրիտի մէջ, «Բանաստեղծները կ'ողջունեն Փապիօ Ներուտան» անունին տակ կազմակերպուած հանդիսութեան մը ընթացքին՝ Ներուտա կը մեծարուի շնորհալից կերպով :

Արդարեւ, «Լատին Ամերիկայի մեծագոյն բանաստեղծը յայտարարութիւնը կատարող Լորքան, այս անգամ մամուլի մէջ, կրկին հանդէս կու գայ, ստորագրելով շիլիցի բանաստեղծը վերլուծող յօդուած մը, ուր, ի միջի այլոց կը գրէ. — «Փապիօ Ներուտա իբրև մարդ մըն է, ար գիտէ, քէ սրինգն ու ծիծեռնակը անլի շատ բանաստեղծական են, էսմ պաղ արձան մը» :

Մակայն Ներուտա, Լորքա, Թաֆայէլ Ալպէրթի, Ալեքսանտրի եւ Սպասնիոյ երիտասարդ բանաստեղծութեան յոյսը՝ Միկէլ Լերնանտէզի բարեկուսութիւնը կարճատեւ կ'ըլլայ:

1936ին, կը սկսի Սպանիոյ քաղաքացիական պատերազմը: Ներուտա անմիջապէս դիմելու ֆաշիզմի եւ զայն մարմնաւորող Ֆրանքոյի դէմ՝ դէն ի ձեռին:

Յուլիս 1936ին, կառքերը խռնուած են ազատութեան մարտիկներով: Ութ հազար հոգիներ կը տարուին կառքերով եւ կը դնդակահարուին:

Կրանասայի մէջ, Վիզնարի մօտ տեղ մը, աստղերուն դէմ, գորշ փոսի մը մէջ կ'իջնայ Լորքան, աստղերուն եւ անհունին սիրոյն: Բանաստեղծները անկարելի է, որ ապրէին դերի կեանք մը:

Եւ այդպէ՛ս եղաւ: Ներուտա ազուած այս սպանդէն, ազազային պիտի գրէր «Սպանիան սրտիս մէջ» բանաստեղծութեան իր հատորը, որ պիտի հանդիսանար յառաջաբաններէն մէկը Արեւմուտքի ազատագրական եւ յեղափոխական գրականութեան:

1939ին, կը հաստատուի Փարիզ: Լոն, իբրեւ դէսպան, կը զրադի գաղթական սպանացիներով, պաշտպանելով անոնց շահերը:

1945ին, կ'ընտրուի Երեւանի անդամ: 1945ին, կ'անդամակցի Ձիլիի Համայնագար կուսակցութեան:

Երեք տարի ետք, 1948ին, Երեւանի տոջեւ Ներուտա կ'արտասանէ Կոնգրէս Գիտելլայի մենատիրական քաղաքականութիւնը մաղկող «Կը դասաւայարուիմ» խորագրեալ յախուռն իր ճառը: Կը հրահանգուի ձերբակալել բանաստեղծը, սակայն ժողովուրդը տէր կը կանգնի իրեն:

1949ին, կրկին Փարիզ է Ներուտա: Մաս կը կազմէ «Համաշխարհային Ռազադութեան Պաշտպաններ»ու առաջին համագումարի ժիւրիին:

1 Յունիս 1949ին, կը մեկնի Պորտուգալիոյ Միութիւն եւ կը մասնակցի Պուլիսի Ժնեղեան 150ամեակին:

1950ին, կը հրատարակէ իր նշանաւոր գործերէն «Անկցի փայտահասար» եւ կը շահի Վարչախոյ մէջ գումարաւոր «Համաշխարհային Ռազադութեան Պաշտպաններ»ու երկրորդ համագումարին խաղաղութեան մրցանակը:

Ասիկա պատճառ կը հանդիսանայ, որ բանաստեղծը ստանայ պանդան հրաւերներ:

1951ին, կ'այցելէ Իտալիա, Միացեալ Նահանգներ, Ժողովրդային Ձիւնաստան եւ Պորտուգալիոյ Միութիւն, եւ բոլոր երկիրներուն մէջ ալ կ'ունենայ դասախօսական ելոյթներ եւ կ'արտասանէ իր գրականութեան բնորոշ կատրոններէն:

1951ին, կը վերադառնայ Փարիզ, սակայն կը վտարուի «Բալաֆալան» արգիլուած աշխատանք տարած ըլլալու ամբաստանութեամբ: Կ'անցնի Գաֆրի, ուր կը գրէ «Ասիայ հավիթը» պոեման, որ հետագային բազմաթիւ լեզուներու կը թարգմանուի:

1952ին, հայրենիք է Ներուտա:

1953ին, կը ստանայ Ստալինեան Ռազադութեան մրցանակը:

1955ին, կը հիմնէ «Ձիլի» ամսաթերթը:

1957ին, Ձիլիի գրողներու միութեան նախագահ կ'ընտրուի եւ կը հրատարակէ հետագային բազմազարդ տպագրական արժանոցած իր «Սիրոյ հարիւր Բերքուածներ» հատորը:

1958ին, կը շրջի Եւրոպայի եւ Ամերիկայի երկիրները:

1960ին Գուլպա է ներուտա :

1961ին, երկրորդ անգամ ըլլալով կ'այցելէ Գուլպա եւ Մեքսիկո, միջամտելու համար իր բարեկամ-արուեստագէտին՝ Սէթու Քուրէի ուղտա արձակման : Նոյն տարին, «Լեզամտա» հրատարակութիւնը կը հրատարակէ Ներուտայի «Սիրոյ քամն երգեր եւ յուսանաւ երգ մը» հատորին միջոներորդ օրինակը :

1965ին, կը ժամանկցի Պերլինի մէջ դուստրուող զբոսներու համալուարչային համագումարին :

1971ին, դեռ պահի պաշտօնի կը կողուի եւ իր երկիրը կը ներկայացնէ Փարիզի մէջ :

IV

Բանաստեղծական իր ժամանակութիւններէն են .

«Արշայայտ»	1923
«Սիրոյ քամն քերթուածներ եւ յուսանաւ երգ մը»	1924
«Մարդուն անվերջանալի փորձը»	1924
«Մատանիներ» (արձակ բանաստեղծութիւն)	1925
«Բնակութիւն երկրի վրայ» (հատոր Ա.)	1933
«Բնակութիւն երկրի վրայ» (հատոր Բ.)	1935
«Երգ վերադարձի»	1937
«Սպանիան սրտիս մէջ»	1937
«Ճամբորդութիւններ»	1939
«Երգ Ստալինկրատին»	1942
«Բնակութիւն երկրի վրայ» (հատոր Գ.)	1943
«Ընդհանրական երգը»	1950
«Անկցի փայտանաւը»	1950
«Խաղողի ողկոյզն ու հաղը»	1951
«Այգին ու գեփիւտը»	1954
«Սկզբնական երգեր»	1954
«Սկզբնական նոր երգեր»	1956
«Սիրոյ հարիւր քերթուածներ»	1957
«Սկզբնական երգերու Գ. գիրքը»	1959
«Նաւարկում եւ վերադարձ»	1960
«Զիլիի քարակոփները»	1961
«Հուրին Սուրը»	1971

Ու տակաւին քաղաքական, յուշագրական եւ բանաստեղծական շարք մը երկարաշունչ պոեմներ, որոնց կարգին անհրաժեշտ է յիշել «Սիրոյ նոր երգ Ստալինկրատին», «Երգ Պալիվարին», «Ողջոյն Հիւսիսին եւ ողջոյն Ստալինկրատին», «Ամերիկայի երկիրներուն», «Ասիոյ տափաստաններուն», «Հեծնակներուն երգերը», եւ այլն... : Այս վերջինը Գուլպայի յեղափոխութեան մասին գրուած 42 բանաստեղծութիւններէ բաղկացեալ հատոր մըն է, որ լոյս տեսաւ Հաւանայի մէջ 1960ին, յեղափոխութեան օրերուն եւ արժանաշու 25 տպագրութեան :

Եւ այս բոլոր հատորները, 1966ին, ամփոփուեցան «Ընդհանուր երկեր»ու ամբողջական եւ գեղեցիկ շարքին մէջ, որ լոյս տեսաւ Պուէնոս Այրէսի «Լուսաստա» հրատարակչատունէն :

Ներուտայի վերջերս հրատարակուած գործերը եղան «Իլալ ներկայի յուշագրութիւնը» եւ «Հուրին Սուրը» անուն հատորները :

Իսլա Նեկրան այն կղզին է, ուր բանաստեղծը, Հայրենիք գտնուած գրերուն, իր արձակուրդը կը բաժնէր Isla Negraյի, Santiagoյի եւ Valparaisoյի միջեւ:



Լատին Ամերիկայի դրականութիւնը յատկանշող ամէնէն ցցուն յատկանիշը ի՛ր հողին կապուելու, անկէ սնանելու եւ իր ներքին հարցերը պաշտպանելու իրողութիւնն է: Մ'անաւարար բանաստեղծութիւնը խորունկ եւ ամուր կերպով արժատացած է անցեալի պայթուցիկ փոփոխութիւններուն հետ, որոնցմէ արեւցան Լատին Ամերիկայի արդի երեսակայութեան ամէնէն դորաւոր եւ ամէնէն ջինջ զեփուտներն ու քամիները: Որովհետեւ, անիկա մարդով եւ մարդու թարոյսականութեամբ չի դրաղիւր միայն. այլ՝ ուժերու կերպով ներկայութեան մը վերածուելով՝ կը կերտէ ինքզինք, մերթ ընդ մերթ կը ճզմէ, կ'ապրի առօրեային մէջ, ա'յն առօրեային, որ հակառակ իր հարցականներէն ձերբազատուելու ճիշդութիւն՝ կ'ունենայ անհամողիչ արդիւնք մը:

Այս բանաստեղծութեան մօտ նշմարելի է սերտ կապակցութիւններու գոյութիւնը: Անիկա չ'ընդունիր բաժանումը լուսինին եւ աստղին, հարթութիւնն եւ գետին, մարդուն եւ օրացոյցին, մանուկներուն եւ վայրի ծաղիկներուն, կայծակին եւ տիգրիսի, բեղունութեան եւ արեան, ու դեռ՝ բաժանումը հացին ու կնոջ:

Սակայն, հակառակ ընկերվարական տեսութիւններու եւ երբեմն մարքսիստ վարդապետութիւններու ուղղակի՝ ազդեցութեան, տնիկա, այդ բանաստեղծութիւնը իր զարգացման ծիրին մէջ դուրս չելաւ սպանական դպրոցներու շրջանակներէն: Կամ համաշխարհային դպրոցներու գրականագիտական սահմաններու փշաթելերէն, ի մասնաւորի՝ զերբիապաշտութեան եւ խորհրդրդապաշտութեան երկրամասերէն:

V

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ

«Արշալոյս»ի շրջանն է, որուն ընթացքին կ'երեւայ Ներուտայի բարեկարգութիւնը՝ ոճը՝ աւանդական տարազի մը մէջ: Ըսելով եւր թարգմանիկ հանդերձներով, կ'իշխայ գրական ա'յն երգչախումբին լարերուն վրայ, որոնց թփրատացումներով երիտասարդացաւ բանաստեղծը: Ներուտա, Հետադային, այդ Հանգրուանը սահմանեց հետեւեալ վիճակացոյցով. «Հոն կան անծախսութիւնը, սրտնք դեռ կը ձուլուին ձայնիս մէջ»:

Ներուտայի այս շրջանի ստեղծագործութիւնները այս կամ այն չափով ազդուած են Սթեֆան Մալարմէի, Փոլ Վերլէնի եւ Սիլվի Փրիւտտի գրականութիւնէն:

ԵՐԿՐՈՐԿ ՀԱՆԳՐՈՒԱՆ

«Սիրոյ քան բերքուածնք եւ յուսահատ քրգ մը», որ գանազան անհիւններէ պիտած շարունակութիւնն ու զարգացումն է առաջին Հանգրուանին: Հոս, բանաստեղծութեան համը չափական է եւ խորհրդածական. արտգութիւնը վստահաւոր ներկայութիւն մը չէ բանաստեղծութեան համար,



ընդհակառակն, բարեբար եւ օժանդակ զաշնակէց մը, որովհետեւ անիկա իր հետ միասին չի տանիր պատկերները, այլ՝ կը մերուի մարդկային տրամաբանական կառոյցին մէջ, ու պատկերները կը խօսին: Փայլօ ներուտայի մօտ պատկերները տպաւորապաշտ շունչ մը ունին: Կը տպաւորեն ընթերցողը, կը փոխադրեն այլ աշխարհ:

Եւ այսպէս, սիրային բանաստեղծութիւնները ունեցան այս կեանքը: Բանաստեղծութիւններուն յաջողեցին նորերը, մինչեւ որ ծնաւ նոր գործ մը՝ «Մարդուն անվերջանալի փորձը» անուն հատորը:

«Փորձը», որ ներուտայինն էր, նախապէս ուրիշներու կողմէ ալ արպարացիօրէն փորձուած այն ճիգն է, որ կը կոչուի զանցեալէն յոգուելու եւ անբնագատուելու ճիգը:

1961ին, իր մէկ դասախօսութեան ընթացքին, ներուտայն ժամանակաշրջանը կը բնորոշէր այսպէս.

«Այդ օրերուն, այսինքն՝ 1924-1926 տարեշրջանին, Սքեֆան Մայարմէէն եւ Կիլամ Ափայիններէն ազդուած՝ վնասցի անբնագատուելի կէտողրական ու էքսպանսիան կատարող օրէնքներէն: Մինչեւ այն աստիճան, որ ոչնչաց անճանկան նամակներս իսկ յամբարձրել այս ձեռով»:

Եւ ուրիշ գրողի մը ընթացքին.

«Մարդուն անվերջանալի փորձը» իմ գործերու ամենէն քիչ կարգաւածն է եւ ուսումնասիրուածը, — կը հաստատէ ներուտայն եւ կը շարունակէ, — եսկառակ այն ճշմարտութեան, որ անկա բանաստեղծական կարեւորագոյն գործերէն է»:

ԵՐՐՈՐԳԻ ՀԱՆԿՐՈՒՄ

ԵՆ «ՁԱՐՄԱՆԱԼԻ ԲԱՆՍՏԵՂԾԸ»

Արդարեւ, իր զրահանութեան կարեւորագոյն եւ ամենէն ժողովրդական գործերը հրատարակուեցան այս շրջանին: Այդ գործերը կը կոչուին. «Բնակութիւն երկրի վրայ» (Ա. և Բ. հատոր), «Հինգ քարեր նետողները», «Բռնաւթիւն եւ տառապանք» եւ մանաւանդ երկու միլիոն տպաքանակի արժանացած «Սիրոյ հարիւր քերթուածները», որ մինչեւ այսօր անգիր կը կարգացուի Հատին Ամերիկայի եւ ի մասնաւորի Պիլիի նախակրթարանի, միջնակարգի, երկրորդականի աշակերտներուն եւ նոյնիսկ համալսարանական ուսանողութեան կողմէ:

Սէրը ներուտայի համար ընդհանրական է եւ կինը իր աշխարհի երկրամասերէն մէկը: Սիրոյ բնազդական զգացումը եւ բանաստեղծութիւններ գրելը, անկայունութեան ընդմէջէն յախտենականութեան հասնելու տենչին երկու տարբեր կերպերն են: Արմատական բնաջնջումը եւ ժարդկային հողի անձկութիւններ աւելի խորապէս կը զգացուին ու կ'արտայայտուին, երբ յաւիտենականութեան ձգտելու տենչը կը սկսի նուազիլ, մինչ բանաստեղծը կը խորատուցուի իր էութեան խորը եւ կը ջանայ ամէն զնով վառ պահել յաւիտենականութեան ձգտելու տենչանքը:

- • • ժամանակ մը, ովկիտոսի մը նման,
- Անորոշ վերք մը նոր կազմաւորուած էակի մը նման
- կը շրջապատեն հոգիիս գորեզ արմատը՝
- եւստեղծով, վիրաւարելով վաստակութեան յեմարսնը:
- Սիրուն ի՛նչ գորեզ կը սրտիւ՜...

Այս հանգրուանին մէջ, մենք կը գտնուինք ճշմարիտ Ներուտային արտաբեր, «գարմանայի բանաստեղծ» Ներուտայի, մակդիր մը, որուն շուրջ համաձայնեցան գրականութեան քննադատներն ու մեկնարանները: Ա՛յն բանաստեղծութիւններուն առջեւ, որոնք մեզի կը տօնակն զգալ այն զգացողութիւնը, թէ կը գտնուինք հողմապտոյտի մը մէջ: Նման Հարաւային Ամերիկայի ջրարուխէ պատկերին, որ պղտոր ու խորհրդաւոր շարժումներով կը փախչի մեր տեսողութենէն, եւ սակայն, վայրկեանապէս չի յանգիր, այլ կը մնայ կախուած մեր թարթիչներէն՝ ինչպէս երազը:

Եւ քննադատները զուր տեղ կը փորձեն վերլուծել ստիկա, որ կը պարտադրէ ինքզինք, ինչպէս ծիածանը: Եւ բանաստեղծը հետանալով շոր իրականութիւններու ենթահողէն, կը սուղի ինքն իր մէջ, կը զալարուի հոգիի ու վիրանին մէջ, կը դառնայ երազային գիւսահար ողբերգութիւն, թազնապ, դառնութիւն, կիրք, վերստին բարձրանալու եւ մեզի հետ քիչ մը շնչելու համար:

Այս հանգրուանին մէջ, ինչպէս լաւագոյնս կը լուսաւորէ «Բնակարան երկրի վրայ» հատորներու աշխարհն ու մթնոլորտային վերիվայրումները, Ներուտա կը գիմարարձէ ի՞ր իսկ գոյութեամբ: Նիւթի որոնման հարց չունի: Դուրս կլլու ոչ մէկ ձեւ ու ծրագրուած սահմաններ: Ոճը՝ կատաղի դիմակներու տակ՝ յաճախ բիրտ, նախամարդկային կոչութեամբ՝ կ'օտտոտէ տիրութենէն մտատանջութիւն, զէպի ա՛յն մտատանջութիւնը, որ կը բխի կեանքի եւ աշխարհի տխուր տեսիլքներէն, դիւսահար երազներէն ու հեղձուցիչ առօրեային:

Մահը, առանձնութիւնը, վիշտը, ձախողութիւնը, ներքին ծարաւը, պարտաճանաչութիւնը, տխրութիւնը, մոխիրը, շարունակական գահավիժումը ինքն իր ներաշխարհին մէջ եւ աշխարհէն անջատուելու անվերջանալի փորձերը կը հանդիսանան Ներուտայի այս շրջանի գրականութեան բաղկացուցիչ տարրերը:

Հոյակաւ այս վիճակը արտայայտող բանաստեղծութիւններ են՝ «Բնաստեղծութեան արուեստը», «Վալս», «Ամերիկեան սէր», ինչպէս վերջին շրջանին գրուած «Զիւաւրը միայնակ», «Լուսիւն կը պահանջեմ» եւ որբի խորագրերն են ունեցող շարք մը այլ գերթուածներ:

**ՉՈՐՐՈՐԴ ԷՍԵՆՏԻԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ**

Իրեւ գերիւրապաշտ՝ Ներուտա փորձեց որսալ կեանքը, ցոյց տալ զայն բազադրող եւ մէկը միւսին տառապանքն ու անշնչի մթնոլորտը ծանրացնող միւտորները: Իրեն համար պատուաւ ջուրջի կտոր մըն է աշխարհը, պատուած սուգով, որուն զէմ յանդիման բանաստեղծին կը մնայ միայն մէկ ուղի՝ փախուստը...

Սակայն զէպի ո՛ւր:

Ներուտա կը մատնանչէ ճամբան.

Դէպի այն անսահման աշխարհը, որ կը կոչուի Մարդկային Ես: Ուր կը լուռի քանդումի, խորտակման, վլասակին ճարճատուճները, փշրուած հայելիներուն աչք խոցող եւ սիրտ պատառոտող մութ փայլերը: Ծիւղ այս պատճառով, Ներուտա նման է Հեթանոս տեսիլքներու, ուրուականներու, որոնք կը լրտեսեն գիշերային խաւարը, որ հալածեց զինք, ճիւղ այնպէս, ինչպէս աշխարհը սարսափեցուց բանաստեղծը եւ պարտադրեց անոր ապրիլ սուգին ողջ տարիքը, եւ դեռ՝ շնչել վլասակներուն փոշին:

Ներուտայի զարմանալի բանաստեղծ մը ըլլալու իրականութիւնը առտուել եւս կը յստականայ հոս, երբ կը տեսնենք բանաստեղծը իր ներքին սուղումին, դահուկման արարքին մէջ, խեղճուելու եւ իրրեւ մարդ չկարենալ ձեւաւորուելու եւ բիրեզանալու սարսափելի ճշմարտութեան բեմին վրայ: Եւ այս բոլորը, առանց վախնալու մահէն կամ մեծ յոյսեր դնելու հանդերձալ կեանքին վրայ, առանց նկատելու մահը կեանքի տառապանքներէն ազատելու միջոց մը: Ըստ որում ազրիլը, բանաստեղծին մօտ ստեղծած են անձնականութիւն մը, որ կեանքը կը ներկայացնէ «վայրագ զուրի մը նման, որ ինքզինք տանջելով եւ ազմկելով» կը յառաջանայ:

Ներուտայի համար քանչէրի են եւ նախնականին խորհուրդները կը հանդիսանան քարերը, փլատակները, եռզը, գինին, հացը, քիթեռնիկը, կրահը, կինը, փղուկը, առասպելներու հերոսներն ու ռուբրը, մինչ՝ զգեստները, դերձակները, հաշուապահները, երկմտերները, վերելակի պաշտօնեաները, քոնսիէրթները, քանակներու պաշտօնեան, սպանակներն ու միառականները առօրեայ կեանքին կէ՛ղծ խորհուրդներն են:

Ներուտայ իր բանաստեղծութիւններուն մէջ, սիրոյ չափ ալ կ'արտայայտուի այս հարցերուն ժառին.

«Ատեններ կան, երբ մարդ ըլլալէ կը յօգնիս»:

Կամ արունձնութեան տխուր տառապանքը կը դրսեւորէ, այսպէս.  
 «Զիս կը շրջապատեն լով,  
 Առարկաները,  
 Անոնք շուրջս պատերազ կը նմանին»:

Իսկ ուրիշ բանաստեղծութեան մը մէջ.

«Եւ արշալոյսին՝ փողոցներուն պէս դատարկեալ եմ ես,  
 Եւ դռագոցով խաւարէն գտառ ափիս վրայ ոչինչ կայ:

Հեռու ամէն բանէ, ա՛հ, հեռու ամէն բանէ:

Ճամբորդութեան ժամն է ահա, ո՛վ դատարկեալ քնակարան...»

Իսկ «Հուրիմ տարը» հատորը, որ Ներուտայի վերջին գործն է, մէկէ աւելի անգամներ Գրական Նույնիւն Մրցանակին մասնակցած եւ մրցանակին չափրացած բանաստեղծին նոյն մրցանակը ապահովող գիրքն է: Այսինքն՝ մրցանակաւոր գիրքը, որ արդէն իսկ թարգմանուած է փորթուկալերէնի եւ Ֆրանսերէնի:

Անիկա, իբր թեմա կ'ընդգրկէ մեզի շատ ծանօթ նիւթ մը:  
 Կարծես Ադամին եւ Եւային պատմութեան մէկ նոր երեսն է:

Զիլիի ազգային հեքիաթներու ակերէն սնած եւ բանահիւս-հեքիաթները գրականութեան վերածած պոեմն է «Հուրիմ տարը»:

«Յրատօ» այն պատրիարքն է, որ կ'ենթարկուի ստեղծագործութեան նախափորձերուն, իսկ «Ռեպրոն» (Եւան) կը յանձնուի բնութեան: Բայց Ֆլամտիի անցեալը կ'իրագործուի Ռոզին ներկայով մարմնաւորելու իրականութեան մէջ:

Այս իրականութիւնը երկար չի տևեր, որովհետև իրագործուած իրականութիւնը անհաստատ գոյութիւն մըն է, որ կը քանդուի չար ոգիներու ներթափանցումէն ետք: Սակայն, հակառակ այս խորտակման, առկայ է սէրը, կանգուն է կամքը եւ զէնքերը վար չառած բանաստեղծը կ'երգէ.

Այսպէս,

«Ոչ ցեքեկ էր եւ ոչ լոյս: Ոչիմչ եղիւ  
Բացի լուսփեցէն՝  
Բերքէն կանաչ...»

Անտառը պատեց իր լեզուն  
Եւ ձայները թափանցեցին խաւարին մէջ:

. . . . .

Ինչո՞ւ նայիմքն կայծքան է, որ կը դողայ  
Ատանց աւելցնելու իր թափանցիկ հայեացքին վրայ  
Փայլն այն, որուն շերտէն ու հորիւն կը բռնկի,  
Եւ որ միայն, միայն իրմով կը վառի:  
Ինչո՞ւ քայլերն կրծողին կը հետանան,  
Ինչո՞ւ ձայներն մննդուկներուն, որոնք ունին մետաղէ ոտներ  
Կուռն երկեմի կը թակեն...

«Հարիմ սուրբ» բանաստեղծական հատորին մէջ, բնութեան, Հրաբուխներու, ջրաբուխներու, ովկիանոսներու, եւ դեռ՝ աշխարհագրական ու երկրաբանական այլ նկարագրութիւններէն զատ կը հանդիպինք հին շաստուածներու եւ երկրային արքայազորութեան առաջին օրէն իսկ գոյութիւն ունեցող նախամարդու հոգիին, գիշերները՝ մարդկային միտքը խուզարկող եւ փոթորկող զանազան Հարցադրումներու, Ինչպիսիք են.

Կարելի՞ է շաստուածներու օժանդակութեամբ եւ բնութեան ներքոր միջամտութեամբ չարը զատել բարիէն,  
Արդեօք սէրը նոյնինքն տառապանքն է,  
Միթէ սէրը երա՞զ է, թէ չոր ճշմարտութիւն... Փիլիսոփայան,  
Մահուան ու կեանքին միջեւ ի՞նչ դաշնադիր կնքուած է,  
Ի՞նչն է մարդուն աղբիւրը, նախնական իր արմատը. ինչպէ՞ս սկսաւ:

Արդարեւ, «Հարիմ սուրբ» էջերուն մէջ Ներուտա բանաստեղծը, երագի յաճախանքէն իսկ տուտջ, հոգեհարցի մը ճարտարութեամբ, թողութի սպիտակ անհունին վրայ կ'ողեկուչէ եւ կը զետեղէ մարդիկը, բնութեան փոփոխութեան զանազան Հանգրուանները. ապա կու գայ երազը — որ սէր է — գտնելու, ճշգիւլու եւ դրոշմելու համար այս խորհրդաւոր կեանքին, երկրին քառասային տարրերը տարբալուծող եւ անոր խրթնաբանութիւնները բացատրող եզրակացութիւնը:

«Հարիմ սուրբ» նախամարդէն սկսեալ ծաւալող մարդկային հոգեկան հանդոյցները դրսեւորող հոգետարբալուծաբանն է:

Այլ խօսքով՝ «Հարիմ սուրբ» աշխարհի առաջին արարին առաջնակարգ լեզուն է:

VI

Ներուտա չժնաց ինքնամոզումի, եւ ինք իր շուրջ դարձող արբանակը չեղաւ միայն: Ընդհակառակն, ձերբազատուեցաւ երբեմն, եղաւ բուրբովին գանադան բեւեռները Ձիլիի: Տխուր եւ ջիւղ սիրոյ երգիչ՝ այնքան երգեց սէրը, որ չըջան մը կոշուեցաւ: «Սիրոյ սիրեբազակ բանաստեղծը»:

Սակայն, Ներուտայի մօտ սէրը՝ կնոջ մարմնի սահմաններէն անցնող իրականութիւն մըն է: Սէրը կարօտախաբ զգայնութեան թարգմանն է, ընդհանրականին հասնելու, մարդուն եւ աշխարհին միջեւ հաղորդակցութեան կամուրջ մը հաստատելու միակ ազդակը:

Կինը ուրիշ բան չէ, եթէ ոչ խորհրդանիշ մը եւ, ի մասնաւորի իր հայրենիքին՝ Ձիլիին ներկայացուցիչը, այն հայրենիքին, զոր սիրեց Ներուտա մեծ ու խորունկ սիրով, ապրեցաւ, այդ հայրենիքի ազատութեան սիրոյն, զարգացման, երջանկացման ի խնդիր:

Համեստ ընտանիքի գաւկիւն բանաստեղծութիւններուն ընդմէջէն կը հանդիպինք բնիկ ինքնակերպան՝ Հնդիկներուն, որոնք իրենց ապրուուրը կ'ապահովէին վանառեւոյժ ձեռային եւ սննդեղէն արտադրութիւններ: «Ընդհանրակամ երգչին էջերը, — որ երկարաշունչ, գիւցազներգական եւ մարդկային փորձառութիւնը նկարագրող ու հոգեազբաբաշունչ սարբեր քերթուածներէ բաղկացած պոեմա մըն է, — եւ ուրիշ շարք մը քերթուածները լաւազոյնս կ'ապացուցանեն Հնդիկներուն նկատմամբ ունեցած իր սէրը»:

Ներուտա կ'ապրի անոնց տագնապներն ու տառապանքները:

Արդարեւ, մարդ է Ներուտա: «Մարդիկը» խորագրեալ բանաստեղծութիւնը սոյն յոյդերուն եւ զգայնութեան հաղորդակցութեան միջոցն է: Հոգիներու հեռամայն մը:

Այսպէս,

«Ո՛վ մարդկային դուն լաւ սեռ, եւ կորեկի ով գաւակ,  
Ո՛վ յակիմբէ եւ փերուգէ լաւ սերունդ  
Փակէ այ՛բնոս հիմա,  
Նախ քան մեկնիմք դէպի ծով,  
Ուր կը ծնին տառապանքներ եւ ցաւեր...»

Հոյը, գիւղացին, բանուորը, ծառը, ծագիկը, ցորենի հասկերն ու կորեկը զանազան պատկերներով կը բաղձապատկուին Ներուտայի դրական ժառանգութեան մէջ: Ան պաշտպանն է գիւղացիին եւ բանուորին եւ այս երկու խաւերը շահագործող աւատապետներուն ու դրամատէրներուն սննտահան թշնամին:

Ընկուզեմիլիմ մէջ ապակի կովն ունկնդրէ,  
Փոխազարձէ՛ սիրոյ այնպէս՝ ինչպէս քարացած ազր խնձր ծովում  
Եւ ամէն օրուան կապոյտին ետին  
Կը կծկուին տապակները հողին

Բայց դո՛ւն միայն, օ՛, կը զգաս ցանուած դաշտերում  
Ու հասկերում օսկի տրոփը անհուն...

Արդարեւ, «Ընդհանրական երգը» ամերիկեան երկրամասի մարդկային պատմութեան վէպն է, որ Ներուտա խոր, տխուր, դժուար եւ ջգատալիկ պատկերներու վրանահարումներով՝ զայն կը վերածէ ամերիկեան Համայնադիտարան-քերթողագրքի: Հոն են բոլորը, սպանացի զաղութատէրը, Հնդկիներն ու գաղթականները, զրկանքներու ենթակայ Հնդիկը, գիւղացին եւ դեռ ազատութեան պայքարները: Նահատակներու երազը, սուտը, կտակը...

Աշխարհագրական բաղձերանդ Հարստութեամբ թարմացած դիրքն է անիկա: Ջրվէժներուն կը յաջորդեն կոյս անտառներ, անտառներու տխուր եւ խորհրդաւոր ստուերներուն կը պատասխանեն ժպտացող ծաղիկները, երկրաշարժերէն ետք՝ կը ծիածանի ջրարուխներու շքարչը, մինչ ուրուականները կ'այցելեն, ալիքները կը լաչեն եւ սոխակները կը դայլալին մերթ տըխուր, մերթ քնքուշ ու մերթ պարնան քնարային սիրերգութիւններ...

Ներուտայի սիրտն է «Ընդհանրական երգ»ի իւրաքանչիւր երգը:

Հատին Ամերիկայի հիւժոյց եւ տնտեսապէս ու հոգեպէս բազմիցս լահագրածուած ժողովուրդի իրա՛ւ զակին հարազատ սիրտն է, արժանապատուութիւնը, վիրաւորանքներուն անդրադարձը, պատմական տխուր յիշատակներու, զրոյցներու յուշամտտեանը, որ պատմութեան պէրք չէ, արցունք բնա՛ւ չէ, ընդհակառակն, առնական սրտի մը ուժեղ տրոփն է, կայտառ՝ բանուորներուն շափ, հպարտ՝ Հատին Ամերիկայի կոյս անտառներուն երկնաւայր ծառերուն պէս, ու համեստ՝ ու պարզ՝ իր սիրոյն արժանացած ձկնորսներէն, Հնդիկներէն ա՛լ աւելի:

(Մնացեալը յաջորդով)



ՓԱՊԼՕ ՆԵՐՈՒՏԱ

**ԲԱՐՉՈՒՆՔՆԵՐ ՄԱՔՉՈՒ - ԲԻՔՉՈՒԻ**

Լայնատարած շփեղուքեան եւ ֆարեղէն այս գիշերուամ ընդմէջէն  
Թող որ ձեռքս երկարեմ,  
Թող բարախէ իմ մէջս հագար տարիներով արգելափակ  
Թռչունի պէս՝  
Մոռուածի սիրտը հին...:

Թողէ՛ք մռռեամ երամուքիւնն այսօր  
Լայնածաւալ աւելի քան ծովն այս,  
Զի մարդս աւելի անհուն է, քան  
Մովն իր ամբողջ կողմներով,  
Եւ որ իր մէջ պէտք է սուգով՝ հորի մը պէս՝  
Քարճրանայու համար անդունդէն  
Զուրի գաղտնի երկգով մը  
Եւ ընկուզուած նշարտուքեամբ:

. . . . .

Ու բարճրացի՛ր, եկուր ինձ եկտ ծնիլ, հղբա՛յր,  
Տո՛ւր ձեռքդ ինձ, խորունկ ցաւիդ ասեմաններէն,  
Զի պիտ' երբեք չդառնաս դուն այդ ժայռերուն ընդերքներէն,  
Պիտի երբեք չդառնաս ընդատակեայ ժամանակին,  
Քարացած ժայռդ պիտի ա՛լ չըհասնի վերըստին,  
Փորուած աչքերդ պիտի կրկին չբացուին,  
Նայէ՛ ինձի երկրին խորէն,  
Ո՛վ մշակ, թէ ոտայնանկ կամ հովի լըռակեաց,  
Քաղանագուսպ, կառուցանող  
Ու բաժնեկից Անտեաններու արջունքներուն,  
Հմլուած մտանքով սկեբիլի,  
Սերմնացանքի վրայ դազացող շինական,  
Եւ հողին հետ նոյնացած՝ ո՛վ բրուտ,  
Այս նար կեանքի բաժակին  
Ընծայեցէ՛ք ձեր հին ցաւերն անբեղուած,  
Յոյց տաէ՛ք ինձ ձեր արիւնն ու վերքերը խոր,  
Ըսէ՛ք ինձի, այստեղ է, որ խաշտանգուեցայ,  
Որովհետեւ զոհարը չունէր փայլ,  
Ըսէ՛ք ինձի, թէ երկիրն է, որ պարզեւեց ժամանակին  
Քարն ու հունտը,  
Տուէ՛ք անուրջ ժայռին, ուր ինկաք  
Եւ անտաններն ուրտեղ ձեզ խաչեցին,  
Բացատրեցէ՛ք կայծքարերն հին,  
Հին լամբերը, մտրակները, որ շաչեցան  
Վերքերու վրայ,  
Եւ կացինները արւունացայտ...

Կալ գամ խօսիլ ձեր մահացած բերաններով,  
 Հնդիմ մէջ ցրուած լուռ շրթներու միացուցե՛ք ամբողջութիւնն  
 Ու խօսեցե՛ք անդունդէն ինձ  
 Գիշերներու մասին երկար  
 Ուր միացած էր ձեզ հետ՝ կայանաւոր,  
 Ըսէ՛ք ինձի ամէն ինչ, շոթայ առ շոթայ,  
 Օղակ առ օղակ ու քայլ առ քայլ:  
 Սրեցե՛ք ձեր դաշոյնները, գորս պահած է՛ք  
 Եւ մխեցե՛ք գայն կուրծքիս մէջ ու ասիս,  
 Տղամայրսան գետի նման,  
 Թաղուած վագրերու գետի մը պէս  
 Եւ քոյլ տուէ՛ք ինձ արտասուել ժամեր, օրեր, տարիներ,  
 Մինչեւ դարեր խաւարային ու շրջաններ ասողայեա:

Տուէ՛ք ինձի լուսփունք, ջուրն ու լոյսը:  
 Տուէ՛ք ինձի պայծարն ու դեռ երաբուխներն ու երկաթը:  
 Հանգրիմեցե՛ք մարմինները մագնիսի պէս:  
 Շտապեցե՛ք գէպի երակներս ու իմ թերուստ,  
 Բարբառեցե՛ք իմ խօսեքնովս, արիւն՝վս իմ:

Թարգմ. Ս. Թ.

**Թ Ա Գ Ո Ի Հ Ի Ն**

Քեզ կոչեցի թագուհի:  
 Կայ ճեզմէ մեծ, ճեզմէ շատ մեծ  
 Եւ տակաւին ճեզմէ անբիծ, շատ անկի անբիծներ կան  
 Քեզմէ սիրուն, շատ առանկ գեղեցիկներ եւ սիրուններ...

Սակայն, դո՛ւմ ես թագուհին:  
 Երբ խնկալով փողոցներէն դուռ կ'անցնիս  
 Ոչ մէկ էակ կը ճանչնայ ճեզ:  
 Թագոյ ապակի չի նշմարեր ոչ մէկ անձ:  
 Եւ գորգը բոքր սկիւիւն,  
 Որուն վրայ դուռ կը կոխես երբ կը մտնես՝  
 Ոչ ոք, ոչ ոք կը նշմարէ...  
 Գորգն այդ անգոյ:

Եւ երբ որ դուռ կը համբուրուիս,  
 Բիւր գետերը բովանդակ,  
 Մարմինս իբրեւ երկիր եւ դեռ զ՛, հայրենիք կը դաւանին  
 Կը հաստատուին մարմնիս մէջ,  
 Իսկ գանգակները կը շարժեն հատիկները երկնքի...  
 Եւ մեղեդին ու երգերը կը լեցնեն մտքն աշխարհի:  
 Առանձին, դուռ եւ ես,  
 Առանձին, միայն մենք, դուռ եւ ես, ո՛վ գէր իմ,  
 Կ'ունկեղյոթե՛ք լոյս երգին աշխարհի:

Հայրացոյց՝ Ս. Կ.



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Իրանը եւ հայաստանը (ուսումնասիրություն), Թեհրան, 1971

ՎԱՀԷ ՀԱՅԿ, Լուսաւոր դէմքեր մեր օրերում վրայ (տպարարություններ, աւսումնասիրություններ եւ հանդիպումներ) Պեյրուք, 1972

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزاجيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

Գ.ՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԾՍՅՈՒ

4. ԱՐԻՋ ԽՍԲԱԳԻՐ

5. ԱՄՍՈՒՆԻ

ԽՍԲԱԳԻՐ

9. ՄՆԱԳԵԱՆ

ԽՍԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

8. ԳԵՂԱՐԳ

3. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓՅՓԱԶԵԱՆ

7. ՊԱՐԹՆԻԵԱՆ

2. ԱԹՓԱՐԵԱՆ

ՀՐԱՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ

† ԵՒ ՊՅՓԱԶԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,  
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296808

ՏԳ. ՀԱՄԱԳՎԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ	25 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	10 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2-50 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ --  
G. SASSOUNI  
Rue Sélim Boustani,  
Beyrouth - Liban